

МИНИСТЕРСТВО ДИАСПОРЫ РА
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ДАВИД САФАРЯН,
ВАРДАН ВОСКАНЯН,

ГУРГЕН МЕЛИКЯН,
АЛЕКСАНДР САФАРЯН

**ПРОБЛЕМА НАГОРНОГО КАРАБАХА В
ОБЩЕСТВЕННО-ПОЛИТИЧЕСКОМ
ДИСКУРСЕ ТУРЦИИ**
(На армянском языке)

Под редакцией
Академика НАН РА, профессора
РУБЕНА САФРАСТЯНА

Издательство ЕГУ
Ереван - 2017

ՀՀ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԴԱՎԻԹ ՍԱՖԱՐՅԱՆ, ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆ,
ՎԱՐԴԱՆ ՈՍԿԱՆՅԱՆ, ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍԱՖԱՐՅԱՆ

**ԼԵՈՆԱՅԻՆ ԴԱՐԱՔԱԴԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ
ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԴԻՍԿՈՒՐՍՈՒՄ**

Խմբագրությամբ՝
ՀՀ ԳԱԱ ալկադեմիկոս, պրոֆեսոր
ՌՈՒԲԵՆ ՍԱՖՐԱՍՏՅԱՆԻ

ԵՊՀ հրատարակչություն
Երևան-2017

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՀՀ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԴՐԱՄԱՇՆՈՐՀՈՎ

ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ Է ԵՐԱՇՆԱԿՈՐԿԵԼ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ

Գրախոսներ՝

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պ.գ.դ., պրոֆեսոր

ԱԼԲԵՐՏ ԽԱՌԱՏՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՌՈՒԲԵՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՀԱՅԿ ՔՈՉԱՐՅԱՆ

ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի դասախոսների կոլեկտիվ մե-
նագրությունն ամփոփում է Թուրքիայի հասարակական-քաղաքական
դիսկուրսում Արցախի հակամարտության, հայ-թուրքական հարաբերույթ-
յունների թնջուկում նրա ներառման հիմնահարցերը, թուրքական և ադրբե-
ջանական ՁԼՄ-ներում «հայկական թեմատիկայի» համալիրի արտացոլ-
ման բազմամյա մշտազննման ու վերլուծության արդյունքները, համահե-
ղինակների՝ տարբեր տարիների գիտական ու գիտահանրամատչելի
հրապարակումների նյութերը, եզրակացությունները, գիտագործնական
առաջարկները:

Աշխատությունը նախատեսված է արևելագետների, քաղաքագետնե-
րի, պատմաբանների, միջազգայնագետների, լրագրողների և հայ-թուրքա-
կան հարաբերությունների կարգավորման խնդիրներով հետաքրքրվող
ընթերցողների առավել լայն շրջանակի համար:

ISBN 978-5-8084-2174-5

© ՀՀ սփյուռքի նախարարություն, . 2017

© Երևանի պետական համալսարան, 2017

© Դ. ՍԱՖԱՐՅԱՆ

© Գ. ՄԵԼԻՔՅԱՆ

© Վ. ՈՍԿԱՆՅԱՆ

© Ա. ՍԱՖԱՐՅԱՆ

ԱՌԱՋԱԲԱՆ

Անկախացումից ի վեր Հայաստանը հանդես է գալիս Թուրքիայի հետ առանց նախապայմանների դիվանագիտական հարաբերություններ հաստատելու օգտին, ինչը միանգամայն համահունչ է միջազգային իրավունքի սկզբունքներին: Թուրքիան առաջին երկրներից էր, որը ճանաչեց նախկին խորհրդային հանրապետությունների, այդ թվում՝ Հայաստանի անկախությունը (1991 թ. դեկտեմբերի 16-ին), սակայն ՀՀ և Թուրքիայի միջև դիվանագիտական հարաբերություններ այդպես էլ չհաստատվեցին: Գիտակցելով, որ նորանկախ Հայաստանը կարող է իրականացնել սեփական ազգային շահերով առաջնորդվող քաղաքականություն և ի սկզբանե որդեգրելով նախահարձակ դիրքորոշում՝ թուրքական քաղաքական ընտրանին դիվանագիտական հարաբերությունների հաստատման համար առաջադրել է երկու նախապայման, ըստ որոնց պաշտոնական Երևանը պետք է ձանաչի Թուրքիայի ժամանակակից սահմանները և հրաժարվի Հայոց ցեղասպանության վերաբերյալ պնդումներից: Այնուհետև, չսահմանափակվելով վերոհիշյալ երկու նախապայմաններով, Թուրքիան 1993 թ. ապրիլի 3-ին Արցախում հայկական ուժերի կողմից Քարվաճառի (Քելբաջար) ազատագրումից հետո առաջ քաշեց նաև ազատագրված տարածքներն Ադրբեջանին հանձնելու նախապայմանը: Այսպիսով, Թուրքիան, ի նշան Ադրբեջանի հետ համերաշխության և որդեգրելով բացահայտ ճնշման կամ հարկադրման քաղաքականություն, Արցախյան հիմնախնդիրը ևս ներառեց հայ-թուրքական հարաբերությունների՝ առանց այդ էլ բարդ թնջուկի մեջ:

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման խնդիրը հայաստանյան արտաքին քաղաքականության

գերակա խնդիրների շարքը դասվելուն (1998 թ.-ից) հետևեց պաշտոնական Անկարայի` Հայոց ցեղասպանության ժխտման քաղաքականության իրականացման «նոդուսի» ճշգրտումը, նոր մեթոդների և հնարքների կիրառման փնտրտուքը:

2002 թ. Թուրքիայում «Արդարություն և զարգացում» կուսակցության (այսուհետ` ԱԶԿ) իշխանության գալուց հետո որոշակի ակտիվացում է նկատվել ՀՀ-ի նկատմամբ քաղաքականության մեջ: Դեռևս նախընտրական պայքարի գործընթացում ԱԶԿ որոշ երևելի գործիչներ (մասնավորապես` Աբդուլլահ Գյուլը և Ալի Բաբաջանը), հայտարարություններ էին անում այն մասին, որ հետայսու Թուրքիայի համար հատուկ կարևորվելու են տնտեսական խնդիրները տարածաշրջանի երկրների (այդ թվում` Հայաստանի) հետ հարաբերություններում: 2003 թ. մարտին Մադրիդում ՆԱՏՕ-ի Համագործակցության խորհրդի նախարարական նիստին Թուրքիայի արտգործնախարարի պաշտոնը զբաղեցնող Ա. Գյուլը, սեփական նախաձեռնությամբ հանդիպելով ՀՀ պաշտոնակից Վարդան Օսկանյանին, նշել է, որ հայթուրքական հարաբերությունները պետք է կապել Ադրբեջանի հետ, և որ երկկողմ խնդիրների համատեղ լուծումը կարող է նպաստել արցախյան խնդրի կարգավորմանը: Նույն տարվա ընթացքում կողմերի` նախարարական մակարդակով հանդիպումները, կարծես թե, արձանագրում են որոշակի առաջընթաց, սակայն 2004 թ. ապրիլին Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի` Թուրքիա կատարած այցից հետո իրադրությունն ակնհայտորեն փոխվում է: 2004 թ. հունիսին Ստամբուլում կայացած ՆԱՏՕ-ի գագաթնաժողովի ժամանակ Ա. Գյուլը հայտնում է իր հայ պաշտոնակցին, որ Թուրքիան քայլեր չի ձեռնարկի` մինչև դարաբաղյան հար-

ցում չլինի շոշափելի առաջընթաց: Թուրքիան դրանով փաստորեն հետքայլ կատարեց հարաբերությունների բարելավման նախնական դիրքորոշումից՝ որպես հիմնական պատրվակ առաջ քաշելով հենց Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը:

ԱԶԿ իշխանության առաջին մի քանի տարիներին Թուրքիայի քաղաքականության «հայաստանյան ուղղությունն» առանձակի փոփոխություններ չի կրել, սակայն 2008 թվականը հիշվում է իբրև տարածաշրջանային զարգացումների կտրուկ փոխակերպումների համատեքստում ընթացող հայ-թուրքական հարաբերությունների նոր փուլի սկզբնավորման տարի. 2008-2010 թթ. Թուրքիա-Հայաստան հարաբերությունների կարգավորման փորձը, որը հաճախ հիշատակվում է «ֆուտբոլային դիվանագիտություն» անվանումով, որոշ թուրք վերլուծաբաններ անգամ գնահատել են որպես «ԱԶԿ պատմական նշանակություն ունեցող նախագիծ»:

Տարածաշրջանային քաղաքական և ռազմական առաջատարի հավակնություններ ունեցող Թուրքիայի հարավկովկասյան քաղաքականության լրակազմում ընդգրկված «հայկական նախաձեռնությունը» նաև յուրօրինակ «փորձաքար» էր հանդիսանալու ԱԶԿ հռչակած «զրո խնդիր հարևանների հետ» արտաքին քաղաքական սկզբունքի կենսագործման համար. ՀՀ անկախացումից ի վեր առաջին անգամ պաշտոնական Անկարան քայլեր կատարեց Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման ուղղությամբ, Թուրքիայի նախագահը պատմության մեջ առաջին անգամ այցելեց Հայաստան, ապա և ստորագրվեցին դիվանագիտական հարաբերություններ հաստատելու և քաղաքական հարաբերություններ զարգացնելու մասին արձանագրությունները, այսուհանդերձ (անշուշտ նաև ադրբեջանական ան-

թաքույց ճնշման հետևանքով) պաշտոնական Անկարան շեշտադրում է հայ-թուրքական սահմանը միակողմանիորեն փակելու պատճառ հանդիսացած Արցախյան հիմնախնդրի կարգավորման գործընթացում շոշափելի որևէ առաջընթացի նախապայմանը: Թեև թուրքական դիրքորոշման պատճառով 2010 թ.-ից հետո՝ փակուղում հայտնվելուն հաջորդող շրջանում էլ, Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացում էական տեղաշարժ առկա չէ, այնուամենայնիվ հայ-թուրքական հարաբերությունները ժամանակ առ ժամանակ հայտնվում են թուրքական քաղաքական «տեսադաշտում», իսկ Արցախյան հիմնահարցը մշտապես արժարժվում է հասարակական-քաղաքական քննույթում, արտացոլվում թուրքական ՋԼՄ-ներում՝ առավելապես թուրք-ադրբեջանական ռազմաքաղաքական դաշինքի հրամայականներով:

*

*

*

Մեր սույն աշխատության համար իբրև սկզբնաղբյուրներ օգտագործվել են Հայաստանի Հանրապետության նախագահների¹ և ՀՀ արտաքին գործերի նախա-

¹ Մասնավորապես, տե՛ս Նախագահ **Սերժ Սարգսյանի** խոսքը Բրիտանիայի միջազգային հարաբերությունների թագավորական ինստիտուտում, 10.02.2010, www.president.am, Նախագահ **Ս. Սարգսյանի** աշխատանքային այցը Ամերիկայի Միացյալ Նահանգներ, 12.04.2010, www.president.am, ՀՀ Նախագահ **Ս. Սարգսյանի** խոսքը Վաշինգտոնի մայր տաճարում Կուդրո Վիլսոնի գերեզման այցելությունից հետո, 12.04.2010, www.president.am, Նախագահ **Ս. Սարգսյանի** աշխատանքային այցը Մոսկվա 20.04.2010, www.president.am, Նախագահ **Ս. Սարգսյանի** հեռուստաուղերձը

րարների² հայտարարությունները, հարցազրույցները, ՀՀ նախագահի և ՀՀ Արտաքին գործերի նախարարության պաշտոնական կայքերի տեղեկատվությունը: Օգտագործվել են Թուրքիայի Հանրապետության նախագահների, վարչապետների, արտաքին գործերի նախարարների, դեսպանների և այլ քաղաքական գործիչների ու դիվանագետների արտահայտած պաշտոնական դիրքորոշումներն ու տեսակետները: Մասնավորապես, Հայաստանի նկատմամբ Թուրքիայի վարած քաղաքականության միտումները և հիմնավորումները ներկայացնելու առումով կարևոր են երկրի պետական բարձրաստիճան պաշտոնյաների՝ Աբդուլլահ Գյուլի, Ռեջեփ Թայիփ Էրդողանի, արտգործնախարարների, պետական բարձրաստիճան պաշտոնյաների, դիվանագետների և զինվորականների, 2002 թ. երկրի քաղաքական դեկլ ստանձնած ԱԶԿ ղեկավար գործիչների մոտեցումների մասին վկայող հայտարարությունները և հրապարակային ասույթները³: Թուրքիայի նոր արտաքին

Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացի վերաբերյալ, 22.04.2010, www.president.am:

² ՀՀ ԱԳՆ 2008, 2009, 2010 և 2011թթ. հաշվետվությունները, <http://mfa.am/hy/annualreport/>

http://mfa.am/u_files/20091013_protocol.pdf, ՀՀ ԱԳՆ, Մերձավոր և Միջին Արևելքի վարչություն, Թուրքիայի բաժին, Հայաստան-Թուրքիա, ժամանակագրություն, Հայաստան-Թուրքիա. բաց երկխոսություն, Հասարակական երկխոսության և զարգացումների կենտրոն, Երևան, 2005:

³ Մասնավորապես, տե՛ս Interview transcript: **Abdullah Gül**, "Financial Times", 08.04.2009, <http://www.ft.com/intl/cms/s/0/47991556-2446--11de-9a01-00144feabdc0.html>, **Давутоглу А.**, "Если вопрос Карабаха будет решен, армяно-турецкие отношения будут урегулированы",

քաղաքականության գաղափարախոսական-հենքային մոտեցումները հասկանալու համար օգտագործվել են Ահմեթ Ղավութօղլուի այդ հարցին նվիրված տեսական աշխատությունները⁴ : Այդ նյութերի օգտագործումը հնարավորություն է տվել վերլուծելու և իմաստավորելու երկու երկրների ղեկավարների և քաղաքական վերնախավերի ակնառու ներկայացուցիչների մոտեցումները տարածաշրջանում քաղաքական գործընթացների զարգացման հարցում, հասկանալու երկկողմ հարաբերությունների կարգավորման հնարավորությունների նրանց տեսլականը: Այդ նպատակով են օգտագործվել նաև թուրքական և հայկական մամուլում տպագրված հարցազրույցները նրանց հետ:

Առանցքային նշանակություն ունեն թուրքական ԶԼՄ տարաբնույթ հրապարակումները. «Հայաստանին», «Հայկական հարցին», Արցախի հակամարտությանը, հայ-ադրբեջանական հարաբերությունների համալիրին անդրադարձել ու պարբերաբար անդրադառնում են թուրքական գրեթե բոլոր խոշոր և ազդեցիկ («Միլլիյեթ», «Հյուրիյեթ», «Սաբահ», «Զաման», «Թարաֆ», «Սի-էն-էն-Թուրք» թուրքալեզու և «Թուրքիշ Ղեյլի Նյուզ» անգլալեզու և այլ) լրատվամիջոցները: Թուրքա-

07.07.2010, <http://az.salamnews.org/ru/news/read/11008/axmed-davutoglu-esli-vopros-karabaxa-budet-reshen-armyano-tureckie-otnosheniya-budut-uregulirovani>, **Давутоғлу А.**, существующие проблемы помешали урегулированию армяно-турецких отношений, 01.25.2011, <http://ru.1in.am/2429.html>

⁴ **Davutoğlu A.**, Turkey's Foreign Policy Vision: An Assessment of 2007, <http://arsiv.setav.org/ups/dosya/9595.pdf>, **Davutoğlu A.**, Stratejik Derinlik, Türkiye'nin Uluslararası Konumu, İstanbul, Kure Yayınları, Altmışdördüncü Basım, İstanbul, 2011.

կան հասարակական կարծիքի վրա զգալի ազդեցություն են գործել ճանաչված լրագրող, վերլուծաբան և հեռուստամեկնաբան Մեհմեդ Ալի Բիրանդի⁵ հրապարակումները: Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման փորձերի նկատմամբ թուրքական հասարակական-քաղաքական հետաքրքրության հիշարժան դրսևորումներ են հրատարակիչ և իրավապաշտպան Ռազըփ Ջարաթուլուի⁶, պատմաբան Թաներ Աքչանի⁷, իրավապաշտպան Էրեն Քեսքինի⁸, լրագրողներ Հասան Ջենալի⁹, Սելչուք Գյուլթաշլուի¹⁰, Ահմեթ Ալթանի¹¹, Ջենգիզ Չանդարի¹², Մանսուր Չելիքի¹³, Մեհմեթ Ալի Թուլթանի¹⁴, Մուսթաֆա Արմաղանի¹⁵, Նիմեթ Սեքերի¹⁶, Ամ-

⁵Մասնավորապես, տե՛ս **Birand M.A.**, Gül, maça gitmekle doğru adım attı, 05.09.08, <http://www.hurriyet.com.tr/yazarlar/9824710.asp>, **Birand M.A.**, Gül, bir tabu yıkıldı..., 09.09.08, <http://www.hurriyet.com.tr/yazarlar/9851895.asp>:

⁶**Ջարաթուլու Ռ.**, «Թուրքիային վախեցնում է ոչ թե Հայաստանը, այլ մեդիա զգացումը», 24.04.01, <http://www.azg.am/wap/?nl=AM&id=2001042417&Base PUB=0>

⁷**Akçam T.**, Türk Ulusal Kimliği ve Ermeni Sorunu, İstanbul, 1992.

⁸**Keskin E.**: “We Are All Guilty!”, <http://www.armenianweekly.com/author/eren-keskin/html>

⁹**Cemal H.**, Erdoğan, acıları mıkayese etmek yerine önce yüreğinde hissetse..., “Milliyet”, 23.03.10.

¹⁰**Gültaşlı S.**, Ermeni meselesinde Türk basınının büyük günahı, 16.04.07, http://www.zaman.com.tr/selcuk-gultasli/brüksel-ermeni-meselesinde-turk-basininin-buyuk-gunahi_528123.html

¹¹**Altan A.**, Deliler ülkesi, 29.03.10, <http://arsiv.taraf.com.tr/yazilar/ahmet-altan/deliler-ulkesi/4093/>

¹²**Çandar C.**, Hrant Dink'in öldürülmesinin sırrı... radikal.com.tr, **Çandar C.**, İsveç'e çocukça tepki; böyle dış politikası olmaz, <http://www.radikal.com.tr/yazarlar/cengiz-candar/isvece-cocukca-tepki-boyle-dis-politika-olmaz-1-985361>,

¹³**Çelik M.**, Baykal'dan Gül'e Erivan tepkisi, “Milliyet”, 05.09.08.

¹⁴**Tuğtan M.A.**, Soykırım İddiaları ve Uluslararası İlişkilerde Realizm, 14.03.2010, hakimiyetimilliyeye.org

բերին Ջամանի¹⁷ հրապարակումները (քանի որ թուրքական կողմը Արցախյան հիմնախնդիրը դիտարկում է որպես հայ-թուրքական հարաբերությունների համալիրի բաղադրիչ, ապա ակնհայտ է թուրքական հասարակական-քաղաքական դիսկուրսի առավել ամբողջական ներկայացման համար մի շարք հարակից հարցերին անդրադառնալու անհրաժեշտությունը):

Մեր ուսումնասիրության համար բացառիկ կարևոր են թուրքական առաջատար հետազոտական հաստատությունները ներկայացնող վեբլուծաբանների (Սեդաթ Լաչինների¹⁸, Դիբա Գյոքսելի¹⁹, Այբարս Գորգու-

¹⁵ **Armağan M.**, Amerika, Ermenileri 120 yıl önce de destekliyordu, http://www.zaman.com.tr/mustafa-armagan/amerika-ermenileri-120-yil-once-de-destekliyordu_961256.html

¹⁶ **Seker N.**, “A Shift in Turkish Foreign Policy: Turkey’s Strategic Depth”, Qantara, 07.08.09, <http://en.qantara.de/content/a-shift-in-turkish-foreign-policy-turkeys-strategic-depth>

¹⁷ **Zaman A.**, Azerbaijan Looks to Ankara.-The Middle East, N213, 11.07.92.

¹⁸ **Laçiner S.**, Turkey’s EU membership and the Armenian Question, “Turkish Weekly”, 11.12.04; **Laçiner S.**, Ermenistan Sınır Kapısını Açmanın Maliyeti, <http://realgenocide.blogcu.com/ermenistan-sinir-kapisini-acmanin-maliyeti/2155151>; **Laçiner S.**, Ermeni tasarısı hiç bu kadar işe yaramamıştı, 14.03.2010, stargazete.com; **Laçiner S.**, Ermeni Sorunu, Diaspora ve Türk Dış Politikası, Usak Yayınları / Uluslararası İlişkiler Dizisi, http://webb.deu.edu.tr/atmer/atmer/uploaded_files/file/21-Kitabiyat_Mithat_Vural_361-368.pdf, **Laçiner S.**, Ermenistan, Türkiye’nin Sınırlarını Tanıyabilir, http://www.usak.org.tr/analiz_det.php?id=1&cat=365365889#.VSlYffl_vRs; **Laçiner S.**, Ermenistan-Türkiye İlişkilerinde Sınır Kapısı Sorunu ve Ekonomik Boyut, <http://www.eraren.org/index.php?Page=Dergilerik&IcerikNo=154>

¹⁹ **Гоксел Д.**, Кавказская политика Турции, Кавказское соседство: Турция и Южный Кавказ, Ереван, Институт Кавказа, 2008.

լուի²⁰, Յըլդըզ Դևեջի Բոզքուլշի²¹, Օմեր Էնգին Լյուրեմի²², Բուրջու Գյուլթեքինի²³, Էրոլ Օզքորայի²⁴, Սերդար Քայայի²⁵, Մուսթաֆա Այդընի²⁶, Միթհատ Չելիքփալալի²⁷) տարաբնույթ աշխատանքները:

ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության և իրանագիտության ամբիոններում, այնուհետև նաև Հայագիտական հետազոտությունների ինստիտուտում ավելի քան երկու տասնամյակ իրականացվում է թուրքական և ադրբեջանական ՁԼՄ-ների

²⁰ **Горгулу А.**, Армяно-турецкие отношения: Вечный тупик?, Кавказское соседство: Турция и Южный Кавказ, Ереван, Институт Кавказа, 2008, **Горгулу А.**, Турция и Южный Кавказ, Ежегодник института Кавказа, Ереван, 2012.

²¹ **Bozkuş Y.D.**, Türkiye-Ermenistan maçı iki ülke arasında yeni bir bailangic olabilir mi?, 27. 06.2008, <http://www.eraren.org/index.php?Lisan=tr&Page=Makaleler&MakaleNo=3147>

²² **Lütem Ö. E.**, 2002 yılının bilançosu, <http://www.eraren.org/index.php?Page=Dergiler&IcerikNo=80>, **Lütem Ö. E.**, Ermenistan'ın yeni hükümeti, <http://www.eraren.org/index.php?Page=Dergiler&IcerikNo=56>,

Lütem Ö.E., Türkiye-Ermenistan ilişkileri, <http://www.eraren.org/index.php?Page=Dergiler&IcerikNo=22>

²³ **Գյուլթեքին Ք.**, Թուրքիայի և Հարավային Կովկասի միջև սահմանային համագործակցությունը: Տարածքային ինտեգրացիայի հեռանկարները, Հայաստան-Թուրքիա բաց խոսակցություն, Երևան, 2005:

²⁴ **Özkoray E.**, “Ermeni soykırımı niçin hâlâ tabu?”, <http://www.kuyレル.net/modules/AMS/index.php?storytopic=138&start=22>

²⁵ **Kaya S.**, “The Rise and Decline of the Turkish “Deep State”: The Ergenekon Case”, *Insigt Tukey*, vol. 11, N4, 2009.

²⁶ **Aydin M.**, *New Geopolitics of Central Asia and the Caucasus: Causes of Instability and Predicament*, Center for Strategic Research, Ankara, 2000.

²⁷ **Челикпала М.**, Турция и Южный Кавказ, Ежегодник института Кавказа, Ереван, 2011.

մշտադիտարկում²⁸, ի մի են բերվում Թուրքիայի հասարակական-քաղաքական և գիտական-վերլուծական դաշտում հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման և այդ գործընթացում Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի շուրջ առկա մոտեցումներն ու դիրքորոշումները, (ոչ միայն պետության ղեկավարների, քաղաքական գործիչների, դիվանագետների, այլև վերլուծաբան-հետազոտողների, լրագրողների, հրապարակախոսների և հասարակական շրջանակների ներկայացուցիչների հայտարարություններն ու տեսակետները), որոնք գնահատվում են իբրև առավել ուշագրավ, դիպուկ և գիտահետազոտական արժեք ունեցող: Մշտագնման արդյունքում դասդասվել են նաև Թուրքիա-Հայաստան հարաբերությունների կարգավորման կողմնակիցների, հակառակորդների և, այսպես ասած, չեզոքների հրապարակումները (հարկ է հավելել, որ

²⁸ Մշտադիտարկման արդյունքները պարբերաբար լույս են տեսել սույն կոլեկտիվ մենագրության համահեղինակների գի-տական ու գիտահանրամատչելի հրապարակումներում, օգտագործվել են Դավիթ Սաֆարյանի՝ 2015թ. պաշտպանած «Թուրք-հայկական միջպետական հարաբերությունների կարգավորման հիմնախնդիրները եվ դրանց արտացոլումը ներթուրքական դիսկուրսում (2001-2011 թթ.)» թեմակաժուռական ատենախոսության մեջ (գիտական ղեկավար՝ ակադեմիկոս Ռ. Սաֆրաստյան): 2016թ.-ից մշտադիտարկմանը մասնակցում են ԵՊՀ թյուրքագիտության ամբիոնի դասախոս Լիլիթ Մովսիսյանը, ասպիրանտ Շուշան Խաչատրյանը, թուրքագետ Աշոտ Մովսիսյանը: Մշտադիտարկման մասնակիցների հրապարակումներից մասնավորապես տե՛ս **Մովսիսյան Լ.**, Հայալեզու լրատվամիջոցներն Ադրբեջանում, «Հայագիտության հարցեր», Երևան, 2016, էջ 106-116: Թուրքական և ադրբեջանական համապատասխան հրապարակումների ստվար խմբից առանձնացվել և սույն մենագրության օգտագործված աղբյուրների և գրականության ծավալուն ցանկում մասնավորապես ներկայացվել են «խոսուն» վերնագրերով մի քանիսը, որոնք կարող են հետաքրքրել ոչ միայն մեր արևելագետներին և քաղաքագետներին, այլև լրագրողներին:

կողմնակիցների խումբն անհամեմատ ավելի փոքրաթիվ, բայց և հեղինակավոր էր, իսկ հակառակորդների հրապարակումները, բնականաբար, արտահայտում էին թուրքական ազգայնականների և ադրբեջանական ազդեցության տակ գտնվող հասարակական-քաղաքական շրջանակների իրական կամ արհեստածին տագնապներն ու անհանգստությունները, ինչի մասին հանգամանորեն կխոսենք ստորև):

Ժամանակակից հայ արևելագիտության մեջ 21-րդ դարի առաջին տասնամյակի հայ-թուրքական առնչությունները, հարաբերությունների կարգավորման ճանապարհին հառնող հիմնախնդիրները տևականորեն հանդիսացել են հետազոտության առարկա: Ակադեմիկոս Ռուբեն Սաֆրաստյանի, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Նիկոլայ Հովհաննիսյանի ծրագրային աշխատությունները, ինչպես նաև Հայկ Քոթանջյանի, Արսեն Ավագյանի, Անուշ Հովհաննիսյանի, Ռուբեն Մելքոնյանի, Արամ Անանյանի, Գրիգոր Արշակյանի, Լևոն Հովսեփյանի, Վահրամ Տեր-Մաթևոսյանի, Տիգրան Բալայանի, Թաթուլ Հակոբյանի մենագրություններն ու հոդվածները, Ալեքսանդր Իսկանդարյանի և Սերգեյ Մինասյանի վերլուծականներն օգնել են արժևորելու հայ-թուրքական հարաբերությունների վիճակի, կարգավորմանն ուղղված բանակցությունների բովանդակության, առկա հիմնախնդիրների և դրանց նկատմամբ թուրքական ու հայկական կողմերի սկզբունքային մոտեցումների հարցերը (վերոհիշյալ հեղինակների հրապարակումները ներկայացված են սույն մենագրության աղբյուրների և գրականության ցանկում): Հիշարժան է «Ազգ» թերթի էջերում թուրքագետ Հակոբ Չաքրյանի թարգմանչական և վերլուծական շնորհակալ աշխատանքը, որը տասնամյակներ շարունակ նպաստել է ժամանակակից թուրքական

հասարակական-քաղաքական կարծիքը հայաստանյան ընթերցողներին ներկայացնելուն:

Մենագրության մեջ օգտագործվել են նաև ռուսաստանյան առաջատար քաղաքագետ-վերլուծաբանների հետազոտությունները: Անդրեյ Արեշևը²⁹, Աննա Գլազովան³⁰, Աժդար Կուրտովը և Աբդուլլահ Խալմուխամեդովը³¹, Վիկտոր Միտյանը³² Ռուսաստանի ռազմաքաղաքական և աշխարհաքաղաքական շահերի տեսանկյունից ուսումնասիրել և գնահատել են հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանն ուղղված գործընթացի հիմնահարցերը:

Թուրքիայի արևելյան քաղաքականության սկզբունքային հարցերին են նվիրված անգլիացի արևելագետ, պրոֆեսոր Ուիլիամ Հեյլի³³, ամերիկյան հրեական լոբբիստ Ուիլիամ Քորեյի³⁴ և ամերիկյան պատմաբան, պրոֆեսոր Մայքլ Բիշքուի³⁵ աշխատությունները, որոնք

²⁹ **Арешев А.**, Внешний фактор на Кавказе и российско-армянское сотрудничество, Россия-Армения: Перспективы углубления стратегического партнерства, Российский институт стратегических исследований, Москва, 2010.

³⁰ **Глазова А. В.**, Современное состояние и перспективы армяно-турецкого урегулирования, Армяно-российское взаимодействие и региональные проблемы, Ереван, 2011.

³¹ **Куртов А., Халмухамедов А.**, Армения-Турция: Противостояние или Сотрудничество?, «Армения: Проблемы независимого развития», Москва, 1998.

³² **Митяев В.**, Карабахский конфликт в контексте международных отношений, ВКН Армения: Проблемы независимого развития, Москва, 1998.

³³ **Hale W.**, Turkey, the Black Sea and Transcaucasia, in "Transcaucasian Boundaries", New York, St. Martin's Press, 1996.

³⁴ **Korey W.**, "Raphael Lemkin: "The Unofficial Man", Midstream, June-July, 1989.

³⁵ **Bishku M.**, Turkey, Ethnicity, and Oil in the Caucasus.-Journal of Third World Studies, Vol.18, N2, Fall 2001,

նույնպես օգտագործվել են աշխատության մեջ: Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում այն տարիներին ԱՄՆ Պետդեպարտամենտի ավագ խորհրդատու, «Հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողովի» համակարգող Դևիդ Ֆիլիպսի աշխատությունը³⁶:

*

*

*

Համահեղինակները համակողմանի աջակցության համար երախատագիտություն են հայտնում սույն մենագրության գրախոսներին, ՀՀ Սկյուռքի նախարարության ղեկավարությանը, ԵՊՀ ռեկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆ. Արամ Սիմոնյանին, պ.գ.դ., պրոֆ. Արսեն Ավագյանին, «Արմենպրեսի» տնօրեն Արամ Անանյանին, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի Թուրքիայի բաժնի վարիչ Վահրամ Տեր-Մաթևոսյանին, ԵՊՀ անգլերենի թիվ 1 ամբիոնի վարիչ, պրոֆ. Մարգարիտա Ապրեսյանին, քաղաքական վերլուծաբան և հրապարակախոս Արամ Սաֆարյանին, ԵՊՀ թյուրքագիտության ամբիոնի ադրբեջաներենի դասախոս Մարիամ Մելքոնյանին:

http://findarticles.com/p/articles/mi_qa3821/is_200110/ai_n8988897/pg_8
³⁶ Ֆիլիպս Դ., Բարձրացնելով անցյալը. ժողովրդական դիվանագիտությունը և հայ-թուրքական հաշտեցումը, Երևան, 2005:

**ՉԼՈՒՄ 1. ԹՈՒՐՔԻԱՅԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻՋԵՎ
ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԵՎ ԱՐՑԱՆԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ
ՀՈՉԱԿՈՒՄԻՑ ՀԵՏՈ**

Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումից (1991 թ. սեպտեմբերի 21) և ԽՍՀՄ փլուզումից (1991 թ. դեկտեմբեր) հետո Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև հարաբերությունների կարգավորման, դիվանագիտական հարաբերություններ հաստատելու և 1993 թ. գարնանը փակված հայ-թուրքական սահմանի վերաբացման հիմնախնդիրներն անցած 20 տարիների ընթացքում հիմնավորապես ուսումնասիրվել և գնահատվել են ինչպես հայ, այնպես էլ օտարազգի պատմաբանների, քաղաքագետների և միջազգայնագետների կողմից³⁷: Այդ ուսումնասիրությունների նպատակը եղել է ինչպես գիտական (ուսումնասիրել առկա այն հիմնախնդիրների համալիրը, որոնք խանգարում են երկու հարևան պետություններին կարգավորելու միջպետական հարաբերությունները), այնպես էլ գործնական-կիրառական (հետապնդելով կուտակված հիմնախնդիր-

³⁷ Մասնավորապես տե՛ս **Սաֆրաստյան Ռ.**, Հնարավոր չէ 21-րդ դարում պատնեշներ ստեղծել հարևանների միջև..., Երևան, 2003: **Görgülü A., Iskandaryan A., Minasyan S.**, Türkiye-Ermenistan Diyalog Serisi:Yakınlaşma Sürecini İncelemek, TESEV Yayınları, İstanbul, 2010, Aras B., Özbay F., Türkiye ve Ermenistan: Statüko ve Normalleşme Arasında Kafkasya Siyaseti, SETA Analiz, 2 Ekim 2009, <http://arsiv.setav.org/Ups/dosya/22458.pdf>

ների բարդ կծիկը քանդելու գործնական երաշխավորությունների մշակման և այդ կարգավորմանը նպաստող քայլեր առաջարկելու նպատակ)³⁸: Թե՛ Առաջավոր Ասիայում, Մերձավոր և Միջին Արևելքում և Հարավային Կովկասում (ամերիկյան մեկնաբանությամբ՝ Մեծ Մերձավոր Արևելքում) ԽՍՀՄ փլուզման գործընթացում և դրանից հետո ծավալված բարդ քաղաքական անցուդարձի արդյունքում, թե՛ երկբևեռ աշխարհի փլուզումից հետո միաբևեռ դարձած աշխարհում լարվածության օջախների կարգավորման փորձերի լույսի ներքո հայթուրքական հարաբերությունների խնդիրների համալիրը հարուցել է մեծ հետաքրքրություն:

Սկսած 1991 թ. դեկտեմբերից, երբ Թուրքիան ճանաչեց ԽՍՀՄ փլուզման արդյունքում ձևավորված 11 պետությունների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության անկախությունը, օբյեկտիվորեն ձևավորվեց երկու հարևան պետությունների միջև միջպետական նորմալ հարաբերություններ հաստատելու խնդիրը: 1990-ական թթ. սկզբում թուրք հետազոտողներից մեկի դիպուկ գնահատմամբ. «Թուրքիայի հռետորաբանությունը Կովկասի (և Կենտրոնական Ասիայի) հանդեպ կրում էր հավակնոտ բնույթ: Թուրքիան պատրաստվում էր դառնալ տարածաշրջանային առաջատար տե-

³⁸ Տե՛ս **Սաֆրաստյան Ռ.**, Հայ-թուրքական սահմանի նշանակությունը, Հայաստան-Թուրքիա. բաց խոսակցություն, Երևան, 2005; նույնի Թուրքիայի և հայ-թուրքական հարաբերությունների շուրջ, http://noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT_ID=507; **Օսկանյան Վ.**, Անտեսված դատեր, <http://www.mediamax.am/am/column/12231/>, **Kalin I.**, From History to Realpolitik in Armenian-Turkish Relations, 11.09.2008, <http://www.todayszaman.com/columnist/ibrahim-kalin/from-history-to-realpolitik-in-armenian-turkish-relations-152739.html>, The Geopolitical Scene of the Caucasus: A Decade of Perspectives (edited by Diba Nigâr Göksel & Zaur Shiryev), Toplumsal Katılım ve Gelişim Vakfı, 2013.

րություն: Սակայն դարի վերջում պարզ դարձավ Ռուսաստանի գերակշռությունը տարածաշրջանում և Թուրքիայի անկարողությունը՝ գործնականում հաստատելու իր նկրտումները: Տարածաշրջանում գերիշխանության հաստատման ասպարեզում անհաջողությանը նպաստեցին թե՛ ներթուրքական քաղաքական «ճակատամարտերը», թե՛ մշտական փոխատեղությունները կառավարությունում, թե՛ տնտեսական հիմնախնդիրները»³⁹: Դիվանագիտական հարաբերություններ հաստատելով հետխորհրդային նորանկախ մյուս պետությունների հետ՝ Թուրքիան Հայաստանի հետ չհաստատեց դիվանագիտական հարաբերություններ: Հետագոտողները համակարծիք են այն հարցում, որ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու խնդրում Թուրքիան Հայաստանի առջև առնվազն երեք սկզբունքային նախապայման է դրել: Եվ դա՝ այն դեպքում, երբ ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի գլխավորած քաղաքական իշխանությունները հետևողականորեն առաջ էին տանում առկա բարդ խնդիրները չխորացնելու և առանց նախապայմանների երկկողմ հարաբերությունները կարգավորելուն ուղղված քաղաքականություն: Այսպես, 1990 թ. նոյեմբերին ՀՀԸ երկրորդ համագումարում Լ. Տեր-Պետրոսյանը հայտարարեց. «Վերջին տարիների քաղաքական մտքի մեջ տեղի ունեցած ամենամեծ հեղափոխությունը հրաժարումն է օտարներին ապավինելու, երրորդ պետության հովանավորության վրա հույս դնելու սնանկ գաղափարից... Փնտրենք և ստեղծենք մեր ազգի գոյության նոր, ավելի հուսալի երաշխիքներ: Ահա այս երաշխիքների

³⁹ Гоксел Д., Кавказская политика Турции, Кавказское соседство. Турция и Южный Кавказ, Ереван, 2008, с. 22.

ողակներից մեկն է միայն Հայաստանի և Թուրքիայի հարաբերությունների կարգավորումը»⁴⁰:

Թուրքիայում իշխում էր Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորումը միայն հետևյալ պայմաններով իրականացնելու մոտեցումը.

1. Հայաստանը պետք է ճանաչեր 1921 թ. Կարսի պայմանագրով ձևավորված հայ-թուրքական սահմանը,

2. Հայաստանը պետք է հրաժարվեր Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման միջազգային գործընթաց ծավալելուց և չձեռնարկեր կամ չմասնակցեր այնպիսի քաղաքական գործընթացների, որոնք, Թուրքիայի իշխանությունների կարծիքով, ստվեր են գցում նրա միջազգային հեղինակության վրա,

3. Հայաստանը պետք է միակողմանի զիջումների գնար Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հարցում՝ հայկական զինված ուժերը դուրս բերելով Ադրբեյջանի «գրավյալ տարածքներից»:

Հայաստանի անկախության նվաճման նախօրեին թուրքական հասարակական-քաղաքական կարծիքը լրջորեն մտահոգված էր ինչպես Թուրքիայի նկատմամբ հայերի տարածքային հնարավոր պահանջների հարցով, այնպես էլ Լեռնային Ղարաբաղի հակամարտության բորբոքմամբ և սրմամբ⁴¹: Միաժամանակ փաստ է, սակայն, որ ուշադրությամբ հետևելով նախկին ԽՍՀՄ-ում անկախական գործընթացներին՝ Թուրքիայում փորձում էին համարժեք գնահատել նոր իրողությունները: Այսպես, 1990 թ. թուրք հայտնի հրապա-

⁴⁰ «Հայաստանի Հանրապետություն», 28.11.1990, տե՛ս նաև **Անանյան Ա.**, Հայոց ցեղասպանությունը հայ-թուրքական երկխոսության հարցի համատեքստում, «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր», Երևան, 2004, էջ 5:

⁴¹ **Демоян Г.**, Турция и Карабахский конфликт в конце XX – начале XXI веков. Историко-сравнительный анализ, Ереван, 2006.

րակախոսս Իլիան Սելչուքը ազդեցիկ «Ջունհուրիյեթ» թերթի էջերում գրում էր. «Եղբայրական Ադրբեջանի անկախացումը սքանչելի մի նպատակ է: Սակայն այդպիսի նպատակադրումն ինքնին ենթադրում է անկախության ճանապարհին քաջալերել նաև Հայաստանին: Վերջինիս անկախացման պարագայում Թուրքիան անխուսափելիորեն հայտնվելու է «Հունաստան-Հայաստան» աքցանի մեջ: Մինչդեռ այդ երկու երկրները պահանջատիրական հավակնություններ ունեն Անատոլիայի նկատմամբ»⁴²: Մեկ այլ թուրքական թերթ՝ «Միլլիյեթը», 1990 թ. դեկտեմբերի 5-ին վկայում էր, որ, չնայած վերը նշվածին, Անկարան ջերմ մոտեցում էր ցուցաբերում Հայաստանի նկատմամբ⁴³:

1991 թ. մայիսին Երևան այցելած և Հայաստանի ԳԽ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի հետ հանդիպած՝ Մոսկվայում Թուրքիայի դեսպան Վուքրան Վուրալը քննարկել էր օրակարգ մտած երկու երկրների միջև սահմանային անցակետ բացելու խնդիրը ամենակարճ ժամանակահատվածում լուծելու հարցը⁴⁴: Ընդ որում, Լ. Տեր-Պետրոսյանը դեսպան Վուրալին ասել էր. «ԽՍՀՄ-ը փոփոխությունների է ենթարկվում: Ուզում ենք բարեկամանալ: Պատրաստ ենք ամեն տեսակի փոխշահավետ համագործակցության»⁴⁵: Միաժամանակ հենց այդ հանդիպման ժամանակ էլ գծագրվեցին երկկողմ հարաբերությունների կարգավորման ճանա-

⁴² **Չաքրյան Հ.**, Ղարաբաղյան հիմնահարցը հայ-թուրքական հարաբերությունների համատեքստում, Երևան, 1998, էջ 10-11:

⁴³ Տե՛ս «Milliyet», 05.12.1990.

⁴⁴ Թուրքիան միջնորդի դերում. Անկարան Մութալիբովի հետ կքննարկի Ղարաբաղի հարցը, <http://ankakhutyun.am/archives/108>

⁴⁵ Թուրքիան Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ կհաստատի..., 30.05.2002,

http://www.azg.am/wap/?nl=AM&id=2002053010&Base_PUB=0

պարհին կողմերի տարբեր մոտեցումները: Եթե հայկական կողմն առաջ էր մղում փոխշահավետ առևտրատնտեսական հարաբերություններ ծավալելու հարցը, ապա թուրքական կողմը շարադրեց վերոհիշյալ նախապայմանների շարանը:

ՀՀ առաջին նախագահի կառավարման ամբողջ շրջանում Հայաստանի իշխանությունները հետևողականորեն առաջ են մղել երկկողմ հարաբերությունները կարգավորելու հարցը՝ գործադրելով զգալի ջանքեր, վարելով բանակցություններ հրապարակային և գաղտնի ձևաչափերով: Ընդ որում, կարգավորմանն ուղղված ջանքերը գործադրվում էին թե՛ ՀՀ արտաքին գործերի նախարարության խողովակներով, թե՛ նախագահի գլխավոր խորհրդական, 1993-1994 թթ. միաժամանակ արտգործնախարարի առաջին տեղակալ Ժիրայր Լիպարիտյանի միջոցով: Թուրքական կողմը, սակայն, այդ նույն շրջանում գործնականում չկատարեց և ոչ մի քայլ Հայաստանի հետ պաշտոնական հարաբերություններ հաստատելու համար: Թուրքական հասարակական վերաբերմունքի մեջ, չնայած հայկական կողմի ջանքերին, գերիշխում էր այն կարծիքը, որ Հայաստանը տարածքային նկրտումներ ունի Թուրքիայի հանդեպ, որ Հայաստանը «զավթել» է ադրբեջանական տարածքների մի մասը և որ Հայաստանը Սփյուռքի հետ միասին առաջ է մղում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցը: Եվ դա՛ այն դեպքում, երբ բազմաթիվ առիթներով Հայաստանի իշխանությունները հավաստիացնում էին, որ Հայաստանը ճանաչում է բոլոր հարևանների տարածքային ամբողջականությունը, իսկ ԼՂ հակամարտության պարագայում հանդես է գալիս ԼՂՀ բնակչության ազգային ինքնորոշման իրավունքի պաշտպանության դիրքերից: Եթե այս հարցերում ինչ-որ անորոշություն էլ կար, ապա դա

ծնավորվում էր լուկ թուրքական և ադրբեջանական «անհանգստությունների» հետևանքով:

1993 թ. հոկտեմբերին Մոսկվայում թուրքական դեսպանատանը Հայաստանի նախագահի հետ կայացած հանդիպումից հետո դեսպան Ալիան Քամիլը հայտարարել էր, որ հայ-թուրքական հարաբերությունների բարելավման համար Հայաստանը պետք է հրաժարվի 1915 թ. իրադարձությունների խնդրին անդրադառնալուց⁴⁶: Այսպես, նախկին արտգործնախարար Ա. Արզումանյանը «Հայկական ժամանակ» օրաթերթին տված հարցազրույցում թվարկել է երկու երկրների միջև պաշտոնական հարաբերություններ հաստատելու թուրքական նախապայմանները. «չհիշատակել Հայոց ցեղասպանությունը, պաշտոնապես հրաժարվել պահանջատիրությունից, կասեցնել սիյունքահայության հակաթուրքական գործունեությունը»⁴⁷: Դա արձանագրել է նաև ՀՀ արտգործ նախարար Վ. Փափազյանը՝ Հայաստանի անկախ արտաքին քաղաքականության հնգամյակին նվիրված ամփոփիչ հոդվածում փաստելով ոլորտում իրական տեղաշարժերի բացակայությունը⁴⁸:

*

* *

Մոսկվայի և Կարսի պայմանագրերի ստորագրումից շուրջ 90 տարի անց էլ սահմանների ճանաչման հարցը շարունակում էր գերզգայուն լինել Թուրքիայի

⁴⁶ Куртов А. А., Халмухамедов А. М., Армения-Турция: Противостояние или Сотрудничество?, «Армения: Проблемы независимого развития», Москва, 1998, с. 453.

⁴⁷ «Հայկական ժամանակ», 18.07.2002:

⁴⁸ Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 15.09.1996:

քաղաքական համակարգի և ամբողջությամբ վերցրած՝ հասարակության համար: Թուրքիայի վարած արտաքին քաղաքականության վրա լրջորեն ազդող առանձնահատկություններից մեկն այն է, որ այդ երկրում ամենուրեք իրեն զգացնել է տալիս, այսպես կոչված, «խորքային պետության» գործոնը: Դրա տակ պետք է հասկանալ սոցիալական կապերի որոշակի ոչ ֆորմալ խմբի առկայություն զինվորական, տնտեսական, քաղաքական վերնախավերում, որը պատրաստ է իր վրա վերցնել պետության ճակատագրի նկատմամբ պատասխանատվությունը և որը իրեն ընկալում է իբրև դրա հիմնական պահապան: Դեռևս երիտթուրքերի իշխանության շրջանի գաղափարախոսության մեջ վառ արտահայտված ծայրահեղ ազգայնականության սկզբունքների վրա կառուցված այդ համախմբումները, որոշակի փոխակերպումներ անցնելով քեմալական վարչակազմի շրջանում, էապես պահպանվում են առ այսօր Թուրքիայի քաղաքական մշակույթի մեջ: Եվ դրա դրսևորումն է զինվորականության ներգրավման հնարավորությունը երկրի քաղաքական կյանքում, ինչպես նաև բռնության գործադրման արդարացումը քաղաքական ընդդիմախոսների և ազգային ու կրոնական փոքրամասնությունների նկատմամբ («հանուն Հայրենիքի պաշտպանության»)՝⁴⁹: «Խորքային պետության» կողմնակիցների հիմնական իդեա-ֆիքսն, ինչպես նշում են Ա. Իսկանդարյանը և Ս. Մինասյանը, Թուրքիայի ներսում և նրա սահմանների ողջ երկայնքով ժամանակա-

⁴⁹ **Kaya S.**, “The Rise and Decline of the Turkish “Deep State”: The Ergenekon Case”, *Insigt Tukey*, vol. 11, №4, 2009, p. 102; **Искандарян А., Минасян С.**, Прагматичность политики сквозь реалии исторических ограничений: анализируя армяно-турецкий процесс, Аналитические доклады Института Кавказа, Но.1, Ереван, 2010, с.26.

կից ստատուս-քվոյի պահպանությունն է⁵⁰: Գաղափարախոսական իմաստով «խորքային պետության» անդամների և կողմնակիցների մոտեցումներն օրգանապես միահյուսված են այսպես կոչված «Սևրի սինդրոմին», որը դրսևորվում է իբրև թուրքերի քաղաքական գիտակցության մեջ մշտական ֆոբիա հարևան պետությունների և համաշխարհային տերությունների կողմից թուրքիայի մասնատման և բաժանման հարցում: Փորձագետների կարծիքով՝ «արտաքին սպառնալիքը և տարածքային կորուստների վախը ներթուրքական քաղաքական դիսկուրսում առ այսօր խորհրդանշվում է 1920 թ. Սևրի պայմանագրով...»⁵¹: Եվ չնայած Օսմանյան կայսրության ստորագրած և քեմալական իշխանությունների կողմից չճանաչված այդ դաշնագիրն այդպես էլ կյանքի չկոչվեց, այնուամենայնիվ, այն դարձավ երկրի կողմից իր տարածքներն ու ինքնիշխանությունը կորցնելու սպառնալիքի «գիտակցության խորհրդանիշ», որով ներծծված է ժամանակակից թուրքիայի վերնախավերի քաղաքական մտածողությունը: Ճանաչված քաղաքագետ-վերլուծաբանները եզրակացնում են, որ Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորումը, սահմանների բացումը, թուրքերի և հայերի միջև հոգեկերտվածքային և ֆիզիկական ջրբաժանի անհետացումը (կամ նվազեցումը), թուրքիայի տարածքում նշանակալից թվով հայերի հայտնվելը, մնացած ամեն ինչից բացի, ուղղակի կհանգեցնի թուրքերի ավելի շատ տեղեկացվածությանը 1915 թ. դեպքերի մասին, ինչից վախենում են շատ քեմալականներ և «խորքային պետության կողմնակիցներ», լոկ կհանգեցնի քեմալականության առանց այդ էլ երերված գաղափարախոս-

⁵⁰ Նույն տեղում, էջ 27:

⁵¹ Նույն տեղում, էջ 28:

սության ևս մեկ աղյուսի քանդմանը⁵²: Այս տեսանկյունից ուշագրավ է, որ թուրքական հասարակական-քաղաքական մտածողության մեջ գոյություն ունեցող «Սևրի սինդրոմը» 1990-ական թթ. ոչ միայն չի թուլացել, այլև ԽՍՀՄ փլուզումից և «Սառը պատերազմի» ավարտից հետո աշխարհաքաղաքական տարբեր զարգացումների պայմաններում կրել է բովանդակային նոր ազդեցություններ: Թուրքագետ Լևոն Հովսեփյանը նշել է. «1990-ական թթ. Թուրքիան իրեն ընկալում էր որպես մի երկիր, որը շրջապատված է թշնամաբար տրամադրված երկրներով, որոնց նպատակն ամեն գնով Թուրքիայի տարածքային մասնատմանը հասնելն է: Թուրքական ռազմաքաղաքական իշխանությունների շրջանում արմատավորվեց այն ընկալումը, որ թե՛ Արևմուտքի երկրները, թե՛ Թուրքիայի անմիջական հարևանները քայլեր են ձեռնարկում այդ երկրի տարածքային մասնատման ուղղությամբ»⁵³: Թուրքիայի հատկապես ռազմական, ինչպես նաև որոշ քաղաքական շրջանակների կողմից հասարակությանը մշտապես հիշեցվող այդ վախերը նպատակ ունեին թշնամու հավաքական կերպարի ձևավորման միջոցով հասարակությանն ուղղորդել քաղաքական արդի գործընթացներում: Մասնավորապես. «Հայաստանի և հատկապես հայկական Սփյուռքի նկատմամբ Թուրքիայի քաղաքական շրջանակներում առկա է տագնապի երևույթը, ինչը հենց տեղավորվում է «Սևրի սինդրոմի» մեջ: Առկա խորացած տագնապն իր հերթին ծնում է ագրեսիվություն: Որպես տագնապի հետևանք Թուրքիայի վարքագիծը կարող է իռացիոնալ դառնալ որոշակի իրավիճակներում և ժա-

⁵² Տե՛ս նույն տեղում, էջ 28:

⁵³ Հովսեփյան Լ., Թուրքիայի վախերը, Սևրի սինդրոմ, Երևան, 2012, էջ 76:

մանակահատվածներում»⁵⁴ : Եվ չնայած վերոհիշյալ սինդրոմը գործնական քաղաքականության տեսանկյունից հաճախ կարող է դիտվել լոկ «դավադրությունների տեսության» տեսանկյունից, սակայն թերագնահատել այս իրողությունը թուրքական մտածողության մեջ ուղղակի ճիշտ չէ:

Թուրքական հասարակության և նրա «խորքային պետության» բարդ, բազմաշերտ, ներքին հակասություններով և լարումներով լի վերաբերմունքը Հայաստանի և հայերի նկատմամբ հասկանալու համար անհրաժեշտ է նկատի ունենալ հետևյալ հանգամանքները: Նախ, Թուրքիայում այդ խնդիրների ամբողջությունն ավանդաբար անվանվում է «Հայկական հարց»: 1923 թ. Լոզանի պայմանագրից հետո կարող էր թվալ, թե պատմական-ավանդական իմաստով Հայկական հարցը Թուրքիայի քենալական կառավարությանը հաջողվեց լուծել: Սակայն բազմաթիվ պատճառներով կարելի է պնդել, որ դրանից հետո էլ թուրքական հասարակության վերաբերմունքն այդ խնդիրների նկատմամբ շարունակել է մնալ գերզգայուն և լարված: Խնդիրների այդ համալիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

1. Հայոց ցեղասպանության խնդիրը: 1920-ական թթ. սկսած Թուրքիայում գործադրվել են հսկայական ջանքեր երիտթուրքերի իշխանության տարիներին հայերի զանգվածային բնաջնջման, տեղահանության, հայրենագրկման խնդիրներն ուրանալու, Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայերի բնաջնջումը, բռնի կրոնափոխությունը և նրանց ունեցվածքի անօրինական բռնագրավումն ուրացող, այդ ամենը «յուրովի» մեկնաբանող տեսություններ, որոնք ժամանակի ընթացքում դարձել են պաշտոնական: Հա-

⁵⁴ Նույն տեղում, էջ 77:

յոց ցեղասպանության փաստի ժխտումը բարձրացվել է պաշտոնական տեսակետի մակարդակի, դարձել գերիշխող թուրքական պատմագրության մեջ և իբրև պաշտոնական տեսակետ մտցվել դպրոցական և բուհական դասագրքեր: Ինչպես նշում է Ա. Անանյանը, «Թուրքական Հանրապետության սկզբնավորման օրվանից պետական քաղաքականության մակարդակի է բարձրացվել թուրքերի և Թուրքիայի պատմության ուսումնասիրությունը՝ թիրախ ընտրելով հիմնականում քաղաքական իսթաբլիշմենթի պահանջներին ծառայելը... Ժամանակակից Թուրքիան ստեղծել է Հայոց ցեղասպանության ժխտման օրենսդրական և ինստիտուցիոնալ կառույցներ՝ ակտիվ դիվանագիտական պայքար ծավալելով ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի դեմ: Հայոց ցեղասպանության ժխտմանն ուղղված հանրապետական Թուրքիայի ջանքերը միանշանակորեն կարող են որակվել որպես համակարգված քաղաքականություն. առկա է գաղափարախոսական հիմքը, օրենսդրական դաշտը, պաշտոնական մշտապես քարոզվող դրույթների և միտումնավոր նենգափոխված պատմության տեսքով (policy), կան պետության կողմից առաջադրված հստակ նպատակներ (politics), ինչպես նաև ժխտմանը միտված քաղաքական, դիվանագիտական և գիտական հաստատությունների ցանց, որն անմիջականորեն իրականացնում է պետականորեն ծրագրված քայլերը (polity)»⁵⁵:

Այսպիսով, Հայոց ցեղասպանության փաստի ժխտման, նենգափոխման, ուրացման քաղաքականությունը, այդ նպատակին Թուրքական պատմական ընկե-

⁵⁵ Անանյան Ա., Հայոց ցեղասպանության ժխտման նոր փորձ, Թուրքական պատմական ընկերակցության «Հայեր. աքսոր և գաղթ» աշխատության մասին, Երևան, 2005, էջ 5-6:

րությունը, բազմաթիվ այլ պետական հետազոտական և վերլուծական կառույցները ենթարկելը Թուրքիայում կրել են գործնական նպատակ՝ լուծել արտաքին քաղաքական, ներքին քաղաքական ու հասարակական խնդիրներ: Բազմաթիվ գրքեր, որոնք հրատարակվել են անցած տասնամյակներում Թուրքիայում, ոչ միայն դարձել են պաշտոնական տեսակետ և տիրապետող մտայնություն թուրքական հասարակության մեծագույն մասի համար, այլև թարգմանվել են շատ լեզուներով և հետևողական փորձեր են արվել այդ ժխտողականության գաղափարները եվրոպական և ամերիկյան հասարակության մեջ տիրապետող դարձնելու ուղղությամբ⁵⁶:

⁵⁶ Հայոց ցեղասպանության փաստը 1990-ական թթ. սկսեց անօրինակ ցինիզմով ժխտվել ադրբեջանական «գիտնականների» և 30 հակաարցախյան քարոզչություն մղող ՋԼՄ-ների կողմից, թեև չէր ժխտվում Խորհրդային Ադրբեջանում: Այսպես՝ նախկին ԽՍՀՄ ԳԱ Արևելագիտության ինստիտուտի և Ադրբեջանական ԽՍՀ ԳԱ Մերձավոր և Միջին Արևելքի ժողովուրդների ինստիտուտի գրիֆով հրատարակած մենագրությունում Համիդ Ջեյնալաբեդին-օղլի Ալիևը մասնավորապես արձանագրել է այն փաստը, որ թեև Օսմանյան կայսրությունում «տեղահանության» մասին օրենքը ձևականորեն նախատեսում էր բնակչության «էվակուացիան» այն շրջաններից, որոնց «սպառնում էր ռուսական բանակը», սակայն իրականում այն կիրառվում էր ոչ միայն Արևմտյան Հայաստանում, այլև Կենտրոնական Անատոլիայում ու Ստամբուլում բնակվող հայերի դեմ, և «հարազատ վայրերից աքսորված 1.5 միլիոն հայերի համար «տեղահանության» մասին օրենքը նշանակում էր զանգվածային ոչնչացում»։ Տե՛ս **Алиев Г. 3.**, Турция в период правления младотурок (1908-1918гг.), М., 1972, стр. 277: Հեղինակն այնուհետև գրել է. «Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ ոչնչացվել է միլիոնից ավելի հայ: Ողջ մնացածները փրկվել են միմիայն արտասահման փախչելու շնորհիվ»: Տե՛ս նույն տեղում, էջ 278: Հարկ է նշել, որ Ադրբեջանական խորհրդային հանրազգիտարանը նույնպես ներկայացնում է Առաջին աշխարհամարտի տարիներին օսմանյան կառավարության՝ հայերի նկատմամբ իրականացրած ցեղա-

1990-ական թթ. թուրքական հասարակությունը, հիրավի, բավական կաղապարված ու կարծրացած տեղեկություններ ուներ Հայոց ցեղասպանության հարցում և տարբեր երկրներում ծավալված քննարկումներն ու շարժումները հոգուտ Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման ընկալում էր որպես սպառնալիք և վիրավորանք թուրքական ինքնությանը: Դա ամրապնդվում էր նաև թուրքական քրեական օրենսգրքի 301 հոդվածով, որի մեկնաբանությամբ Թուրքիային և թուրքերին ցեղասպանության մեջ մեղադրելը նշանակում էր վիրավորել թուրքական ազգային ինքնությունը:

2. Հայտնի է, որ հանրապետական Թուրքիայում ազգայնական գաղափարախոսությունը հասցվել է պետական քաղաքականության մակարդակի, հետևողականորեն վարվել է հայկական և հունական կապիտալը թուրքական տնտեսությունից դուրս մղելու, տնտեսությունը «թուրքացնելու» քաղաքականություն⁵⁷:

սպանության քաղաքականության՝ զանգվածային ջարդերի, ավելի քան 1.5 միլիոն հայերի ոչնչացման, 600 հազար հայերի՝ Միջագետքի անապատները քշվելու ու նրանց մեծ մասի զոհվելու, 300 հազար հայերի՝ Ռուսաստանում օթևան գտնելու, փախստականների մի մասի՝ Մերձավոր Արևելքի, Եվրոպայի և Ամերիկայի երկրներում ապաստանելու փաստերը: Տե՛ս "Азербайжан совет энциклопедиясы", чилд 4, Баки, 1980, стр. 84, տե՛ս նաև **Մ. Հակոբյան**, Օսմանյան կայսրությունում 1915 թ. Հայոց ցեղասպանության ժխտման միտումները ժամանակակից Ադրբեջանում, «Միջազգային հարաբերություններ. հայկական աշխարհ», թիվ 1, ապրիլ, 2010 թ., էջ 56-59:

⁵⁷Մանրամասն տե՛ս **Սաֆարյան Ա.**, Ջիյա Գյոքալիը և «թուրքականության հիմունքները», Երևան, 2012, էջ 209-241, նույնի «Տնտեսական թուրքականությունը», էտատիզմի քաղաքականությունը Թուրքիայում և տնտեսության «թուրքացումը», Երևան, ԵՊՀ հրատ., 2012:

Նույնիսկ Լոզանի պայմանագրից հետո, երբ թվում էր, թե հայերն այլևս որևէ սպառնալիք չեն ներկայացնում Թուրքիայի համար, եղել է հայերի հարստահարման և ունեզրկման մի քանի ակիք, որի հետևանքով հայությունն է՛լ ավելի թուլացել ու դուրս է մղվել երկրից: Ուշագրավ է, որ մինչև 1939 թ. Երկրորդ աշխարհամարտի սկիզբը, Ֆրանսիայում և Եվրոպական տարբեր երկրներում ապաստանած – մազապուրծ նախկին օսմանահպատակ հայերը չէին կորցնում իրենց հույսը Թուրքիա վերադառնալու, իրենց տներին և ունեցվածքին տեր կանգնելու հարցում: Սակայն «լքյալ գույքի» մասին հայտնի օրենքի գործադրմամբ հայկական սեփականությանը տեր կանգնեցին իշխանություններին կապված տասնյակ հազարավոր թուրքեր, և այսպես կոչված «անտեր մնացած» հայկական անշարժ գույքի և հարստությունների թալանը թուրքական իշխող ընտրանու կողմից օրինականացվեց: Այսպիսով, թուրքական հասարակության մեջ եղանակ ստեղծող զինվորական, քաղաքական, առևտրական, դիվանագիտական վերնախավերի շատ ներկայացուցիչներ կոնկրետ պատճառ ունեն հանդես գալու հակահայկական դիրքերից և զգոնություն քարոզելու հայկական վտանգի դեմ, որովհետև նրանց ծնողները կամ պապերը մասնակցել են հայկական սեփականության յուրացմանը⁵⁸:

⁵⁸ Այս մասին մանրամասն տե՛ս **Onaran N.**, *Emvâl-i Metrûke Olayı: Osmanlı'da ve Cumhuriyet'te Ermeni ve Rum Mallarının Türkleştirilmesi*, İstanbul, 2010, ինչպես նաև **Սաֆարյան Ա.**, *Ջիյա Գյոքալվիը թուրքական տնտեսության զարգացման մասին, «Հայոց մեծ Եղեռն - 90»*, հողվածների ժողովածու, Երևան, ԵՊՀ հրատ., 2005, էջ 416-431, **Հովհաննիսյան Ա.**, *Քեմալ Աթաթուրքը և հայերի ունեզրկման գործընթացը, «ՎԷՄ» համահայկական հանդես*, Երևան, 2011, թիվ 33, էջ 168-182, **Մելքոնյան Ռ.**, «Ունեցվածքի հարկը» կամ տնտեսության «թուրքացման» քաղաքականությունը հանրապետական Թուրքիա-

3. 1965 թ. Հայոց ցեղասպանության 50-ամյա տարելիցի առիթով հայության մեջ ծավալված շարժումներն առաջացրեցին Հայոց ցեղասպանության ճանաչման, դատապարտման և փոխհատուցման համազգային պահանջ, որը համախմբեց Սփյուռքի հայկական համայնքներին ու հիմք դրեց կազմակերպված հայկական պահանջատիրությանը: Ձևավորվեցին հասարակական կառույցներ, լոբբիստական խմբեր, լրատվամիջոցներ, որոնք սկսեցին աշխատել տարբեր երկրների պետական և տեղական իշխանությունների ուշադրությունը Հայոց ցեղասպանության փաստը դատապարտել տալու ուղղությամբ: Սփյուռքյան գաղութներում, մասնավորապես՝ Երիտասարդության շրջանում, ազգային ինքնագիտակցության այդ զարթոնքի պայմաններում առաջացան նաև արմատական հայացքներ ունեցող ակտիվիստների խմբեր, որոնք զինված պայքարի և վրեժի գաղափարն էին պաշտպանում: Այդ արմատական գաղափարների իրականացումը դարձավ 1975 թ. իր գոյության մասին հռչակած Հայաստանի Ազատագրության հայ գաղտնի բանակը (ՀԱՀԳԲ, անգլերեն հապավմամբ՝ ASALA), որը համախմբեց տարբեր երկրների հայ համայնքների մարդկանց, հիմնականում՝ Երիտասարդների: Դրան հաջորդած 15 տարիների ընթացքում եղան վրեժխնդրության դրսևորումներ: 1991 թ. ՀԱՀԳԲ-ն հանդես եկավ ընդարձակ հայտարարությամբ, որտեղ, ձևակերպելով իր գործունեության գաղափարախոսական հիմքերը, որոնք հանգում էին Արևմտյան Հայաստանի և «բռնագրավված հայկական բոլոր հողամասերի ազատագրության պայքարին ծառայելու նպատակին», 7-րդ կետով հայտարարում էր, որ

յում, Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, հ. 5, Երևան, 2008, էջ 127-143:

«Պատմական Հայաստանի պահպանված պատառիկը նկատելով ամբողջական Հայաստանի կերտման կորիզ՝ Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակը սատար է հանդիսանում այնտեղ հաստատված հայ ազգային պետականության, իր տրամադրության տակ եղած բոլոր միջոցներով»⁵⁹ : Չնայած դրանից հետո ՀԱՀԳԲ-ն թուրքական պետական և դիվանագիտական հաստատությունների դեմ զինյալ գործողություններ չի իրականացրել, դեռ երկար տարիներ այն ներառվում էր ԱՄՆ պետական դեպարտամենտի կողմից տարեկան կազմվող աշխարհի ահաբեկչական կազմակերպությունների ցանկի մեջ: Այս կազմակերպության գործունեությունը տարիներ շարունակ եղել է թուրքական պետության, հատկապես թուրքական գաղտնի ծառայությունների լուրջ մտահոգության առարկա: Գնահատելով այդ գործունեությունն իբրև էական սպառնալիք՝ թուրքական հատուկ ծառայություններն ուղղակիորեն կամ դեսպանությունների աշխատանքի միջոցով աշխարհի հայաշատ երկրներում ամենօրյա օպերատիվ տեղեկություններ են հավաքել հայկական կազմակերպությունների գործունեության մասին՝ փորձելով բոլոր տեսակի, նույնիսկ հրապարակայնորեն և ժողովրդավարական միանգամայն ընդունելի միջոցներով գործող կառույցների մեջ փնտրել գաղտնի կապ ՀԱՀԳԲ-ի հետ: Թուրքիայի անվտանգության համար սպառնալիք նկատված «Հայկական վրեժխնդրության» ուրվականը տարիներ շարունակ իր հոգեբանական որոշակի ազդեցությունն է թողել թուրքական վերնախավերի վրա: Հայկական պահանջատիրությունը որպես ահաբեկչություն ներկայացնելուն

⁵⁹ Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակի 1991 թ. հայտարարությունը, <http://www.oukhtararati.com/haytararutyunner/ASALA-History.php>

և այդ միջոցով արևմտյան ժողովրդավարական պետությունների հասարակական կարծիքը սփյուռքահայության նկատմամբ բացասաբար տրամադրելուն նպատակաուղղված թուրքական (և ադրբեջանական) փորձերը, (չնայած գործադրվող համակարգված և զգալի ջանքերին, ինչպես նաև ահռելի գումարային ծախսերին), այդպես էլ շոշափելի օգուտ չեն տվել:

4. Հայաստանի Հանրապետության անկախացումից անմիջապես հետո հաստատվեցին և սկսեցին զարգանալ առևտրատնտեսական հարաբերություններ Թուրքիայի հետ: Հազարավոր փոքր ու միջին գործարարներ մղվեցին դեպի թուրքական շուկաներ և կամուրջ դարձան երկկողմ առևտրատնտեսական հարաբերությունների զարգացման համար: Նույնիսկ այդ պայմաններում, երբ Թուրքիայի կառավարությունը 1993 թ. պաշտոնապես էմբարգոյի ռեժիմ մտցրեց Հայաստանի հանդեպ, հայ-թուրքական առևտրական կապերը շարունակեցին զարգանալ: 1990-ական թթ. ընթացքում դժվար է եզրակացնել, թե դրամական համարժեքով այդ հարաբերություններն ինչ ծավալ էին կազմում: Ակնհայտ է, որ Թուրքիայից Հայաստան մտնող ապրանքների մի զգալի մասը վերածնակերպվում էր Վրաստանում և Իրանում ու Հայաստան էր հասնում որպես վրացական կամ իրանական: Ընդունված է համարել, որ 90-ականների վերջին երկկողմ առևտրի ծավալը կազմում էր տարեկան մոտ 100 միլիոն ԱՄՆ դոլար: Հակառակ այն հանգամանքին, որ այդ ընթացքում քաղաքական հարաբերություններում այդպես էլ առաջընթաց չարձանագրվեց, այսուհանդերձ հայ առևտրականներն իրենց թուրք գործընկերների հետ հաստատել էին գործնական և փոխշահավետ հարաբերություններ: Այդ առևտրի ծավալներն այնքան զգալի դարձան, որ 1997 թ. ստեղծվեց Թուրք-հայկական տնտեսական կոմիտեն (ԹՀՏԿ), որի համանախագահներն էին Հայաստանի

Արդյունաբերողների և գործարարների միության նախագահ Արսեն Ղազարյանը և թուրք գործարար Քասան Սոյաքը: Այս կազմակերպությունը սկսեց ջանքեր գործադրել երկկողմ տնտեսական կապերը զարգացնելու և թուրքական իշխանությունների առջև Հայաստանի հետ պաշտոնական հարաբերություններ հաստատել տալու ուղղությամբ⁶⁰:

5. Ադրբեջանի անկախացումից հետո նրա և Թուրքիայի Հանրապետության բազմաբույթ և բազմաշերտ հարաբերությունները նպաստեցին նաև այն հանգամանքին, որ ահռելի թվով Ադրբեջանի քաղաքացիներ տեղափոխվեցին Թուրքիա ժամանակավոր, իսկ ավելի ուշ՝ նաև մշտական բնակության: Այս մարդիկ, մի կողմից կապ պաշտպանելով Ադրբեջանի իրենց հարազատաների ու բարեկամների հետ, մյուս կողմից սկսեցին միահյուսվել թուրքական հասարակությանը՝ աստիճանաբար դառնալով նրա մի մասը: Տարբեր հաշվարկներով՝ 2-3 միլիոն ադրբեջանցի 1990-ական թթ. ընթացքում հաստատվել է Թուրքիայի տարբեր տարածաշրջաններում, մասնավորապես՝ հայ-թուրքական սահմանին հարող քաղաքներում և գյուղերում: Նրանք հանդիսացել և հանդիսանում են կարևոր գործոն Թուրքիայում ադրբեջանական իշխանությունների կողմից հակահայկական կրքերի բորբոքման համար: Նրանց գործնական ազդեցությունը թուրքական հասարակական կարծիքի վրա 90-ական թթ. ամբողջ ընթացքում անընդհատ աճել է և հիմք դարձել այն բանի, որ թուրքական քաղաքական վերնախավերը ոչ միայն զգան եղբայր Ադրբեջանի ազդեցությունը, այլև իրենց քաղաքացի կամ մշտական բնա-

⁶⁰ Տե՛ս Հայաստան-Թուրքիա. բաց խոսակցություն, Երևան 2005, էջ 110-111:

կիչ դարձած ադրբեջանցիների տրամադրությունների ճնշումը:

1998 թ. փետրվարի 3-ին նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը հրաժարական տվեց: Ընտրությունների արդյունքում հաղթանակ տարած Ռեբերտ Քոչարյանը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման խնդիրը դարձրեց ՀՀ արտաքին քաղաքականության գերակայություններից մեկը: Ֆրանսիայի Ազգային ժողովը (1998 թ.), Բելգիայի Սենատը (1998 թ.), Շվեդիայի խորհրդարանը (2000 թ.), Լիբանանի խորհրդարանը (2000 թ.), Ֆրանսիայի Սենատը (2000 թ.), Եվրոպական խորհրդարանը (2000 թ.), Իտալիայի Պատգամավորների պալատը (2000 թ.) ընդունեցին Հայոց ցեղասպանությունը դատապարտող բանաձևեր և զեկույց, որը շարունակվեց Ռ. Քոչարյանի կառավարման ընթացքում, և որը հիմք տվեց պատմաբան, ցեղասպանագետ Նիկոլայ Հովհաննիսյանին եզրակացնելու, որ Հայոց ցեղասպանությունն այլևս միջազգայնորեն ճանաչված և դատապարտված ցեղասպանություն է⁶¹: Թուրքական հասարակական կարծիքում Հայաստանի իշխանությունների դիրքի կարծրացումը ցեղասպանության ճանաչման հարցում ընկալվել է իբրև Լևոն Տեր-Պետրոսյանի կառավարման շրջանում հայ-թուրքական հարաբերությունները կարգավորելու չօգտագործված հնարավորություն⁶²: Ինչպես հայ, այնպես էլ թուրք հետազոտողներն ուշադրություն են դարձրել այն հանգամանքին, որ Հայաստանի երկրորդ նախագահին, ապահովելով իր իշխանության ավելի լայն քաղաքական հենարան (ներգրավելով իշխանության մեջ

⁶¹Տե՛ս Հովհաննիսյան Ն., Արմենոցիդը ճանաչված ցեղասպանություն է, Երևան, 2010, էջ 244-248:

⁶²Lütem Ö.E., Türkiye-Ermenistan ilişkileri, <http://www.eraren.org/index.php?Page=Dergilcerik&IcerikNo=22>

Հայ Հեղափոխական Դաշնակցությանը), կարծրացրեց հայկական դիրքորոշումները ոչ միայն Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման, այլև Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հարցերում⁶³:

*
* *

Հայաստանի անկախությունը հռչակվեց 1990 թ. օգոստոսին՝ Արցախյան համաժողովրդական շարժման աննախադեպ վերելքի շրջանում: Խորհրդային Միության վերահաս փլուզման պայմաններում Լեռնային Ղարաբաղի հայությունը 1991 թ. սեպտեմբերի 2-ին ընդունեց անկախության հռչակագիր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ստեղծման մասին, ինչը հիմք էր ստեղծում պետական անկախության և ինքնիշխանության զարգացման համար: Այդ հռչակագիրը, ինչպես և սպասելի էր, թշնամանքով ընդունվեց Ադրբեջանում, որը խորհրդային զինված ուժերի հետ համատեղ գործողություններ էր իրականացնում Լեռնային Ղարաբաղում: 1991 թ. սեպտեմբերի 21-ին Հայաստանի Հանրապետությունում անցկացվեց Անկախության հանրաքվե, որի արդյունքում բնակչության 95 տոկոսը քվեարկեց Հայաստանի պետական անկախության օգտին: 1991 թ. դեկտեմբերին Ռուսաստանի Դաշնության, Ուկրաինայի և Բելառուսի նախագահները Բելլովեժյան թավուտում

⁶³ Տե՛ս **Հովհաննիսյան Ա.**, ԽՍՀՄ-ի փլուզումը, «թուրք միասնության» գաղափարը և Ղարաբաղյան հարցը (1990-95-ականների թուրքական հրապարակումների լուսաբանմամբ), Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XX, Երևան, 2001 թ., էջ 74-81:

(Բելառուս) հանդիպեցին և համատեղ հայտարարությանը հռչակեցին ԽՍՀՄ փլուզման և իրենց պետությունների անկախության մասին⁶⁴: Այսպիսով, 1991 թ. վերջում Խորհրդային Միությունը դադարեց գոյություն ունենալ, նրա փլատակների վրա անկախություն ստացան նախկին խորհրդային հանրապետությունները: Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը վերածվեց բացահայտ պատերազմի, որի ընթացքում հայկական և ադրբեջանական կողմերը տվեցին հազարավոր զոհեր և մի քանի տասնյակ հազար վիրավորներ:

1992 թ. մարտի 24-ին նորանկախ Հայաստանի Հանրապետությունը և Ադրբեջանական Հանրապետությունը, անդամակցելով Եվրոպայի անվտանգության և համագործակցության խորհրդին (ԵԱՀԽ, հետագայում՝ ԵԱՀԿ), դիմեցին միջազգային հանրությանը՝ խնդրելով կարգավորել Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը: Մարտի 24-ին ձևավորվեց ԵԱՀԽ Մինսկի խումբը, որի նպատակն էր միջազգային միջնորդության պայմաններում աշխատել այդ հակամարտության կարգավորման ուղղությամբ՝ նկատի ունենալով, որ խաղաղ բանակցությունների արդյունքում գումարվելիք հաշտության պայմանագիրը կկնքվի Բելառուսի Հանրապետության մայրաքաղաքում: 1994 թ. մայիսին ռազմական գործողությունները դարաբաղյան հակամարտության գոտում դադարեցին, և կնքվեց հրադադար: Հրադադարի մասին բանակցությունները վարեցին ԼՂՀ, ՀՀ և ԱՀ զինվորական ներկայացուցիչները՝ Ռուսաստանի Ղաշնության և ԱՊՀ ներկայացուցիչների միջնորդության պայմաններում:

⁶⁴ Соглашение о создании СНГ ("Беловежское соглашение").
Справка, <http://ria.ru/spravka/20111208/508143773.html>

1992 թ. Թուրքիայի և Հայաստանի հարաբերություններում նկատվեցին դրական տեղաշարժի որոշ միտումներ, օգոստոսի 23-25-ը աշխատանքային այցով Երևանում էր գտնվում Բիլգին Ունանի գլխավորած պատվիրակությունը: Այդ միտումներին, կարծես թե, չխոչընդոտեց անգամ ՀՀ արտգործնախարար Րաֆֆի Հովհաննիսյանի՝ Եվրոպայի խորհրդի ստամբուլյան հանդիպման ժամանակ հնչեցրած հայտնի ելույթը, որով ՀՀ արտգործնախարարը անդրադարձել էր Հայոց ցեղասպանության հիմնահարցին, Թուրքիային մեղադրել էր ՀՀ-ի հետ դիվանագիտական հարաբերություններ չհաստատելու, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի խնդրում չեզոքություն չպահպանելու և ԵԱՀԽ-ին ՀՀ անդամակցությանը խանգարելու մեջ⁶⁵: Եվրախորհրդում Թուրքիայի մշտական ներկայացուցիչ, արտակարգ և լիազոր դեսպան Սյունմեզ Քյոքսալը հայտարարեց, որ Րաֆֆի Հովհաննիսյանի ելույթն առաջացրել է թուրքական կողմի զարմանքն ու վիշտը՝ նշելով, որ Հովհաննիսյանի «հրահրիչ ու ագրեսիվ ելույթը չի կարող Թուրքիայի հետ բարիդրացիական հարաբերությունների ձգտող մի երկրի քաղաքական կողմի արտահայտությունը լինել»⁶⁶: ՀՀ արտգործնախարարի ելույթը ոչ միանշանակ ընդունվեց ՀՀ ղեկավար շրջանակներում, ինչի հետևանքով Ր. Հովհաննիսյանը հրաժարական ներկայացրեց, որի ամենակարևոր պատճառը, թերևս, Թուրքիայի հետ հարաբերությունների խնդրում նրա և նախագահի հայացքներում առկա հակասությունն էր⁶⁷:

⁶⁵ Տե՛ս Արշակյան Գ., Թուրքիայի քաղաքականությունը Հարավային Կովկասում 1991-2001թ., էջ 63-64, տե՛ս նաև “Cumhuriyet”, 18.09.1992.

⁶⁶ “Anadolu Ajansi”, 18.09.1992.

⁶⁷ “Milliyet”, 18.11.1992.

1992 թ. սեպտեմբերի վերջին ԱՄՆ-ում տեղի ունեցավ ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի և Թուրքիայի արտգործնախարար Հ. Չեթինի հանդիպումը: Ամփոփելով հանդիպման արդյունքները՝ «Միլլիյեթ» թերթին տված հարցազրույցում Հ. Չեթինը նշեց, որ ՀՀ և ԹՀ հարաբերություններում կարևորն Ադրբեջանի հարցն է: Նա շեշտեց, որ հայկական զինված ուժերը պետք է հետ քաշվեն «Ադրբեջանի տարածքից»: Դրանից հետո Լեռնային Ղարաբաղի քաղաքական իրավիճակը պետք է քննարկվի Մինսկի հանդիպման ժամանակ: ԹՀ արտգործնախարարը, մասնավորապես, նշել էր, որ ՀՀ նախագահի կողմից առկա է որոշակի ըմբռնում, և որ «Ղարաբաղի քաղաքական ապագան կքննարկենք հետո, հիմա անհրաժեշտ է կարգավորել մյուս խնդիրները»⁶⁸: Այս հանդիպման արդյունքները կարող էին նպաստել երկկողմ հարաբերությունների կարգավորման գործին, սակայն, երբ հայկական կողմն արձանագրեց հերթական հաջողությունը և 1993 թ. ապրիլին ազատագրեց Քարվաճառը (Քելբաջարը), հայ-թուրքական հարաբերություններում նոր արտակարգ լարում արձանագրվեց: Այդ իրադարձությանը Թուրքիայի հակազդեցությունը ոչ միայն քաղաքական էր, սկսեց քննարկվել նույնիսկ Թուրքիայի կողմից՝ ԼՂ հակամարտությանը հնարավոր ռազմական միջամտության հարցը: «Հյուրիյեթ» թերթը մասնավորապես գրում էր. «Հայ-ադրբեջանական պատերազմի ընդլայնման հնարավորությունը ստիպեց Թուրքիային ռազմական պատրաստության վիճակի բերել Երրորդ բանակի զորամիավորումները: Ինչպես հայտնում են զինվորական աղբյուրները, Սարիղամիշում, Աշքալեում, Կարսում, Արդահանում և Դումլուում գտնվող սահմանապահ զորքերը համալր-

⁶⁸ “Milliyet”, 29.09.1992.

վել են, և թուրքական ռազմական օդանավերը մշտական հերթապահ թռիչքներ են իրականացնում»⁶⁹: Հենց այդ օրերին Թուրքիայի կառավարությունը փակեց Հայաստանի հետ ցամաքային սահմանը, կասեցրեց Կարս-Գյումրի երկաթուղու աշխատանքը, նաև H50 միջազգային օդային միջանցքը՝ արգելելով միջազգային ավիաչվերթները դեպի Հայաստան իր օդային տարածքով: Թուրքիան արգելեց նաև Հայաստան տեղափոխվող մարդասիրական բեռների առաքումը՝ դրանով փաստացիորեն ամբողջական շրջափակում հայտարարելով Հայաստանին: Թուրքիայի նախագահ Թուրգութ Օզալը, այդ օրերին պաշտոնական այցով գտնվելով Ղրղզստանում, հայտարարեց. «Ի՞նչ կլինի, եթե ՀՀ սահմանի մոտ զորախաղեր անցկացնենք, և մեր ռումբերից երեքն ընկնի ՀՀ տարածք: Ի՞նչ կլինի, եթե Նախիջևան մեկ-երկու զորամիավորում մտցնենք: Նախիջևանի հետ կապված ենք պայմանագրով: Ի՞նչ կլինի, ո՞վ մեզ ինչ կանի, ո՞վ պիտի գա միջամտելու: Ո՞վ կարողացավ միջամտել Բոսնիայի դեպքերին: Համաշխարհային քաղաքականության մեջ առանց ռիսկի դիմելու ոչնչի չենք հասնի»⁷⁰: Նույն օրը Բիշկեկում Թուրքիայի դեսպանությունում թուրք լրագրողներին տված հարցազրույցում Թ. Օզալը գայրացած հավելել էր. «Այլևս դարաբաղյան խնդիր չկա, կան ՀՀ նկրտումները Մեծ Հայաստանի վերաբերյալ: Կարծում եք՝ այստեղ կա՞նգ է առնելու, ուրիշ բան չի՞ անելու... Ինձ մի հարցրեք ՀՀ մտնել պետք է, թե՛ ոչ, բայց Թուրքիան պետք է

⁶⁹ “Hurriyet”, 08.04.1993.

⁷⁰ ՀՀ ԱԳՆ, Մերձավոր և Միջին Արևելքի վարչություն, Թուրքիայի բաժին, Հայաստան-Թուրքիա, ժամանակագրություն, էջ 5, Հայաստան-Թուրքիա. բաց խոսակցություն, Հասարակական երկխոսության և զարգացումների կենտրոն, Երևան 2005, էջ 109:

լավ հաշվարկի իր քայլերը»⁷¹: Թուրքիայի նախագահի այդ ելույթն ինքնաբուխ էր և արտահայտում էր ոչ թե կամ ոչ այնքան պետության ղեկավարության մշակված դիրքորոշում, որքան անձնական կարծիք⁷²:

Թուրքիայի վարչապետ Ս. Դեմիրելը, Թ. Օզալի ռազմատենչ կեցվածքի համեմատ, ավելի զգույշ և հավասարակշռված դիրքորոշում դրսևորեց: Նա հայտարարեց. «Հայաստանի մեջքին կանգնած են ԱՄՆ-ը և Ֆրանսիան: Այդ պատճառով արտգործնախարարությունն ինձ խորհուրդ չտվեց բանակցել Քլինթոնի և Միտերանի հետ: Բացի այդ, Թուրքիայում կան ուժեր, որոնք պահանջում են անցնել սահմանը: Ես դրանց պատասխանում եմ, որ գնալը հեշտ է, բայց այնտեղ ո՞ւմ հետ եմ հանդիպելու, ամերիկացիների՞... Այնտեղ իմ դեմ դուրս կգա Ռուսաստանը, Կարմիր բանակը»⁷³:

1993 թ. հուլիս-օգոստոսին հայկական ուժերը նոր հաջողություն ունեցան: Նրանց հաջողվեց հերթականությամբ ազատագրել Աղդամը (Ակն), Ֆիզուլին (Վարանդա), Ջաբրայիլը (Ջրական) և Ջանգելանը (Կովսական): Սա առաջացրեց բողոքի նոր ալիք Թուրքիայում: Այս հարցին հատուկ նվիրվեց նախագահ Ս. Դեմիրելի նստավայրում գումարված Թուրքիայի Անվտանգության խորհրդի դեմփակ նիստը, որի մասնակիցներից արտգործնախարար Հիքմեթ Չեթինը լրագրողներին տեղեկացրեց, որ, օգտվելով Ադրբեջանի ներքաղաքական անկայունությունից, հայերը նոր տարածքներ են նվաճել: «Հայաստանը շատ թանկ է վճարելու այս տարածքների համար», - ասել էր Հ. Չեթինը⁷⁴:

⁷¹“Milliyet”, 08.04.1993.

⁷²Տե՛ս Արշակյան Գ., նշվ. աշխ., էջ 66:

⁷³“Sabah”, 05.04.1993.

⁷⁴“Hurriyet”, 26.07.1993.

Քարվաճառի գործողությունից հետո, ի հակադրություն հայկական հաջողությունների, 1993 թ. սեպտեմբերի սկզբներին հայ-թուրքական սահմանի երկայնքով տեղակայվեց ավելի քան 50 հազարանոց թուրքական զորք: Վարչապետ Թանտու Չիլերը նույնիսկ հայտարարեց, որ կգնա «Թուրքիայի խորհրդարան և պատերազմ կհայտարարի ՀՀ-ին, եթե հայերը դիպչեն Նախիջևանին»⁷⁵: Այդ օրերի լարվածությունը հասել էր առավելագույնի, և Թուրքիայում լրջորեն մտածում էին Հայաստանի դեմ ռազմական գործողություն սկսելու մասին: Հայաստանում Հունաստանի այդ շրջանում դեսպան Լ. Խրիզանտոպուլոսի տեղեկությունների համաձայն, թուրքերը գաղտնի կապերի մեջ էին Ռուսաստանում հակաելցինյան ուժերի և նրանց ղեկավար, Պետական դումայի նախագահ Ռուսլան Խազբուլատովի հետ, և եթե Մոսկվայում իրականանար պետական հեղաշրջում և իշխանության գային հակաելցինյան ուժերը, թուրքական զինված ուժերը կարող էին մտնել Հայաստան⁷⁶:

Թուրքիան 1993 թ. համակողմանի (բացի ուղղակի ռազմական միջամտությունից) ու զգալի օգնություն էր ցուցաբերում Ադրբեջանին: Օրինակ, այդ օրերին պաշտոնական Բաքվին 30 մլն դոլարի վարկ հատկացրեց սպառազինություններ ձեռք բերելու համար: Մարդասիրական օգնության քողի տակ դեռ ավելի վաղ, 1992 թ. կառավարական խողովակով ադրբեջանցիներին էր մատակարարվել զենք և զինամթերք, այդ թվում 5 հազար «Սթինգեր» տեսակի հրթիռ⁷⁷:

⁷⁵ Bishku M., Turkey, Ethnicity, and Oil in the Caucasus.-Journal of Third World Studies, Vol.18, N2, Fall 2001, p. 3.

⁷⁶ **Chrystanthopoulos L.**, Caucasus Chronicles: Nation-Building and Diplomacy in Armenia, 1993-1994, Princeton and London, 2002, pp. 76-77.

⁷⁷ Gerçek, Haftalik Haber Dergisi, N1, 14.06.1992, s.10.

Պաշտոնական Անկարայի ադրբեջանամետ դիվանագիտական կեցվածքի վառ դրսևորում էր 1992 թ. փետրվարին Վաշինգտոնում ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշի հետ հանդիպման ժամանակ Թուրքիայի վարչապետ Ս. Դեմիրելի կոչն ամերիկյան կողմին՝ ձեռնպահ մնալ ԼՂ հարցում ՀՀ-ին աջակցելուց: Ավելի ուշ, անդրադառնալով այդ հարցին, Ս. Դեմիրելը նշել էր, որ Լեռնային Ղարաբաղի հարցի շուրջ Ադրբեջանի հետ պայքարում ՀՀ-ին աջակցելը հղի է տարածաշրջանային պատերազմով, որի ընդարձակման պարագայում Թուրքիան չի կարող չեզոքություն պահպանել⁷⁸:

Լեռնային Ղարաբաղի հակամարտության լայնամասշտաբ պատերազմի վերածվելուց անմիջապես հետո ինչպես ԱՄՆ-ը, այնպես էլ Թուրքիան ակտիվ դիվանագիտական երկխոսություն էին սկսել ՌԴ-ի հետ խաղաղ կարգավորման հնարավորությունների փնտրտուքի կապակցությամբ: Թուրքական կողմն այդ ակտիվությունը բացատրում էր իր ազգային անվտանգության նկատմամբ ձևավորվող սպառնալիքներով՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ Թուրքիայի թե՛ արևելքում՝ Հարավային Կովկասում, թե՛ արևմուտքում՝ Բալկաններում, բռնկված էին ազգամիջյան պատերազմներ, ինչը թուրքական պետության համար լուրջ մտահոգության առարկա էր:

1992 թ. մայիսին Թուրքիայի և Հայաստանի հարաբերությունները ծայրաստիճան լարվել էին: Լուրեր տարածվեցին, որ հայերը պատրաստվում են հարձակվել Նախիջևանի վրա, և Թուրքիայի ցամաքային ուժերի հրամանատարը հայտարարեց, որ բանակը սպասում է

⁷⁸ St' u Hovhannisy an N., The Karabakh Problem. Factors, Criteria, Variants of Solution, Yerevan, 1999, p. 53:

հարձակման հրամանի⁷⁹: Թուրքիայի ՋՈւ ԳՇ պետ, գեներալ Դ. Գյուրեշը այդ օրերին հայտարարեց, որ պատրաստ է դարաբաղյան հակամարտության գոտի ուղարկել այնքան զինվոր, որքան կխնդրի Ադրբեջանի կառավարությունը⁸⁰: Ըստ էության, այդ օրերին ղարաբաղյան հակամարտությունը չվերաճեց տարածաշրջանային (անկանխատեսելի հետևանքներով) պատերազմի, որովհետև ԱՊՀ Հավաքական զինված ուժերի գլխավոր հրամանատար, մարշալ Եվգենի Շապոշնիկովը հստակ հայտարարեց. «Թուրքիայի ներխուժումը կարող է հանգեցնել Երրորդ համաշխարհային պատերազմի»⁸¹:

1993 թ. ապրիլի 29-30-ին Մոսկվայում ընթացան բանակցություններ Ռուսաստանի, ԱՄՆ և Թուրքիայի մասնակցությամբ, մշակվեցին խաղաղարար առաջարկություններ, որոնք հայտնի դարձան «Եռակողմ նախաձեռնություն» անվանմամբ: Ըստ ռուսաստանյան ներկայացուցիչների, դրանց գլխավոր խնդիրը հանգում էր այնպիսի իրավիճակի հասնելուն, որ հրադադարը դառնա մշտական, և որ ստեղծվեին մեխանիզմներ, որոնք կբացառեին ռազմական գործողությունների վերսկսումը⁸²:

⁷⁹ St'u **Hale W.**, Turkey, the Black Sea and Transcaucasia, in "Transcaucasian Boundaries", New York, St. Martin's Press, 1996, p. 64.

⁸⁰ "Turkish Daily News", 27.05.1992.

⁸¹ **Zaman A.**, Azerbaijan Looks to Ankara.-The Middle East, N213, 11.07.1992, p.8; Turkish Daily News, 21.05.1992, **Aydin M.**, New Geopolitics of Central Asia and the Caucasus: Causes of Instability and Predicament, p. 17; **Cora N.**, Birlesik Turk Devletleri, Istanbul, 2004, s. 40.

⁸² **Митяев В. Г.**, Карабахский конфликт в контексте международных отношений, ВКН Армения: Проблемы независимого развития, Москва, 1998, стр. 508.

Լեռնային Ղարաբաղի հակամարտության մեկնաբանման և գնահատման հարցում բացահայտվել էր այն հսկայական տարբերությունը, որը կար, մի կողմից, Ռուսաստանի, ԱՄՆ, Ֆրանսիայի և ԵԱՀԿ Մինսկի խմբի անդամների ճնշող մեծամասնության, մյուս կողմից՝ Ադրբեջանի և նրան դիվանագիտական ճակատներում անվերապահ աջակցող Թուրքիայի դիրքորոշումների միջև: Այսպես, եթե ՌԴ և ԱՄՆ նախագահները ջանքերն ուղղում էին գլխավորապես ռազմական գործողությունների դադարեցմանը և խաղաղ բանակցությունների սկսմանը, ապա Ադրբեջանը հայտարարում էր «Հայաստանի ագրեսիայի մասին» և բորբոքում էր հակահայկական տրամադրություններ իր հասարակության ներսում⁸³: Այդպես շարունակվել է հակամարտության ծավալման ամբողջ ընթացքում, չնայած այդ կեցվածքն այդպես էլ Ադրբեջանին չուժեղացրեց, և ատելության քարոզը նրան բացարձակապես որևէ օգուտ չտվեց:

1994 թ. փետրվարին ռազմական իրադրությունը ղարաբաղա-ադրբեջանական ռազմաճակատում կրկին փոխվեց ի վնաս Ադրբեջանի, ինչը ծայրաստիճան մտահոգեց Բաքվի իշխանություններին: Փետրվարի 8-12-ին նախագահ Հ. Ալիևը հնգօրյա այցով ժամանեց Թուրքիա: Փետրվարի 9-ին նա հանդիպեց նախագահ Ս. Դեմիրելի և վարչապետ Թ. Չիլերի հետ, այնուհետև Ստամբուլում բանակցություններ վարեց գործարար շրջանակների հետ, ինչպես նաև այցելեց մի շարք հիմնարկություններ: Այցը հաջողված էր, քանի որ մամուլի հաղորդագրությունների համաձայն, Ալիևը ցրեց Թուր-

⁸³ St' u Сафарян Д., К вопросу о позиции турецкой общественно-политической мысли по проблеме установления официальных отношений с Арменией (1991-1998гг.), «21-ый век», №2, Ереван, 2015, с. 119-133.

քիայի իշխանությունների կասկածները, թե Բաքուն վերադառնում է ռուսաստանյան ուղեծիր: Հենց այդ ժամանակ էր, որ Ս. Ղեմիրելը, ի պատասխան Հ. Ալիևի հավաստիացումների, որ օտարերկրյա զորքերի մուտքը ղարաբաղյան հակամարտության գոտի (մասնավորապես՝ ռուսական) կարող է տեղի ունենալ միայն ԵԱՀԽ մանդատի առկայության դեպքում, հայտարարեց, որ Թուրքիան կայնդի «օկուպացված տարածքներից» հայկական զորքերի անմիջապես և անվերապահ դուրսբերման հարցում⁸⁴:

1994 թ. փետրվարին ԱՀ նախագահ Հ. Ալիևի ուղևորությունը Մեծ Բրիտանիա դարձավ «շրջադարձային» վերջակետը Ադրբեջանի քաղաքական իշխանության կողմնորոշումներում: Ղարաբաղյան հարցում և ընդհանրապես արտաքին քաղաքականության մեջ Հ. Ալիևի իշխանությունը հիմնական շեշտը սկսեց դնել Արևմուտքի և նրա աջակցության վրա: Դրա հետևանքով ձախողվեցին Ռուսաստանի և ԱՊՀ երկրների միջնորդության շրջանակներում ՌԴ պաշտպանության նախարար Պ. Գրաչովի նախաձեռնությամբ իրականացված Ադրբեջանի, Հայաստանի և ԼՂՀ պաշտպանության նախարարների փետրվարի 18-ի համաձայնությամբ նախատեսված միջոցառումները:

Թուրքիան, սկսած 1991 թ.-ից, ջանացել է ակտիվ դերակատարություն ունենալ նաև Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացում: Հայտնի է, որ դեռ 1992 թ. փետրվարին, երբ Հայաստանի Հանրապետությունը դառնում էր Եվրոպայի անվտանգության և համագործակցության խորհրդի անդամ, Թուրքիան փորձեց խափանել ՀՀ անդամակցությունը՝ նրան մեղադրելով հարևանների նկատմամբ տարած-

⁸⁴ Նույն տեղում, էջ 517:

քային նկրտումներ ունենալու մեջ: Դա Թուրքիային չհաջողվեց, որովհետև նորանկախ Հայաստանը տվեց անհրաժեշտ հավաստիացումներ, որ ինքը տարածքային հավակնություններ չունի հարևանների նկատմամբ: Հայաստանը և Ադրբեջանը դիմեցին ԵԱՀԽ-ին՝ խնդրելով միջնորդել Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը կարգավորելու հարցում: 1992 թ. մարտի 24-ին ձևավորված Մինսկի խմբի մեջ մտավ 9 երկիր՝ Ռուսաստանը, ԱՄՆ-ը, Ֆրանսիան, Գերմանիան, Իտալիան, Շվեդիան, Հունգարիան, Թուրքիան և Բելառուսը: Ադրբեջանի և Թուրքիայի մի քանի փորձերը ԵԱՀԽ-ում որոշումների ընդունման մեխանիզմը փոփոխելու վերաբերյալ, այնպես, որ Հայաստանը չկարողանա քվեարկել իրեն վերաբերող որոշումների հարցում, ձախողվեցին: Սա վկայում է, որ ԵԱՀԽ-ն չէր պատրաստվում բացահայտ կողմնակալ քայլեր ձեռնարկել հոգուտ հակամարտության կողմերից մեկի, որովհետև դա հակասում էր հակամարտության ընկալմանը, որն այդ ժամանակ արդեն ձևավորված տեսք էր ստացել թե՛ ԵԱՀԽ-ում և թե՛ ՄԱԿ-ում: 1993 թ. ապրիլի վերջին, Քարվաճառի (Քելբաջար) ազատագրումից հետո, Ավագ պաշտոնյաների կոմիտեի հերթական նիստում Ադրբեջանի և Թուրքիայի պատվիրակությունները համատեղ ջանքեր էին գործադրում ԼՂՀ պաշտպանության բանակի գործողությունները դատապարտող որոշում ընդունելու ուղղությամբ: Այդ ջանքերն անցան ապարդյուն: Այդտեղ ևս մեկ անգամ ընդգծվեց, որ Թուրքիան ունի ակնհայտ ադրբեջանամետ դիրքորոշում և «չի կարող հանդիսանալ համաեվրոպական կազմակերպության մի մարմնի լիիրավ անդամ, որը զբաղվում էր ղարաբաղյան հիմնահարցի կարգավորմամբ»⁸⁵:

⁸⁵ **Բալայան Տ.**, Ղարաբաղյան հիմնահարցը և միջազգային դիվա-

1994 թ. մայիսի 12-ին Ռուսաստանի միջնորդությամբ հաստատվեց հրադադարի ռեժիմ⁸⁶: Ղախորհրդանշեց ԼՂ հակամարտության գոտում և ընդհանրապես Հարավային Կովկասում Ռուսաստանի դիրքերի ուժեղացումը: Ղա էլ, իր հերթին, բնականաբար, կասկածի տակ դրեց Թուրքիայի հնարավոր դերը մեր տարածաշրջանում գլխավոր դերակատար լինելու հավանությունների հարցում: Մինսկի խմբի շրջանակներում ընթացող բանակցություններին զուգահեռ՝ տարածաշրջանում սկսեցին առաջ մղվել զանազան տնտեսական նախագծեր, որոնցից առաջնային էին դառնում ադրբեջանական նավթը, Կենտրոնական Ասիայի գազանավթային հարստությունները Հարավային Կովկասի վրայով դեպի Թուրքիա և այնտեղից էլ՝ դեպի Եվրոպա դրանք տեղափոխելու խնդիրները: Այս պարագաներում թուրքական դիվանագիտության խնդիր դարձավ Հայաստանի Հանրապետությանը գայթակղելն ու շահագրգռելը այդ տարածաշրջանային նախագծերին մասնակից դարձնելու ուղղությամբ՝ նկատի ունենալով, որ սպասվելիք տնտեսական օգուտները կարող են Հայաստանին դրդել ավելի զիջող լինելու ԼՂ հակամարտության հարցում: Օրինակ, 1995 թ. փետրվարին Թուրքիայի արտգործնախարար Մուրադ Քարայալչընը հայտարարեց, որ Թուրքիան դեմ չէր լինի Հայաստանի տարածքով Կասպիական նավթամուղի անցկացման հնարավորությանը: Հարկ է նշել, որ վերոհիշյալ ռազմավարական նշանակություն ունեցող ծրագրերի իրականացման ճանապարհին ԱՄՆ-ը և ԵՄ-ը գլխավորապես հանդես էին գալիս Անկարայի՝ Հայաստանի հետ հարաբերությունները կարգավորելու հորդորներով:

նագիտությունը 1991-1994թթ., Երևան, 2004, էջ 72-73:

⁸⁶ Մամանրամասն տե՛ս **Քալայան Տ.**, նշվ. աշխ. էջ 113-135:

Չնայած այդ հորդորները հանդիպում էին պաշտոնական Բաքվի վճռական հակազդեցությանը, Թուրքիայում շարունակվում էին փորձերն ավելի ձկուն դիրքերից մոտենալու խնդիրների այդ կծիկի քանդմանը: Օրինակ, այն բանից հետո, երբ Ադրբեջանի նախագահի խորհրդական Վաֆա Գուլուզադեն պնդել էր, որ Թուրքիայի հետ Հայաստանի հարաբերությունների կարգավորումն առանց ադրբեջանական տարածքներից հայկական գործերի դուրսբերման կարող է դիտվել որպես պաշտոնական Անկարայի դավաճանություն, թուրքական կողմը նույն օրերին ընդգծել էր, որ «Թուրքիան արտաքին քաղաքականության մեջ այլ պետության քնահաճույքով չի առաջնորդվում»⁸⁷:

Վերոհիշյալը թույլ է տալիս անելու հետևյալ եզրակացությունները.

- Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումից հետո Թուրքիայի Հանրապետությունը ճանաչեց ՀՀ-ն, բայց չհաստատեց դիվանագիտական հարաբերություններ: ՀՀ-ի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու ճանապարհին Թուրքիայի Հանրապետությունն առաջ քաշեց նախապայմաններ՝ Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման գործընթացից Հայաստանի հրաժարումը, 1921 թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերով հաստատված հայ-թուրքական սահմանի ճանաչումը և հայտարարելը, որ Հայաստանի Հանրապետությունը տարածքային պահանջներ չունի Թուրքիայից, հայկական զինված ուժերի դուրս բերումը «Ադրբեջանի գրավյալ տարածքներից»:

- ՀՀ իշխանությունները 90-ական թթ. ընթացքում փորձում էին հետևողականորեն առաջ տանել ԹՀ-ի

⁸⁷ “Cumhuriyet”, 25.02.1995.

հետ առանց նախապայմանների դիվանագիտական հարաբերություններ հաստատելու և 1993 թ. գարնանից փակված հայ-թուրքական սահմանը վերաբացելուն ուղղված քաղաքականությունը:

• Թուրքիայի իշխանությունները փորձում էին մեծացնել ազդեցությունը Հարավային Կովկասում, մասնավորապես՝ Հայաստանում: Այդ ուղղությամբ նրանք, իբրև տարածաշրջանի ազդեցիկ ուժ, փորձում էին միջնորդական ջանքեր գործադրել Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացում՝ միաժամանակ չհրաժարվելով սերտ համագործակցել և բազմակողմանի աջակցություն ցուցաբերել ադրբեջանական իշխանություններին: Այդ ուղղությամբ թուրքական դիվանագիտությունը ջանքեր էր գործադրում ինչպես ԼՂ հակամարտության ռազմական փուլում, այնպես էլ հրադադարի հաստատումից հետո՝ փորձելով ավելի մեծ հանձնառություն ստանձնել Մինսկի խմբի շրջանակներում (Ռուսաստանի և ԱՄՆ-ի հետ): Հայաստանի իշխանություններն առաջ էին քաշում այն տեսակետը, ըստ որի Թուրքիան չի կարող լինել անաչառ միջնորդների շարքում, որովհետև միակողմանի աջակցում և սատարում է Ադրբեջանին: Հենց այդ պատճառով էլ թուրքական դիվանագիտության միջնորդությունը կարգավորման գործընթացում առանձնապես նշանակալից չեղավ և զարգացում չունեցավ: Փաստորեն, լինելով ԱՄՆ մերձավորագույն դաշնակիցը տարածաշրջանում՝ Թուրքիան, փորձելով իր ազդեցությունն ու զարգացման մոդելը տարածել Ադրբեջանի և Կենտրոնական Ասիայի թյուրքալեզու պետությունների վրա, նախընտրեց իր ջանքերն ուժեղացնել հենց այդ ուղղությամբ և ամրապնդել բազմաբնույթ և խոր կապեր, մասնավորապես՝ Ադրբեջանի հետ, քան անաչառ և հավասարակշռված միջնորդ լինել Հայաստանի և Ադրբեջանի միջև: ԼՂ հակա-

մարտության ծավալման ընթացքում Թուրքիայի` Հայաստանի հետ մերձենալու քաղաքական քայլերը հարկ է համարել որոշակի դիվանագիտական մարտավարություն: Բազմաթիվ պատճառներով Թուրքիայի համար Հարավային Կովկասում ռազմավարական նպատակ էր մնում Ադրբեջանի հետ հարաբերությունների խորացումը` «մեկ ազգ` երկու պետություն» կարգախոսով: Թուրքիայի ազգայնական քաղաքական վերնախավը հենց այդ սկզբունքներն ու մոտեցումներն էր ներարկում թուրքական հասարակությանը և ստանում համապատասխան աջակցություն նրա գերակշիռ մեծամասնության կողմից:

- Հայաստանի Հանրապետությունն իր անկախության նվաճումից հետո, անդամակցելով Միավորված Ազգերի Կազմակերպությանը, Եվրոպայի անվտանգության և համագործակցության խորհրդին (հետագայում կազմակերպությանը), միշտ էլ հայտարարել է, որ հավատարիմ է միջազգային իրավունքի սկզբունքներին և անդամակցում է միջազգային կառույցներին իր միջազգայնորեն ճանաչված սահմաններում: Այսուհանդերձ, թուրքական հասարակական-քաղաքական շրջանակներում այդ տասնամյակում հայ-թուրքական սահմանի հարցը համարվում էր գերզգայուն, որովհետև կասկածներ կան, թե Հայաստանը տարածքային հավակնություններ ունի Թուրքիայի նկատմամբ: Լավ հասկանալով, որ Հայաստանի Հանրապետությունը չունի ոչ ռազմական, ոչ տնտեսական, ոչ էլ մարդկային ներուժ սահմանների վերանայման հարց գործնականում դնելու համար, թուրքական հասարակական կարծիքում լայնորեն շահարկվում էր «Սևրի սինդրոմը», իսկ Հայաստանը մնում էր Թուրքիայի արտաքին սպառնալիքների շարքում:

• ԼՂ հակամարտության ռազմական գործողությունների փուլում (1991-1994 թթ.) Թուրքիան Ադրբեջանին ցուցաբերեց բազմակողմանի քաղաքական, դիվանագիտական, ռազմատեխնիկական և բարոյական աջակցություն: Թուրքիան ուղղակիորեն ռազմական աջակցություն չցուցաբերեց Ադրբեջանին՝ ըստ երևույթին, խորհրդակցելով ԱՄՆ-ի և մյուս արևմտյան դաշնակիցների հետ ու չստանալով աջակցություն (այս մասին տարբեր ուժեղությամբ և տարբեր առիթներով բարձրաձայնել են Թուրքիայի ղեկավարները): Բայց գլխավորն, անշուշտ, այն էր, որ աշխարհի ուժեղագույն ուժային կենտրոնները, որոնք ներկայացված էին ԵԱՀԽ/ԵԱՀԿ Մինսկի խմբում, ջանում էին գտնել հարցի խաղաղ լուծում՝ միաժամանակ չկարողանալով (չցանկանալով) պարզել ազգամիջյան այս հակամարտության հրահրման բուն մեղավորին: Թուրքիան Հայաստանի դեմ միակողմանի ռազմական գործողություն ծավալելու դեպքում հայտնվելու էր Ռուսաստանի հետ դեմ առ դեմ, ինչը նախատեսում էր Մոսկվայի և Կարսի (1921 թ.) պայմանագրերի տրամաբանությունը: Ռուսաստանի իշխանությունները պարզ հասկացնել էին տվել, որ թուրքական հարձակման դեպքում «կարող է սկսվել Երրորդ համաշխարհային պատերազմ»: Այս իրողություններն էին ընկած այն քաղաքական դիրքորոշումների հիմքում, որոնք օբյեկտիվորեն կանգնած էին Հայաստանի և Թուրքիայի իշխանությունների և հասարակությունների առջև 2000-ականների սկզբի դրությամբ, երբ սկսեցին ձեռնարկվել երկկողմ հարաբերությունների կարգավորման նոր քայլեր:

**ԳԼՈՒԽ 2. ԹՈՒՐՔԻԱՅԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻՋԵՎ
ԵՐԿԵՆՈՍՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԵՐԸ 2001-2007 ԹԹ ԵՎ
ԴՐԱՆՑ ԱՐՏԱՑՈՒՄԸ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԻՍԿՈՒՐՍՈՒՄ**

1998 թ. Հայաստանում տեղի ունեցած իշխանափոխությանը հաջորդած քաղաքական գործընթացների նշանակալից դրսևորումներից մեկն այն էր, որ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման խնդիրը դարձավ երկրի արտաքին քաղաքականության առաջնահերթություններից մեկը: 21-րդ դարի առաջին տասնամյակում մի շարք պետություններ պաշտոնապես ճանաչեցին Հայոց ցեղասպանությունը, և այս գործընթացը դարձավ շարունակական⁸⁸: ԱՄՆ Կոնգրեսում այս հարցի արժարժումը և դրան զուգորդող քաղաքական-դիվանագիտական անցուղարձը Թուրքիայի քաղաքական վերնախավերի առաջ դրեցին Հայոց ցեղասպանության կամ, ինչպես Թուրքիայում են անվանում՝ «Հայկական հարցի» կապակցությամբ նոր մոտեցումներ ձևավորելու խնդիրը: 2000 թ. աշնանը Թուրքիայի Ազգային անվտանգության խորհուրդը (ԱԱԽ) ընդունեց երկու կարևոր որոշում. առաջին՝ Հայոց ցեղասպանության հարցը համարվեց Թուրքիայի ազգային անվտանգությանն առնչվող խնդիր, և երկրորդ՝ Թուրքիայի արտաքին գործերի նախարարությանը հանձնարարվեց

⁸⁸ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը, երկրների ցանկ, http://genocide.am/article/recognition_of_the_armenian_genocide.html?armenian

ամեն կերպ խոչընդոտել ԱՄՆ Կոնգրեսում Հայոց ցեղասպանության ընդունման քննարկումը⁸⁹:

Եթե Հայոց ցեղասպանությանը հետևած ինը տասնամյակները մասնագետները բնորոշում են որպես Թուրքիայում «լռության», «մոռացության» տարիներ, ապա սկսած 2000 թ.-ից՝ կարելի է խոսել հայկական «տաբու»-ի նահանջի և «լռության պատի» ճեղքման մասին: Այս նոր իրողության դրսևորումներից կարելի է համարել 1992 թ. Թաներ Աքչամի գրքի հրատարակումը⁹⁰ և 1996 թ. «Ակօս» թերթի հիմնադրումը Հրանտ Դինքի կողմից, ինչպես նաև թուրք նշանավոր իրավապաշտպան և գրահրատարակիչ Ռագըփ Ջարաթուլուի կողմից բազմաթիվ գրքերի հրատարակությունը Հայոց ցեղասպանության թեմաներով: Այս տասնամյակում թուրքական գրականության և հրապարակախոսության մեջ ի հայտ են եկել մի շարք հիշարժան անուններ (Էլիֆ Շաֆաք, Օրհան Փամուք, Քեմալ Յալչըն, Ֆեթիյե Չեթին և ուրիշներ), որոնց Հայոց ցեղասպանությանն առնչվող ելույթներն ու հրապարակումները որոշակի տարածում են գտել թուրքական հասարակության շրջանում: 2000-ականների թուրքական հասարակության մեջ հստակ գծագրվել են ինչպես ցեղասպանության ժխտողականության համար և հետևողական գերակայող կողմնակիցների, այնպես էլ սեփական պատմության հետ առերեսվելու, ճշմարտությունը վեր հանելու, ցեղասպանությունն ընդունելու կողմնակիցների պայմանական խմբավորումները: Էլիֆ Շաֆաքի կարծիքով՝ ժամանակակից թուրք հասարակության մեջ առկա է չորս մոտեցում ցե-

⁸⁹ **Սաֆրաստյան Ռ.**, «Հնարավոր չէ 21-րդ դարում պատմեշներ ստեղծել հարևանների միջև...», Երևան, 2003, էջ 41:

⁹⁰ Սանրամասն տե՛ս **Akçam T.**, Türk Ulusal Kimliği ve Ermeni Sorunu, Su Yayınları, İstanbul, 1992.

ղասպանության ճանաչման խնդրին. ա) ամենատարածվածը՝ տգիտություն և կոլեկտիվ մոռացություն, բ) կանխամտածված ժխտում և դիմադրություն (այս մոտեցման ազդեցիկ կրողների ձայներն առավել հնչեղ են), գ) երիտասարդների անտարբերություն՝ հետևյալ մտայնությամբ, թե իրենք պատասխանատու չեն անցյալում իրենց պապերի կատարածի կամ նույնիսկ չկատարածի համար, դ) ճանաչման համար պայքարողներ (մտավորականներ, իրավապաշտպաններ, ազատամիտ մարդիկ)⁹¹: Թուրքիայում իրենց «թուրք հայրենասերներ» ներկայացնող ուրացման կողմնակիցները ստվար բանակ են կազմում (ազգայնականներ, իսլամական ծայրահեղականներ), որոնց կարծիքով՝ իրենց «այսպես կոչված ցեղասպանության» մասին խոսողներն արդեն իսկ «ազգի դավաճան են»: Այս խմբում տարածված են հետևյալ տեսակետները. ա) հայերի և Արևմուտքի (քրիստոնյաների) պահանջը՝ ճանաչել ցեղասպանությունը, պայմանավորված է թուրքերին որպես բարբարոս ներկայացնելու ավանդական վերաբերմունքով, իսկ «թուրքի բարեկամը թուրքն է», բ) թուրքերը բացառիկ հանդուրժող են փոքրամասնությունների նկատմամբ, նրանց պատմության և պետական մշակույթի մեջ տեղ չունի Արևմուտքին բնորոշ ցեղասպանածին ռասիզմը (ցեղասպանությունը նույնացվում է նացիզմի հետ, բացակայում է պատկերացումը ցեղասպանությունների էության, տեսակների և տարբեր երկրներում դրա տարբեր դրսևորումների մասին), գ) հայերը ցեղասպանության հարցը

⁹¹ St´u **Abrahamian L.**, “My Journey from Hate to Hope: Talking with Turks and Armenians about the Genocide”. In Reader’s Digest Magazines, Canada Ltd, www.genocidewatch.org, pdf., **Հովհաննիսյան Ա.**, Թուրքիայի հանրության վերաբերմունքը Հայոց ցեղասպանության ճանաչման խնդրին, «ՎԷՄ» համահայկական հանդես, 2(38) ապրիլ-հունիս, Երևան, 2012, էջ 194:

արծարծում են Թուրքիայից փոխհատուցում և «հող» պահանջելու նպատակով (Ռեջեփ Թայիփ Էրդողանի պնդմամբ՝ «Հայերը մի ցավ ունեն` թուրքերից հատուցում պոկել»), դ) Հայոց ցեղասպանության ճանաչումը «Պանդորայի արկղը բացելու» վտանգ է պարունակում, քանի որ կպահանջվի վերանայել հանրապետության հիմնադրման, քենալականության, պետական գաղափարախոսության, քաղաքական ռեժիմի, երկրի ղեկավարների գործունեության գնահատման, բանակի դերի, ուսումնական ծրագրերի արդյունավետության տարաբնույթ հիմնահարցերը, ինչը երկրում ցնցումների առաջացման պատճառ կարող է դառնալ, ե) պետք է առաջ գնալ` չսևեռվելով ցավոտ անցյալի վրա, նվազագույն չափով գործակցել Հայաստանի և հայկական Սփյուռքի հետ` ելնելով Թուրքիայի պրագմատիկ շահերից, գ) ճանաչման գործընթացն ընկալվում է որպես Արևմուտքի` Թուրքիայի նկատմամբ ավանդական թշնամանքի արտահայտություն, ճնշում կամ պատրվակ` Թուրքիան ԵՄ չընդունելու համար⁹²:

2002 թ. նոյեմբերի 3-ին Թուրքիայում տեղի ունեցած խորհրդարանական ընտրություններում հաղթեց «Արդարություն և զարգացում» կուսակցությունը` հավաքելով ընտրողների ձայների շուրջ 34%-ը: ԱԶԿ-ն ստացավ Թուրքիայի Ազգային մեծ ժողովի տեղերի մեծամասնությունը: Նրա հիմնական քաղաքական հակառակորդը` Հանրապետական ժողովրդական կուսակցությունը, դարձավ խորհրդարանական ընդդիմություն: Մյուս կուսակցությունները 10 տոկոսանոց ընտրաշեմը

⁹²Տե՛ս **Özkoray E.**, “Ermeni soykırımı niçin hâlâ tabu?”, 10.03.2010, <http://www.kuyerel.net/modules/AMS/index.php?storytopic=138&start=22>, ինչպես նաև **Հովհաննիսյան Ա.**, նշվ. աշխ., էջ 195:

չհաղթահարեցին: ԱԶԿ-ն ձևավորեց միակուսակցական կառավարություն, ինչը նորություն էր 1987 թ. սկսած: Գալով իշխանության՝ ԱԶԿ-ն գտնվում էր ներքին անհամաձայնությունների և տարածայնությունների մեջ: Այդ իրավիճակը հետազոտողներին ստիպել է գնահատել այն իբրև «միակուսակցական» կոալիցիա: ԱԶԿ-ն նոր քաղաքական ուժ էր, և ինչպես նշում էր թուրք հետազոտող Դիբա Նիգյար Գյոքսելը. «ԱԶԿ-ն քիչ փորձ ուներ արտաքին քաղաքականության ասպարեզում, և դժվարությամբ էին ձևավորվում հարաբերությունները պետական կառույցների, այդ թվում ԱԳՆ-ի և ռազմական գերատեսչության հետ, որոնք բավական հռետեստորեն էին տրամադրված նոր կուսակցության հանդեպ»⁹³:

ԱԶԿ գաղափարախոսության արտաքին քաղաքականության բաժինը մշակել է պրոֆեսոր, հետազայում արտաքին գործերի նախարար, ապա նաև վարչապետ դարձած Ահմեթ Դավութօղլուն, որի տեսությունը ստացել է «Ռազմավարական խորություն» անվանումը՝ ենթադրելով քաղաքական ուղեգծի էական փոփոխություններ: Ա. Դավութօղլուն իրենց իշխանության գալուց առաջ Թուրքիայի քաղաքական կերպարը բնութագրել է որպես ֆիզիկապես ուժեղ, սակայն միջակ ինտելեկտուալ կարողություններով օժտված, ինքնավստահության պակասով տառապող միջազգային խաղացողի⁹⁴: Իր հիմնարար աշխատություններից մեկում Ա. Դավութօղլուն կարևորել է թուրքական նոր արտաքին քաղա-

⁹³ Гоксел Д., Кавказская политика Турции, Кавказское соседство. Турция и Южный Кавказ, Ереван, 2008, с. 15.

⁹⁴ St'u **Seker N.**, "A Shift in Turkish Foreign Policy: Turkey's Strategic Depth", Qantara, 07.08.2009, <http://en.qantara.de/content/a-shift-in-turkish-foreign-policy-turkeys-strategic-depth>

քականության այնպիսի սկզբունքները, ինչպիսին են ներքին անվտանգության և ժողովրդավարության համակշռումը, հարևանների հետ «գրո խնդրի» հրամայականը, աշխարհի ուժային բևեռների հետ հարաբերություններում փոխլրացման քաղաքականության կիրառումը, դիվանագիտության «ռիթմիկ» բնույթը⁹⁵:

Վերոհիշյալ սկզբունքների՝ շուրջ տասնամյա դիվանագիտության կենսագործման իրական արդյունքի մասին է վկայում ՀՀ Արտաքին գործերի նախարար Էդուարդ Նալբանդյանի՝ Ուրուգվայում արած և ստորև մեջբերվող հայտարարությունը. «Թուրքիայի արտգործնախարարը խոսում է այն մասին, որ երեք հարևան երկրների հետ իրենք ոչ այնքան լավ հարաբերություններ ունեն: Բայց, կարծում են, նա այնքան էլ անկեղծ չէ, առնվազն երկու անգամ ավելի շատ է երկրների թիվը, որոնց հետ այնքան լավ հարաբերություններ չունեն, առնվազն վեցի հետ, իսկ վեցից երկուսի հետ ընդհանրապես հարաբերություններ չունեն»⁹⁶:

Գիտագործնական հետաքրքրություն ներկայացնող այն հարցերը, թե ի՞նչ քաղաքականություն է սկսել իրականացնել ԱԶԿ-ն Հայաստանի հետ հարաբերություններում և Արցախյան հիմնախնդրի համատեքստում՝ մասնավորապես, որտե՞ղ է ցուցաբերել նոր և ինքնուրույն մոտեցումներ և որտե՞ղ է հետևողականորեն շարունակել նախորդ կառավարությունների որդեգրած

⁹⁵Տե՛ս **Davutoğlu A.**, Turkey's Foreign Policy Vision: An Assessment of 2007*, <http://arsiv.setav.org/ups/dosya/9595.pdf>, Davutoğlu A., Stratejik Derinlik, Türkiye'nin Uluslararası Konumu, İstanbul, Kure Yayınları, Altmışdördüncü Basım, İstanbul, 2011:

⁹⁶ՀՀ ԱԳ նախարար Է. Նալբանդյանի խոսքը և պատասխանները հարցերին Ուրուգվայի արտգործնախարար Լուիս Ալմագրոյի հետ համատեղ մամուլի ասուլիսի ժամանակ, http://www.mfa.am/hy/interviews/item/2012/05/04/nalbandian_almagro/

գիծը, հայ արևելագիտության մեջ ուսումնասիրվել են բավական մանրամասնորեն: Հետազոտողները համաձայն են, որ իր քաղաքական նոր դոկտրինի իրականացման ճանապարհին ԱԶԿ-ն իշխանության տասնամյա շրջանում փորձել է խուսանավել նոր, զգույշ քայլերի և Հայաստանի անկախության առաջին օրերից որդեգրած քաղաքական մոտեցումները շարունակելու միջոցով: Ռուբեն Սաֆրաստյանը 2007 թ. դեկտեմբերի 19-20-ին ՀՀ Ազգային ժողովում անցկացված խորհրդարանական լսումներում ուշադրություն էր հրավիրել ակտիվ ԱԶԿ-ական գործիչներից մեկի՝ տնտեսագետ Ալի Բաբաջանի (որը հետագայում դարձավ Թուրքիայի արտգործնախարար) հայտարարությանը, որտեղ նա ասել էր, որ իշխանության գալուց հետո «ԱԶԿ-ն պետք է փորձի Հայաստանի հետ հարաբերությունների հիմքում դնել ոչ թե քաղաքական, այլ տնտեսական խնդիրները, տնտեսական հետաքրքրությունները»⁹⁷:

Մի կողմից՝ նպատակ ունենալով շարունակաբար առաջ մղել Հայոց ցեղասպանության ժխտման գործընթացը և սատարել Ադրբեյջանի դիրքորոշումները Ղարաբաղյան հիմնախնդրում, մյուս կողմից՝ փորձելով ժամանակին համարժեք արձագանք տալ եվրոպական մայրաքաղաքներում ծավալվող Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման գործընթացներին, վարչապետ Էրդողանը 2002թ. դեկտեմբերին Եվրահանձնաժողովի նախագահ Ռոմանո Պրոդիի՝ Անկարա կատարած պաշտոնական այցի շրջանակներում տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ հայտարարեց. «Նախ և առաջ մենք պետք է պատասխանենք այն

⁹⁷ Տե՛ս Սաֆրաստյան Ռ., Հայ-թուրքական հարաբերություններ, հիմնախնդիրներ և հեռանկարներ (զեկուցում), խորհրդարանական լսումներ, 19-20 դեկտեմբերի 2007 թ., Երևան, 2011, էջ 64:

հարցին, թե եղել է արդյոք ցեղասպանություն, թե ոչ: Այս խնդիրը հնարավոր չէ լուծել առանց հարցի պատասխանը գտնելու»⁹⁸: ԱԶԿ առաջնորդի և երկրի վարչապետի այս պատասխանը կարող էր տպավորություն ստեղծել, թե առաջին անգամ է, երբ բարձրաստիճան թուրք պետական գործիչը միանշանակորեն չի հերքում Հայոց ցեղասպանության փաստը: Սակայն ժամանակը ցույց տվեց, որ այս և նման հայտարարություններն ավելի շուտ նպատակաուղղված էին Հայոց ցեղասպանության հարցը քննարկումների և վիճաբանությունների հոգեմաշ դաշտ տեղափոխելուն, ինչի արդյունքում շահում էր գործնական թուրքական (և ադրբեջանական) դիվանագիտությունը: Այդ հայտարարությունը ազդանշան էր Եվրոպական միությանը՝ անդամակցության բանակցություններում շահեկան և կառուցողական դիրքում երևալու նպատակով: Հայաստանի և Թուրքիայի արտաքին գործերի նախարարների հանդիպումները տարբեր միջազգային ձևաչափերի շրջանակներում շարունակվել են նաև ԱԶԿ իշխանության գալուց հետո, ընդ որում, դրանք 2002-2005 թթ. որոշակիորեն աշխուժացել են՝ յուրաքանչյուր դեպքում լուծելով ավելի շուտ կոնկրետ դիվանագիտական խնդիրներ: Այդ հանդիպումներին անդրադարձել է ՀՀ նախկին արտգործնախարար Վարդան Օսկանյանն իր «Անտեսված դասերում»: 2003 թ. Մադրիդում ՆԱՏՕ Համագործակցության խորհրդի նախագահական նիստին Թուրքիայի արտգործնախարար Աբդուլլահ Գյուլը, սեփական նախածեռնությամբ հանդիպելով Հայաստանի արտգործնախարար Վարդան Օսկանյանին, ասել էր, որ հայ-թուրքական հարաբերությունները պետք չէ կապել Ադրբե-

⁹⁸Erdoğan-Prodi Görüşmesi, 21.11.2002, <http://www.abgs.gov.tr/index.php?p=23361&1=1>

ջանի հետ և որ լուծելով երկկողմ խնդիրները՝ դրանով կարող են նպաստել դարաբաղյան խնդրի լուծմանը: Օսկանյան-Գյուլ երկրորդ հանդիպումը տեղի է ունեցել 2003 թ. սեպտեմբերի 25-ին ՄԱԿ Գլխավոր ասամբլեայի շրջանակներում: Վ. Օսկանյանի գնահատմամբ՝ այն մի քայլ հետ էր նախորդից: Ա. Գյուլը պնդել էր, որ Լեռնային Ղարաբաղի հարցն անպայման ներառվի քննարկումների օրակարգում, ինչին Վ. Օսկանյանը պատասխանել էր, որ խնդիր չի տեսնում այնքան ժամանակ, քանի դեռ հայ-թուրքական հարաբերությունները չեն կապվում ԼՂ հակամարտության կարգավորման հարցին: Երկուստեք համաձայնությամբ ձեռք էր բերվել պայմանավորվածություն, որ հաջորդ հանդիպմանը կողմերը կներկայանան ցուցակներով, որտեղ կներկայացվեն երկու երկրների կողմից ձեռնարկվելիք փոքր քայլերը, կգտնվեն ընդհանուր հետաքրքրություններ և կպարզեն, թե որտեղից կարելի է սկսել փոքր քայլերի իրականացումը: Երրորդ հանդիպումը տեղի ունեցավ 2003 թ. դեկտեմբերի 5-ին Բրյուսելում, որտեղ հայկական կողմը ներկայացրեց խոստացած ցուցակը (բաղկացած՝ տասը կետից), իսկ թուրքական կողմը որևէ ցուցակ չներկայացրեց: Այսուհանդերձ, Ա.Գյուլն ասել էր, որ հայկական ցուցակի առնվազն առաջին մի քանի կետերի իրականացման հարցում որևէ խնդիր չի տեսնում⁹⁹: Սակայն այդ դրական միտումն ի չիք եղավ հաջորդ տարվա ապրիլին Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի՝ Թուրքիա կատարած այցի արդյունքում: 2004 թ. հունիսի 28-ին Ստամբուլում ՆԱՏՕ գազաթաժողովին Աբդուլլահ Գյուլն իր հայ պաշտոնակցին ասաց, որ Թուրքիան որոշել է, որ քայլեր չի ձեռնարկի՝ մինչև Լեռնային

⁹⁹Տե՛ս Օսկանյան Վ., Անտեսված դատեր, 02.04.2012, <http://www.mediamax.am/am/column/12231/>

Ղարաբաղի հարցում շոշափելի առաջընթաց չլինի: Կարելի է համաձայնել այն տեսակետին, որ Թուրքիայի իշխանությունները երբեմն պարզապես թերագնահատել են Ադրբեջանի գործոնը և լծակները Թուրքիայի վրա ազդեցության առումով, պաշտոնական Անկարան հետքայլեր է կատարել հարաբերությունների բարելավման դիրքորոշումից¹⁰⁰:

Հայաստանի արտգործնախարարի հետ Թուրքիայի արտգործնախարարի հանդիպումներն ուշադրությամբ ուսումնասիրել ու լուսաբանել են թուրք վերլուծաբանները: Քանի որ քննարկման կարևորագույն հարցերն էին դիվանագիտական հարաբերությունների հաստատումը, սահմանի բացումը, թուրքական կողմն առաջադրում էր հետևյալ նախապայմանները. ա) հրաժարվել պատմական թշնամանքից և ցեղասպանության մեղադրանքներից՝ այդ հարցի քննարկումը թողնելով պատմաբաններին, բ) հրաժարվել ՀՀ Սահմանադրության մեջ առկա Թուրքիայի նկատմամբ հողային պահանջներից (թուրքական կողմը նկատի ուներ Հայաստանի անկախության մասին հռչակագիրը, որը նշվում է ՀՀ Սահմանադրության ներածական մասում, գ) հայկական ուժերը դուրս բերել Լեռնային Ղարաբաղի տարածքից, դ) ստեղծել անվտանգության միջանցք Ադրբեջանի և Նախիջևանի միջև¹⁰¹: Միևնույն ժամանակ, Թուրքիայի պաշտոնական դիվանագիտության երկխոսությունը Հայաստանի հետ արժանանում էր երկրի ներսում քաղաքական ընդդիմության խիստ քննադատությանը,

¹⁰⁰Տե՛ս **Իսրայելյան Ա.**, Թուրքիայի արտաքին քաղաքականության առանձնահատկությունները Արդարություն և զարգացում կուսակցության կառավարման առաջին տասնամյակում (2002-2012թթ.), թեկնածուական ատենախոսություն, Երևան, 2013, էջ 100:

¹⁰¹Տե՛ս **Lütem Ö. E.**, Ermenistan'in yeni hükümeti,

<http://www.eraren.org/index.php?Page=Dergilcerik&IcerikNo=56>:

ինչը ստիպում էր վարչապետ Էրդողանին և նրա շրջապատին ակնհայտորեն անընդհատ խուսանավել՝ անելով խիստ հայտարարություններ երկրի ներսում և միաժամանակ արտերկրում Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման ուղղությամբ «բարի կամքի» կեղծ փորձեր ցուցադրելով:

21-րդ դարասկիզբը նշանավորվեց հայ-թուրքական հասարակական երկխոսության նոր փորձով: Ստեղծվեց Հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողովը (այսուհետ՝ ՀԹՀՀ): ՀԹՀՀ-ն հիմնադրվել է 2001 թ. հուլիսին ժնկում: Հանձնաժողովի աշխատանքի հիմքը կազմում էին հանդիպումներն ու քննարկումները սահմանի բացման, տնտեսական, մշակութային հարաբերությունների վերաբերյալ: Հանձնաժողովի անդամներն էին Գյունդուզ Աքթանը (Անկարա), Ուսթյուն Էրգուդերը (Ստամբուլ), Սադի Էրգուվենչը (Ստամբուլ), Օզդեմ Սանբերկը (Ստամբուլ), Իլթեր Թուրքմենը (Ստամբուլ), Ալեքսանդր Արզումանյանը (Երևան), Ղավիթ Հովհաննիսյանը (Երևան), Վան Գրիգորյանը (Նյու Յորք) և Անդրանիկ Միհրանյանը (Մոսկվա): Հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողովի ստեղծման նախաձեռնությունը ԱՄՆ Պետական դեպարտամենտինն էր, որն այդ գործը հանձնարարեց խորհրդատու Ղևիդ Ֆիլիպսին՝ ժողովրդական դիվանագիտության մի փորձագետի, որի գործունեությունը՝ Կիպրոսի հունական ու թուրքական համայնքների միջև երկխոսության զարգացման, ինչպես նաև Հունաստան-Թուրքիա երկխոսության ծավալման ոլորտներում «հաջող» էր գնահատվել, և ով հայտնի էր Թուրքիայի քրդերի իրավունքների հարցի՝ իր կատարած ուսումնասիրություններով: ՀԹՀՀ ստեղծման գաղափարն ընդունվել էր մի ժամանակաշրջանում, երբ միջազգային հանրության, տարբեր երկրների քաղաքական, հասարակական և գիտական շրջանակ-

ների հետաքրքրությունը Հայոց ցեղասպանության ճանաչման հիմնախնդրի վերաբերյալ բավական մեծացել էր: 2000 թ. ԱՄՆ Կոնգրեսը, մասնավորապես հայկական կազմակերպությունների ջանքերով, աննախադեպ մոտ էր թվում Հայոց ցեղասպանությունը դատապարտող բանաձևի ընդունմանը, որին իրենց սատարումն էին արտահայտել թե՛ դեմոկրատ, թե՛ հանրապետական պատգամավորները: Սակայն բանաձևը վերջին պահին հանվեց օրակարգից, որովհետև նախագահ Բիլ Բլինթոնը, հակառակ իր նախընտրական խոստումների, բացասական դիրք գրավեց դրա ընդունման հարցում և, զանգահարելով Կոնգրեսի խոսնակ Դ. Հասթերթին, խնդրեց չընդունել այդ բանաձևը, որովհետև այն հակասում էր ԱՄՆ տարածաշրջանային շահերին¹⁰²: Այդ քայլը խոր հիասթափություն էր առաջացրել ամերիկահայության շրջանում, սակայն չէր ազդել միջազգային մասշտաբով Հայոց ցեղասպանության ճանաչմանն ուղղված գործընթացների վրա: Օրինակ, Եվրոպական խորհրդարանը 2000 թ. նոյեմբերի 15-ին կրկին դատապարտող որոշում էր ընդունել¹⁰³: Ֆրանսիայի խորհրդարանը նոյեմբերի 7-ին նույնպես ճանաչել և դատապարտել էր Հայոց ցեղասպանությունը¹⁰⁴:

Ամերիկյան շահերն այս հարցում հանգում էին հետևյալ դրույթներին.

¹⁰² ԱՄՆ նախագահ Բ. Բլինթոնի նամակը Կոնգրեսի խոսնակ Դ. Հասթերթին, <http://www.anca.org/596-hastert.html>

¹⁰³ Եվրոպական խորհրդարանի 2000 թ. նոյեմբերի 15-ի A5-0297/2000 բանաձևը, http://www.anca.org/genocide_resource/recognition.php#EuropeanParl

¹⁰⁴ Ֆրանսիայի Սենատի 2000 թ. նոյեմբերի 7-ի հ. 22 որոշումը, http://www.armenian-genocide.org/Affirmation.154/current_category.7/affirmation_detail.html

- Տարածաշրջանն իր համար դարձնել բաց և կանխատեսելի : Ապահովել այնպիսի իրավիճակ, որ որևէ գերտերություն չկարողանա վերահսկել Կովկաս-Կենտրոնական Ասիա տարածաշրջանը: Համաշխարհային հանրությունը պիտի անարգել ֆինանսատնտեսական մուտք ունենա տարածաշրջան: Այս ամենը հնարավոր կդառնա միայն նավթամուղների ու ցամաքային տրանսպորտի այլ միջոցների անխափան աշխատանքի դեպքում, որոնք տարածաշրջանը պետք է կապեն համաշխարհային տնտեսական կենտրոնների հետ:

- Կովկասյան «pax Americana» հաստատելով՝ ապահովել իր մուտքը նաև եվրասիական միջնաշխարհի հանդիսացող Կենտրոնական Ասիա: Տարածաշրջանում որևէ գերտերության գերիշխանության բացակայության պարագայում այստեղ աստիճանաբար ձեռք բերել գերակա դիրք:

- Գերիշխել էներգակիրների շուկայում՝ դրանով իսկ թուլացնելով նավթարդյունաբերող արաբական երկրների կշիռը: Համաձայն Զբիգնև Բժեգինսկու, ԱՄՆ-ը կովկասյան քաղաքականության մեջ առավել մեծ ուշադրություն պետք է դարձնի Ադրբեջանին, որը կասպիական ավազանի դարպասն է:

- Տարածաշրջանները կտրել ռուսական ազդեցության ոլորտից և սեպածն մխրձվել Ռուսաստանի և Զինաստանի հետաքրքրությունների շփման գոտի¹⁰⁵:

Սրան պետք է հավելել ռուս վերլուծաբաններից մեկի կարծիքը, որի համաձայն «Կայուն հարաբերությունները և սահմանների բացումը Թուրքիայի և Հայաստանի միջև և դարաբաղյան հակամարտության կար-

¹⁰⁵ Տե՛ս **Անանյան Ա.**, Հայ-թուրքական երկխոսության նոր փորձ (թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովի գործունեության մասին), Երևան, 2003, էջ 31-32:

գավորումը կարելի է դիտարկել որպես անհրաժեշտ փուլ կոմունիկացիոն պլացդարմի ստեղծման համար Իրանի դեմ ռազմական գործողությունների դեպքում»¹⁰⁶:

Այս պայմաններում հայ-թուրքական հասարակական երկխոսության խթանումը գնահատվում էր որպես օգտակար երևույթ, որովհետև, մի կողմից, ցույց էր տալիս, որ ԱՄՆ-ը և նրա դաշնակիցները կողմ են այդ երկխոսության միջոցով Հայոց ցեղասպանությանն առնչվող խնդիրների շուրջ փոխադարձաբար ընդունելի լուծում գտնելուն, մյուս կողմից՝ այդ երկխոսության ծավալումն արդարացնում էր գործադիր իշխանությունների կեցվածքը՝ չկատարելու պաշտոնական քայլեր, որոնք կհակասեին ԱՄՆ դաշնակից թուրքիայի արմատական շահերին: Մյուս կողմից՝ թուրքիայի հասարակության ներսում աննախադեպ մեծացած հետաքրքրությունը պատմական անցյալի նկատմամբ, ինչն, ինչպես պարզվեց, լրության է մատնվել և նենգափոխվել նախորդ շատ տասնամյակների ընթացքում, հանգեցրեց մի մթնոլորտի, երբ քաղաքական իշխանությունները պարտավոր էին որոշակի քայլերի դիմել խնդրի միջազգայնացման մթնոլորտում թուրքիայի կողմից համարժեք արձագանքների համար, ինչի հնարավոր մի դրսևորում էլ գնահատվեց ՀԹՀՀ գործունեությունը: Հայ-թուրքական երկխոսության համակարգված ծրագրի հեղինակ Դևիդ Ֆիլիպսը, բնութագրելով առկա տրամադրությունները հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողովի ձևավորման սկզբնական փուլում, կարևոր դիտարկում է արել թուրքիայում տիրող հասարակական մտայնութ-

¹⁰⁶ **Арешев А.**, «Внешний фактор» на Кавказе и российско-армянское сотрудничество, Россия-Армения: Перспективы углубления стратегического партнерства, Российской институт стратегических исследований, Москва, 2010, стр. 51.

յունների մասին. «Ինչո՞ւ է Թուրքիան այդպես ցավագին արծազանքում ցեղասպանության միջազգային ճանաչմանը: Թուրքերը հրաժարվում են ճանաչել ցեղասպանությունը, որովհետև ճանաչումը հակասում է իրենց ազնիվ կերպարի մասին սեփական ընկալմանը: Վիրավորական է դատվել միջազգային հանրային կարծիքի դատարանում այն իրադարձությունների համար, որոնք տեղի են ունեցել անգամ Թուրքիայի Հանրապետության ստեղծումից առաջ: Միաժամանակ, Թուրքիայի կառավարությունը վախենում է, որ արշավը փոխհատուցման կամ տարածքային պահանջների իրավական հիմք է ստեղծում: Անկարան նաև անհանգստանում է, որ Հայաստանը ցանկանում է հետ ստանալ նախնիների տարածքները, օրինակ՝ Արարատ լեռը: Թուրք ազգայնականները դեռ համոզված են, որ երկիրը շրջապատված է թշնամական ուժերով, որոնք փորձում են այն ոչնչացնել»¹⁰⁷:

ՀԹՀ գործնական բանակցությունների սկիզբն, ի տարբերություն նախապատրաստական շրջանի Վիեննայում անցած հանդիպման, շատ ավելի քաղաքական էր: Դ. Ֆիլիպսը պնդում է. «Լուռ համաձայնություն տալով իսկության և հաշտեցման գործընթացին՝ Թուրքիայի և Հայաստանի իշխանություններն իրավամբ հետաքրքրված էին արդյունքով: Երկուսն էլ «ոչ պաշտոնական» ներկայացուցիչների ուղարկեցին քննարկումներին հետևելու համար»¹⁰⁸:

Իր գրքի վերջաբանում Դ. Ֆիլիպսն այսպես է ամփոփել ՀԹՀ գործունեության արդյունքները: Ըստ նրա՝ ՀԹՀ-ը.

¹⁰⁷ Ֆիլիպս Դ., Բարձրացնելով անցյալը, Երևան, 2010, էջ 58:

¹⁰⁸ Նույն տեղում, էջ 60:

- հաստատեց կառուցողական երկխոսություն և բացեց դռները քաղաքացիական հասարակության հայ և թուրք ներկայացուցիչների համար,

- խթանեց դիվանագիտական կապը թուրք և հայ պաշտոնյաների միջև,

- (ցեղասպանության հարցի լուծման նկատառումներով) իր գործունեությամբ սկիզբ դրեց Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի հետ աշխատանքներին,

- առաջադրեց սահմանների բացման սկզբունքային և պայմանագրային հիմքեր կրող մոտեցումներ: Չնայած առաջընթացին՝ հարաբերությունները Թուրքիայի և Հայաստանի, ինչպես նաև Ադրբեջանի և Հայաստանի միջև մնում են անկայուն: Տարակարծությունները հեշտությամբ կարող են ապահովել զարգացումների հետընթաց կամ նպաստել բռնության ելք թելադրող իրադարձությունների¹⁰⁹:

Հայ-թուրքական երկխոսության հետագա զարգացման տրամաբանությունը (մասնավորապես, ԱՄՆ մոտեցումները) հասկանալու համար կարևոր են ՀԹՀՀ գործունեության արդյունքում ձևակերպված հայ-թուրքական հարաբերությունների հանձնարարականները համապատասխան կառավարություններին (2004 թ. ապրիլի 14-ին), որոնք ենթադրում էին պաշտոնական շփումների շարունակականություն ու զարգացում, հայ-թուրքական սահմանի բացում (պետք է իրականացվեր 2004 թ.), երկու երկրների պետական մակարդակով աջակցություն քաղաքացիական հասարակության կրթությանը, գիտությանը, մշակույթին և զբոսաշրջությանն ուղղված ծրագրերին, առողջապահության ոլորտում համագործակցության մեխանիզմների հաստատում,

¹⁰⁹ Նույն տեղում, էջ 206:

Թուրքիայի և Հայաստանի միջև առկա անվտանգության և վստահության կառուցողական միջոցների հետագա զարգացում, կրոնական փոխըմբռնման խրախուսում, հայ և թուրք ժողովուրդներին՝ իրենց կառավարությունների՝ անցյալի դժվարությունները հաղթահարելուն ուղղված քայլերի հանդեպ վստահության աճ¹¹⁰:

Թուրքական մամուլում լայնորեն տարածված են այնպիսի հրապարակումները, որոնցում Հայոց ցեղասպանության ճանաչման հիմնական նախաձեռնող է համարվում տարբեր երկրների իշխանությունների հսկողության տակ գտնվող հայկական Սփյուռքը, իսկ Հայաստանի կառավարությունը «ստիպված է հետևել սփյուռքահայերի պահանջներին, քանի որ գոյատևում է միայն Սփյուռքից ստացվող մարդասիրական օգնության հաշվին»¹¹¹:

«Միլլիյեթ» թերթը մեջբերում է արել Թուրքական պատմագիտական ընկերության (Türk Tarih Kurumu) նախկին ղեկավար Յուսուֆ Հալաչօղլուի աշխատությունից, որտեղ հայերն են մեղադրվում կոտորածների մեջ և իբր այնուհետև է որոշվել «տեղահանության ենթարկել» ողջ հայությանը: Ըստ Հալաչօղլուի՝ բռնագաղթված 436758 հայից աքսորավայր են հասել 382148-ը, մնացածները՝ մահացել սովի և համաճարակի պատճառով, և նախապես «հայ ավազակախմբերի» կողմից հարձակման ենթարկված թուրքերի որոշ խմբեր

¹¹⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 210-212:

¹¹¹ Soykırım tasarısının mimarı Bu davadan vazgeçmeyeceğiz, “Milliyet”, 22.10.2000: Ակնհայտ է, որ հողվածագիրը, ինչպես և թուրք հեղինակների ճնշող մեծամասնությունը, չի անդրադարձել այն հարցին, թե ինչու է առաջացել հայկական Սփյուռքը:

են հարձակվել քարավանների վրա, սպանվել է 9-10 հազար հայ¹¹²:

Հարձակումների առումով հատկանշական է «Սթար» թերթի 2001 թ. ապրիլի 21-25-ի համարներում հրապարակված հոդվածաշարը՝ Հալիթ Քաքընչ ստորագրությամբ: Ահա թե ինչ է մասնավորապես գրում հոդվածագիրը. «Ժամանակին Բյուլենթ Աքարջալը («Մայր հայրենիք» կուսակցության ակտիվ գործիչ) «Հայերի պնդումներին դիմակայելու և դրանց ազդեցությունը սահմանափակելու գործունեության ծրագիր» էր մշակել: Ծրագիրը պաշտոնական շրջանակների ուշադրությանը չարժանացավ և մոռացության տրվեց: Ես այդ ծրագրի շրջանակներն ընդարձակում եմ և հետևյալ ձևակերպումն եմ առաջարկում. «Հանուն Թուրքիայի ու Ադրբեջանի Հայաստանին անկյուն խցկելու ծրագիր»: Ի՞նչ կարելի է կատարել այս ծրագրի շրջանակներում: Եկեք տեսնենք: Նախ պարտավոր ենք վերացնել Հայաստանի շրջափակումը... Պետք է ազատ արձակենք ելքն ու մուտքը Թուրքիա, թերևս դրանով էլ մեր ձեռքն ենք վերցնելու թե՛ հայերի միջի գորբաների և թե՛ սփյուռքի խարդախ ազգակիցների դեմ նրանց նախագուշացնելու առաքելությունը... Ինչպես ԱՄՆ-ը Սադամի դեմ քարոզարշավ է ծավալում, մենք էլ հայ ժողովրդին բացատրենք, որ Քոչարյանի հեռացումն ու Թուրքիայի նկատմամբ թշնամական դիրքորոշումից Սփյուռքի հրաժարվելը նրա փրկության միակ ձևն են: Չպետք է վախենանք ցեղասպանության պնդումների քննարկումից: Ընդ որում, համատեղ ենք մշակելու Հայաստանի հայերին տեր կանգնելու մեր քաղաքականությանը: Այս դեպքում դժվարություններին միասին կդիմակա-

¹¹²Տե՛ս **Yilmaz Ö.**, Evet (10.000 ERMENİ) katledildi, 18.05.2001, <http://www.milliyet.com.tr/2001/05/18 /yasam/yas11.html>

յենք: Պատերազմը վերջին միջոցն է, որին կարելի է դիմել: Խելոք մարդիկ պարտավոր են խելամիտ լուծումներ առաջադրել»¹¹³:

2003 թ. Եվրոպական միությունն ընդունեց Եվրոպական անվտանգության ռազմավարությունը: Եվրոպայի Նոր հարևանության քաղաքականության շրջանակներում նոր մակարդակի հարաբերություններ հաստատվեցին Բելառուսի, Ուկրաինայի, Մոլդովայի, Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի հետ: Այս երկրների համար այդ հարաբերությունները սկսեցին բնորոշվել «Եվրոպական ինտեգրում» ընդգրկուն հասկացությամբ: Եվրոպական ինտեգրման, ինչպես նաև ԵՄ-ին Թուրքիայի հնարավոր անդամակցության ընդհանուր քաղաքականության մեջ հնարավոր համարվեցին հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը և սահմանների բացումը: Այս քաղաքական գործընթացի վերաբերյալ Հայաստանի պաշտոնական քաղաքական դիրքորոշումն է արտահայտել այն ժամանակ ՀՀ պաշտպանության նախարար, ՀՀ նախագահին առընթեր Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Սերժ Սարգսյանը: Նա, մասնավորապես, գրում էր. «Մենք գոհունակությամբ ենք նշում, որ Եվրամիության որդեգրած եվրոպական հարևանության քաղաքականությունը Հարավային Կովկասում ներառում է բոլոր երեք պետությունները՝ Հայաստանը, Ադրբեջանը և Վրաստանը, բայց միաժամանակ սթափորեն գիտակցում ենք, որ նրանցից ոչ մեկը մոտ ապագայում չի կարող հուսալ, թե ներառված կլինի ներկայումս ընթացող Եվրամիության ընդլայնման ժամանակացույցում: Սա-

¹¹³ **Չաքրյան Հ.**, Թուրքական թերթը հայ ժողովրդի փրկության «հոգսերով» առաջարկում է հեռացնել Քոչարյանին, 18.05.2001, http://www.azg.am/wap/?nl=AM&id=2001051605&Base_PUB=0

կայն Եվրոպական հարևանության քաղաքականությունը և, դա մեր տեսակետից հույժ կարևոր է, դուռը բաց է պահում, որպեսզի յուրաքանչյուր հարավկովկասյան պետություն կարողանա դրսևորել իր եվրոպամետ ձգտումները: Հենց այս չափողականությամբ է Հայաստանի համար գործնականորեն հետաքրքրական Եվրամիությանն անդամակցելու համար երկխոսություն սկսելու Թուրքիայի նպատակադրումը: Հայկական քաղաքականության պրագմատիզմի, ռազմավարական նկատառումների էությունը դրական վերաբերմունքն է այն անհրաժեշտությանը, որ Թուրքիայում պարտադիր կերպով ստուգվի հասարակության ու նրա քաղաքական-իրավական համակարգի խստիվ համապատասխանությունը Եվրամիության պահանջներին՝ ինչպես ազատ շուկայական տնտեսության ստանդարտների ու վերսահմանային հաղորդակցությունների ազատության, այնպես էլ մարդու անհատական ու կոլեկտիվ իրավունքների պահպանման բնագավառներում: Այս առումով Թուրքիայի՝ Եվրամիության տվյալ պահանջների ընդունման ու կատարման կոնկրետ դրսևորումը կարող է լինել Կարս-Գյումրի երկաթուղով ազատ միջսահմանային երթևեկության վերականգնմամբ հայ-թուրքական սահմանի ապաշրջափակումը և, վերջին հաշվով, առանց որևէ նախապայմանների ու առնչումների Հայաստանի ու Թուրքիայի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատումը»¹¹⁴:

Եվրոպական միությանը Թուրքիայի հնարավոր անդամակցության ծիրում հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հնարավորությանը (նաև

¹¹⁴ **Սարգսյան Ս.**, Հայ-թուրքական միջպետական հարաբերությունները Եվրաինտեգրման հրամայականների լույսով, Հայաստան-Թուրքիան բաց խոսակցություն, Երևան, 2005, էջ 28:

Արցախյան հիմնախնդրի դիսկուրսին) է անդրադարձել Անկարայի միջազգային ռազմավարական հետազոտութ-յունների կազմակերպության տնօրեն, ճանաչված վերլուծաբան Սեդաթ Լաչիները: Նրա կարծիքով՝ այդ հնարավորությանը պետք է նայել Հայաստանի անվտանգության ընկալման և սփյուռքահայերի՝ թուրքերի հանդեպ նախապաշարմունքների տեսանկյունից: Նա գրում է. «2,5-ից 3 միլիոնանոց բնակչությամբ Հայաստանի պետությունը շրջապատված է ավելի քան հարյուր միլիոնանոց թուրքական բնակչությամբ և ավելի քան 10 տարի ապրում է «թուրքական սպառնալիքի պատկերացումներով»: Դժբախտաբար, որոշ արմատական խմբեր և որոշ երկրներ սնում են այս ընկալումը: Թեպետ, որևէ հայկական տարածք գրավված չէ, և նույնիսկ ընդհակառակը, այս վախը շարունակում է իշխել, և որոշ ազդեցիկ շրջանակներ Հայաստանում փորձում են մեծացնել պաշտպանության բյուջեն՝ այսպես կոչված «թուրքական վտանգին դիմակայելու համար»¹¹⁵: Հեղինակը պնդում էր, որ Սփյուռքի հայությունը, որը կրկնակի գերազանցում է Հայաստանի բնակչությանը, տեղի հասարակություններին ծուլվելուց խուսափելու միջոց է ընտրել «թուրքական վտանգը»: Ըստ նրա, Հայաստանի անկախացումից հետո էլ Սփյուռքը չի փոխել իր բնույթը և շարունակել է զոհի կարգավիճակի և պատմական թշնամության շահագործումը՝ որպես միավորող գործոն: Իր դիտարկումները հաստատելու համար նա մեջբերել է հայկական ծագում ունեցող թուրքական լրագրող Էթեն Մահչուփյանի և Հրանտ Դինքի հայտարարությունները 2004 թ. նոյեմբերին Ֆրանսիայում կայացած միջազգային գիտաժողովում,

¹¹⁵ **Laciner S.**, Turkey's EU membership and the Armenian Question, "Turkish Weekly", 11.12.2004.

որոնց դատողությունները հանգում էին այն պնդմանը, թե իրականում Սփյուռքը չի ուզում տեսնել, որ Թուրքիան փոխվում է, չի ուզում, որ Թուրքիան դառնա ԵՄ անդամ և չի ուզում աջակցել Թուրքիայում ընթացող ժողովրդավարական փոփոխություններին: Մասնավորապես, հիշվել է Հրանտ Դինքի դիպուկ արտահայտությունը. «Եթե թուրքերը և հայերը երբևէ գտնելու են լուծում, դա լինելու է Թուրքիա-ԵՄ ենթատեքստում»¹¹⁶: Այդ ժամանակահատվածում ամենալայն քննարկման թեմա համարվող Թուրքիայի հնարավոր անդամակցությունը Եվրամիությանը խթանեց հայ-թուրքական երկխոսության ծավալման հնարավորությունը, և այդ կապակցությամբ ասպարեզ են բերվել Էրդողանի կառավարության արտաքին քաղաքականության «գրո խնդիր հարևանների հետ» բնորոշումը, փոխադարձ շահի քաղաքականության հրամայականը: Ս. Լաչիները գրում էր. «Սեպտեմբերի 11-ից հետո... Հայաստանն այլևս չի կարող վարել միանշանակ միլիտարիստական բնույթի քաղաքականություն՝ հիմնված Ռուսաստանի, Իրանի և Սիրիայի հետ ռազմական համագործակցության վրա՝ զոհաբերելով ԱՄՆ շահերը... Անկախությունից ի վեր առաջին անգամ ԵՄ անդամակցության խնդիրը սկսել է լուրջ դիրքեր գրավել Հայաստանում: Արագորեն աճում է նրանց թիվն, ովքեր արտահայտվում են Հայաստանի՝ ԵՄ-ի հետ կապերի ընդլայնման օգտին: Կարճ ասած, ինչպես և Թուրքիան, Հայաստանը նույնպես ձգտում է դառնալ ԵՄ անդամ: Այդ նպատակների նույնությունը կարող է թուլացնել երկու երկրների միջև լարվածությունը: Նույն կազմակերպությանն անդամակցության դեպքում երկուսի համար էլ անխուսափելի կլինի հասնել փոխըմբռնման և դադարել միմյանց որպես վտանգ ըն-

¹¹⁶Նույն տեղում:

կալել»¹¹⁷: Ըստ հեղինակի, Թուրքիան շահագրգռված է կարգավորել իր հարաբերությունները Հայաստանի հետ, չնայած Հայաստանի կարիքը չունի: Այդ տեսակետի օգտին են խոսում այն, որ, ըստ նրա, Թուրքիան վերջին 14 տարիների ընթացքում ձեռնարկել է համագործակցությանն ուղղված քայլեր, կազմակերպել երկկողմ, եռակողմ և բազմակողմ հանդիպումներ: Թուրքիայի դրական տրամադրվածության օգտին փաստարկ է համարվում այն, որ հազարավոր հայեր են աշխատում Ստամբուլում, թուրքական միջազգային օդանավակայանները բաց են հայկական քաղաքացիական ինքնաթիռների համար, և նույնիսկ փակ սահմանի պայմաններում երկկողմ ապրանքաշրջանառության ծավալը հասել է 200 միլիոն դոլարի: Ս. Լաչիները առաջադրում է թուրքական երեք «պարզ խնդրանք» Հայաստանին՝ ա) ճանաչել Թուրքիայի և Հայաստանի հարևանների (ինն՝ Ադրբեջանի) տարածքային ամբողջականությունը, բ) վերջ դնել Ադրբեջանի տարածքների «օկուպացիային», գ) չդնել 1915 թ. իրադարձությունները Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կենտրոնում¹¹⁸:

Ամփոփելով իր հոդվածը՝ թուրք վերլուծաբանը գտնում էր, որ տարածաշրջանում Թուրքիայի ամենախնդրահարույց հարաբերությունները հայերի հետ են, և չնայած բոլոր ջանքերին՝ առաջընթացը խիստ սահմանափակ է: Քանի որ թուրք-հայկական բանավեճում երկու կողմ կա, ԵՄ-ը և արևմտյան երկրներն աննշան ազդեցություն են ունեցել Կովկասում: Տարածաշրջանային ռազմավարությանը և արևմտյան ինստիտուտներին միանալու Հայաստանի դժկամությունը՝ կախված իր անվտանգության մասին

¹¹⁷Նույն տեղում:

¹¹⁸ Նույն տեղում:

պատկերացումներից, մեկուսացնում է Հայաստանը և դնում բարդ իրավիճակի մեջ՝ խոչընդոտելով Արևմուտքին՝ իր ռազմավարության իրականացման հարցում: Այս ենթատեքստում, կովկասյան առողջ քաղաքականությունը պետք է միտված լինի թուրք-հայկական երկխոսությանը: Սրան կարելի է հասնել միայն ԵՄ-ին Թուրքիայի անդամակցելու միջոցով, ինչը Հայաստանին կմոտեցնի ԵՄ կառույցներին: ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության շնորհիվ Հայաստանը կսկսի Թուրքիային մոտենալ պակաս կասկածամտությամբ և նախապաշարմունքով, և ԵՄ-ի միջոցով կստեղծվեն երկխոսության նոր ուղիներ¹¹⁹:

2005 թ. ապրիլի 10-ին Թուրքիայի վարչապետ Ռ. Թ. Էրդողանը նամակ հղեց ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանին: Նա գրում էր. «...Գաղտնիք չէ, որ մենք (Թուրքիան և Հայաստանը- Դ.Ս.) տարբեր մեկնաբանություններ ունենք այն դեպքերի առնչությամբ, որոնք տեղի են ունեցել մեր ընդհանուր պատմության որոշակի ժամանակահատվածում: Այս տարբերությունները, որոնք մեր ազգերի համար անցյալի ցավալի հիշողությունների հետքեր են թողել, այսօր շարունակում են խոչընդոտել երկու երկրների միջև բարեկամական հարաբերությունների բարելավմանը: Ես հավատացած եմ, որ, որպես երկու երկրների առաջնորդներ, մեր առաջնային պարտքն է ապագա սերունդներին թողնել խաղաղ և բարեկամական միջավայր, որտեղ կգերակայեն հանդուրժողականությունը և փոխադարձ հարգանքը... Այս շրջանակներում մենք մեր հրավերն ենք ուղարկում ձեր երկիր՝ մեր երկու երկրների պատմաբաններից և այլ մասնագետներից բաղկացած համատեղ խմբի ստեղծման կապակցությամբ, որը կուսումնասիրի 1915 թ. զարգացումները և դեպքերը ոչ միայն Թուրքիայի և

¹¹⁹ Նույն տեղում:

Հայաստանի արխիվներում, այլ նաև մյուս բոլոր համապատասխան երրորդ երկրների արխիվներում և կներկայացնի իր եզրահանգումները միջազգային հանրությանը»¹²⁰: Թուրքիայի վարչապետը հույս էր հայտնել, որ իր առաջարկությունը, որը նպատակ ունի հաջորդ սերունդներին ժառանգել բարեկամական և առավել խաղաղ միջավայր, կստանա Հայաստանի քաղաքական իշխանությունների համաձայնությունը: Նա նաև հավելել էր, որ եթե հայկական կողմից ստանա պատմաբանների խումբ հիմնելուն ուղղված դրական պատասխան, ապա թուրքական կողմը պատրաստ կլինի այդ առաջարկության մանրամասները քննարկել Հայաստանի հետ¹²¹: Հարկ է նշել, որ թուրքական զանգվածային լրատվամիջոցներն ավելի շուտ հրապարակեցին այս նամակը տարբեր մեկնաբանություններով, քան այն հասավ ՀՀ նախագահի աշխատակազմ: Այդ հրապարակումները հիմնականում դրական արձագանքի արժանացան թուրքական մամուլում: Հայկական հասարակական-քաղաքական դաշտն աշխույժ քննարկում սկսեց նամակին հայկական կողմի հնարավոր պատասխանի վերաբերյալ:

Ապրիլի 25-ին ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը պատասխան նամակ հղեց Թուրքիայի վարչապետին: Նամակում, մասնավորապես, ասվում էր. «Որպես հարևաններ մենք պետք է փորձենք ուղիներ որոնել այժմ և ապագայում համերաշխ ապրելու համար: Այդ իսկ պատճառով հենց սկզբից մենք առաջարկել ենք հաստատել դիվանագիտական հարաբերություններ, բացել

¹²⁰ ԹՎ վարչապետ Ռ. Թ. Էրդողանի նամակը ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանին, <http://www.mfa.gov.tr/data /DISPOLITIKA/text-of-the-letter-of-h e -prime-minister-recep-tayyip-erdogan-addressed-to-h e -robert-kocharian.pdf>

¹²¹ Տե՛ս նույն տեղում:

սահմանները և երկխոսություն սկսել երկու երկրների և ժողովուրդների միջև»¹²²: «Հ նախագահն օրինակ էր բերում եվրոպական մայրցամաքում հարևան երկրներին, որոնք դժվարին անցյալի շուրջ տարակարծիք են, սակայն, նրա արտահայտությամբ, «դա չի խանգարում նրանց ունենալ բաց սահմաններ, նորմալ հարաբերություններ, դիվանագիտական կապեր, ներկայացուցիչներ միմյանց մայրաքաղաքներում և այդ բոլորով հանդերձ՝ զուգահեռաբար քննարկել վիճելի հարցերը... Արդյունավետ երկխոսության մեջ ներգրավվելու համար մեզ անհրաժեշտ է ստեղծել նպաստավոր և քաղաքական միջավայր: Երկկողմ հարաբերությունների զարգացման պատասխանատվությունը կրում են կառավարությունները, և մենք իրավասու չենք այն պատվիրակել պատմաբաններին... Մենք կրկին առաջարկում ենք առանց նախապայմանների մեր երկու երկրների միջև հաստատել նորմալ հարաբերություններ: Ահա այս համատեքստում կարող է գումարվել միջկառավարական հանձնաժողով՝ քննարկելու երկու երկրների միջև առկա ցանկացած խնդիր կամ բոլոր կարևոր խնդիրները՝ նպատակ ունենալով լուծել դրանք և հասնել փոխըմբռնման»¹²³:

Վարչապետ Էրդողանի պարզաբանումներն այս նամակագրության կապակցությամբ ապրիլի 29-ին հրապարակվել են «Հայաստանի հետ կարելի է քաղաքական հարաբերություններ հաստատել» խորագրով: «Միլիյեթի» լրագրողների հետ հանդիպմանը Թուրքիայի վարչապետը, մասնավորապես, նշել էր. «Ես չեմ ասում, որ Հայկական հարցով զբաղվեն միայն պատմաբանները:

¹²² Հայ-թուրքական հարաբերություններ. հիմնախնդիրներ և հեռանկարներ, խորհրդարանական լսումներ 19-20 դեկտեմբերի 2007թ., Երևան, 2011, էջ 415:

¹²³ Նույն տեղում:

Թող նրանց միանան քաղաքագետները, իսկ վերջնական որոշումը կայացնեն քաղաքական գործիչները: Մենք պատրաստ ենք հաշտվելու մեր պատմության հետ: Նրանք պատրաստ են հաշտվելու: Չենք կարող տեղահանությունն իբրև «ցեղասպանություն» որակելու թյուրիմացության մեջ գտնվողներին ընդունել: Քոչարյանն իր պատասխան նամակում փորձում էր մեզ հիշեցնել, թե դա քաղաքական գործիչների խնդիրն է: Մենք այդ մասին շատ լավ գիտենք: Սակայն քաղաքական գործիչներն առհասարակ թիմ են ունենում: Պատմաբաններից, քաղաքագետներից, արխիվի մասնագետներից կազմված այս թիմն աշխատանք է կատարում և մեզ ներկայացնում, իսկ մենք նրանց աշխատանքի հիման վրա որոշում ենք կայացնում: Առանց այս ամենի մեզանից պահանջում են անհապաղ բացել սահմանները: Շատ բարի, սակայն դու ինձ սահման բացելու պահանջ ներկայացնելիս ինչո՞ւ ես շարունակում ցեղասպանության միջազգային ճանաչման պայքարը»¹²⁴:

2007 թ. ապրիլի 16-ի համարում «Զաման» թերթը «Թուրքական մամուլի մեծ մեղքը Հայկական հարցում» վերնագրով առերևույթ խոստովանական բնույթ կրող, սակայն ամենևին էլ ոչ ճշմարտության բացահայտմանը նպատակաուղղված հրապարակման մեջ անդրադարձել է ճշմարտության «քողարկման» թուրքական միտումներին: Հեղինակը՝ Սելչուք Գյուլթաշլըն, մասնավորապես հիշում է, որ առաջին անգամ այցելելով Բոյուսել և քաղաքավարության այց կատարելով Բելգիայում Թուրքիայի դեսպանատուն, ցնցվել է դեսպանի այն խոսքերից, թե Հայկական հարցում Թուրքիան այլևս զգալի հակաքայլեր չունի, քանի որ հայերի «ցեղասպանության» ճշմարտացիությունը Եվրոպայի համար «հա-

¹²⁴«Milliyet», 29.04.2005.

վատալիք» է դարձել: Ապա հողվածագիրը գրում էր, որ իրենց հայեցակետից թվում է, թե «ցեղասպանությունը» մեծ սուտ է, և Եվրոպան, ԱՄՆ-ը քաջ գիտեն այդ մասին, սակայն քաղաքական շահարկումների համար չի մանալու տեղ են դնում, երբ Եվրոպական խորհրդարաններն օրենքներ են ընդունել, թուրքական ազդեցիկ թերթերը, առանց անդրադառնալու պատմաքաղաքական ասպեկտին, հարցը հանգեցրել են պարզ քվեորսության, ինչի արդյունքում թուրքերը հանգիստ շունչ են քաշել... Եվրոպական քաղաքական գործիչները հայերի քվեները ստանալու մղումով առանց հավատալու կառչել են «ցեղասպանության ստին»: Սակայն, երբ ցեղասպանությունը դատապարտող որոշումներ սկսեցին ընդունել նաև Լեհաստանի, Սլովակիայի պես հայ բնակչություն գրեթե չունեցող երկրները, պարզ է դարձել, որ վերոհիշյալ մեծ տպաքանակ ունեցող թերթերի մատուցածը թուրք ժողովրդին թյուրիմացության մեջ է զգել, և խնդիրը չի կարելի պայմանավորել բացառապես քվեորսությամբ¹²⁵: Այնուհետև հողվածագիրը փաստում է, որ նախօրեին թուրքական պատմական ընկերության նախկին նախագահ Յ. Հալաչօղլուն, նկատի ունենալով արևմտյան գործիչներին, հեռուստաէկրանից բացականչել է. «Նրանք էլ գիտեն, որ ցեղասպանություն չի եղել», մինչդեռ «Նյու Յորք թայմսն» ապրիլի 13-ի համարի խմբագրականում տպագրել է թուրքերի համար սարսափազդու տողեր այն մասին, որ աշխարհը, չհակազդելով հայերի «ցեղասպանությանը», խրախուսել է նախ Հիտլերին, ապա 1994 թ. Ռուանդայում ցեղասպանության կազմակերպիչ-ներին, ապա նաև Սուդանի նա-

¹²⁵St´u **Gültaslı S.**, Ermeni meselesinde Türk basınının büyük günahı, 16.04.07, http://www.zaman.com.tr/selcuk-gultasli/bruksel-ermeni-meselesinde-turk-basininin-buyuk-gunahi_528123.html

խագահ Օմար ալ Բաշիրին, ինչը նշանակում է, որ աշխարհի ամենաարյունարբու մարդասպանները (ներառյալ՝ Հիտլերը) առաջնորդվել են հայերի դեմ Օսմանյան կայսրության իրագործած «ցեղասպանության» օրինակով: Հոդվածագիրը որպես «խայտառակություն» է փորձում որակել ինչպես «Նյու Յորք թայմսի» վերոհիշյալ հրապարակումը, այնպես էլ ամիսներ առաջ «Թայմ» հանդեսում տպագրված այն հոդվածը, որն ընթերցողներից ներողություն է խնդրել Անկարայի առևտրական պալատի պատրաստած՝ հայերի ցեղասպանությունը «հերքող» լազերային սկավառակը տարածելու համար: Սելչուք Գյուլթաշընը քաջ գիտակցում է, որ նույնիսկ Թուրքիայի ամենամերձավոր դաշնակիցների՝ ԱՄՆ և Իսրայելի պատասխանատուներն են հրապարակավ ասում, որ եթե հայերի ցեղասպանությունը չեն բնութագրում իբրև ցեղասպանություն, ապա դա արվում է Անկարայի դաշնակցությունը չկորցնելու նկատառումով, և եթե Հայկական հարցում քվեորսությունն ու Թուրքիայի դեմ քաղաքական շահարկումները փաստ են, այսուհանդերձ, փաստ է և այն, որ թուրքական ազդեցիկ մամուլը, հարցին ցուցաբերելով մակերեսային և կողմնակալ մոտեցում, իրականում խոչընդոտել է հարցի խորքային ըմբռնմանը¹²⁶:

2000-ական թթ. ամբողջ ընթացքում Թուրքիայի իշխանությունները ոչ միայն չեն մեղմել Հայոց ցեղասպանության իրողության ժխտման պետական քաղաքականությունը, այլև հետևողականորեն փնտրել են նոր ուղիներ այդ քաղաքականության կենսագործման համար: Այսպես, 2000 թ. աշնանը-2001 թ. ձմռանը, երբ ԱՄՆ-ում և Ֆրանսիայում Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացն աննախադեպ թափ էր հավաքել, Թուր-

¹²⁶ Տե՛ս նույն տեղում:

քիայի վերնախավը սկսեց լրջորեն ուսումնասիրել իրավական հարթության մեջ հարցը մերժելու հնարավորությունները: 2000 թ. սեպտեմբերի 29-ին ժխտման «միջազգային-իրավական» մի նոր միտումի քննությունը դարձավ Թուրքիայի Ազգային անվտանգության խորհրդի նիստի օրակարգի առաջին հարց: Հարցը քննարկման էր դրել Բյուլենթ Էջևիթի ղեկավարած կոալիցիոն կառավարությունն իբրև «հայերի անդունների դեմ պայքարի միջոցների քննարկում»: Ընդունվեց մի որոշում, որը, մամուլին հասած կցկտուր տեղեկությունների համաձայն, ձևակերպվում էր որպես «փուլ առ փուլ անհրաժեշտ միջոցների ձեռնարկում», նշվում էր, որ հիշյալ միջոցների ավելի ներգործուն լինելը կախված է դեպքերի զարգացումից¹²⁷: ԱԱԽ հաջորդ մի քանի նիստերում արտգործնախարար Իսմայիլ Ջեմը ներկայացրել էր գործողությունների ծրագիր, որը ենթադրում էր իրականացնել քայլեր դիվանագիտական, քաղաքական և գիտական ոլորտներում: Հատուկ քննարկման էր դրվել պաշտոնաթող դիվանագետ Գյունդուզ Աքթանի առաջարկների փաթեթը, որոնց իմաստն այն էր, որ առաջին անգամ առաջարկվում էր Հայոց ցեղասպանության ճանաչման դեմ պայքարում հենվել միջազգային իրավական փաստաթղթերի, մասնավորապես՝ Ցեղասպանության մասին ՄԱԿ 1948 թ. կոնվենցիայի վրա:

2001 թ. Գ. Աքթանը հրապարակեց «Հայկական հարցը և միջազգային իրավունքը» հոդվածը, որտեղ անդում էր, որ 1915 թ. իրադարձությունները միջազգային իրավունքի տեսակետից չեն հանդիսանում ցեղաս-

¹²⁷ Տե՛ս **Սաֆրաստյան Ռ.**, Թուրքիայի պայքարը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման դեմ, http://www.noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT_ID=491

պանություն, քանի որ նրանց նկատմամբ չի կարելի կիրառել ՄԱԿ 1948 թ. հայտնի կոնվենցիայի դրույթները: 2002 թ.-ից սկսած՝ Գ. Աքթանն այդ թեմայով հաճախակի հայտարարություններ էր անում մամուլի համար¹²⁸:

2001 թ. մայիսին ԱԱԽ որոշումների իրականացման ուղղությամբ երկրի վարչապետի կարգադրությամբ ստեղծվեց «Ցեղասպանության վերաբերյալ անհիմն անդումների դեմ պայքարը համակարգող խորհուրդ»: Խորհրդի նախագահ նշանակվեց փոխվարչապետը, իսկ կազմի մեջ ընդգրկվեցին տարբեր պետական գերատեսչությունների բարձրաստիճան ներկայացուցիչներ: Այդ խորհուրդը սկսեց գործել ԱԱԽ գլխավոր քարտուղարության համակարգում և նրա հսկողության ներքո, որի գործունեությունը համակարգում էր Գլխավոր շտաբի գնդապետ Մոմին Օնգյորենը: Հայտնի է, որ այդ խորհուրդը գործում էր կանոնավոր կերպով, եռամսյակը մեկ, ընդհուպ մինչև 2006 թ.: Խորհուրդը ստեղծել էր աշխատանքային խմբեր, որոնց մեջ ներգրավվել էին պաշտոնաթող դիվանագետներ և վստահություն վայելող արտասահմանյան դիվանագետներ¹²⁹:

Հատկանշական է, որ իշխանական վերնախավի քայլերն այս ուղղությամբ արժանացել են խորհրդարանական ընդդիմության, մասնավորապես՝ ժողովրդահանրապետական կուսակցության հավանությանը (նույնիսկ ենթադրվում էր, թե այդ գաղափարի իրական հեղինակը ԺՀԿ-ն է): 2006 թ. դեկտեմբերի 26-ին արտգործնախարար Ա. Գյուլի նախագահությամբ անցավ վերոհիշյալ խորհրդի հերթական նիստը, որտեղ

¹²⁸ **Aktan G.**, Ermeni Sorununun Hukuksal Boyutu, http://www.eraren.org/bilgibankasi/tr/index2_1_1.htm

¹²⁹ Տե՛ս նույն տեղում:

քննարկվեց երեք տարբերակ՝ 1. դիմել Մարդու իրավունքների եվրոպական դատարան՝ Ֆրանսիայի խորհրդարանի Հայոց ցեղասպանության մասին հայտնի որոշումը բողոքարկելու նպատակով, 2. դիմել Հաագայի Արդարադատության միջազգային դատարան, 3. դիմել Հաագայի Միջազգային իրավարար մշտական դատարան: Թուրքական վերնախավում ձևավորված պատկերացումների համաձայն, Հաագայի Միջազգային իրավարար մշտական դատարանի դատաքննության ընթացքը ներկայացնում էր երեքական հայ և թուրք դատավորներից կազմված ժամանակավոր դատական ատյանի գործունեություն, ընդ որում, այդ ատյանի նախագահ պետք է դառնար երրորդ կողմի ներկայացուցիչ: 1948 թ. ՄԱԿ կոնվենցիայի չափանիշներին համապատասխանության հարցը պետք է քննվեր երեք ուղղություններով: Առաջին՝ հայ և թուրք պատմաբաններից կազմված խումբը պետք է ուսումնասիրեր Թուրքիայի և այլ երկրների պետական, ՀՅԴ և Պոլսի Հայոց պատրիարքարանի արխիվները և աներ եզրակացություն պահվող նյութերի վավերականության մասին: Երկրորդ՝ պետք է ուսումնասիրվեին վիճակագրական տարբեր նյութեր, մասնավորապես՝ Օսմանյան կայսրությունում բնակվող հայերի, Առաջին աշխարհամարտի տարիներին սպանվածների և հիվանդությունից մահացածների, տեղահանության ընթացքում մահացած հայերի թվաքանակի և մահվան պատճառների մասին: Այդ խումբը պետք է ուսումնասիրեր հայտնաբերված զանգվածային գերեզմաններում թաղվածների ազգային պատկանելության հարցերը: Եվ երրորդ՝ պետք է ուսումնասիրվեր ընդհանրապես ռազմական գործողությունների ընթացքը, մասնավորապես՝ հայկական զինված ջոկատների գործողությունները: Հատուկ նշվում էր, որ Թուրքիան կդիմի Հաագայի համապատասխան դատարան,

միայն երբ համոզվի, որ վերոհիշյալ հետազոտությունների արդյունքները կարող են թուրքական կողմի համար լինել նպաստավոր¹³⁰:

2007 թ. հունվարի 19-ին Ստամբուլում սպանվեց «Ակօս» թերթի գլխավոր խմբագիր, Թուրքիայում հայտնի լրագրող, հրապարակախոս և հանուն ժողովրդավարական բարեփոխումների հանդես եկող հասարակական գործիչ Հրանտ Դինքը: Այս սպանությունը ցնցեց թուրքական հասարակությանը: Հազարավոր մարդիկ հավաքվեցին Ստամբուլի Թաքսիմ հրապարակում «Ես Դինքն եմ, ես հայ եմ» կարգախոսներով: Այդ սպանությունը և դրան հաջորդած քաղաքական գործիչների հրապարակային ելույթները, հասարակական զգացմունքային քննարկումները և ՋԼՄ հրապարակումները, ինչպես նաև ԱՄՆ-ից և Եվրոպայից ստացվող արձագանքները աննախադեպ առիթ դարձան՝ կրկին անդրադառնալու Հայկական հարցին և հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հիմնախնդրին: Վերաբերմունքն այդ սպանությանը դարձավ մի նոր յուրօրինակ ցուցիչ, որը բաժանեց Թուրքիայում ցավոտ «Հայկական հարցը» լուծելու կողմնակիցներին և հակառակորդներին: Այս թեման հետազոտման ամբողջ շրջանում և առ այսօր շարունակում է արժարժվել Թուրքիայում, որտեղ դեռ չի ավարտվել դատաքննությունը և չի փակվել քրեական գործը (Դինքի սպանության ազդեցությունը Թուրքիայի ժամանակակից ներքաղաքական խոսույթի վրա ինքնուրույն հետազոտության թեմա է)¹³¹:

2007 թ. սեպտեմբեր-հոկտեմբերին Թուրքիայում գիտափորձագիտական մակարդակով ընթացող հայ-

¹³⁰ Նույն տեղում:

¹³¹ St' u Çandar C., Hrant Dink'in öldürülmesinin sırrı..., <http://www.hurriyet.com.tr/yazarlar/14261201.asp>

թուրքական հարաբերությունների կարգավորման հնարավորության հեռանկարների քննարկումը համընկավ Հայաստանում ապագա նախագահական ընտրությունների թեկնածուների առաջադրման փուլին: ԱԶԿ-ն քննարկում էր Թուրքիայի նոր սահմանադրության նախագիծը, որը հանդիպում էր քեմալական ազգայնական ընդդիմության կոշտ դիմակայությանը: Այսուհանդերձ, այդ շրջանում Թուրքիան կանգնել էր հայ-թուրքական հարաբերություններում ընդամառ քայլ անելու անհրաժեշտության առաջ: Սեպտեմբերի 18-ին Ստամբուլում և սեպտեմբերի 20-ին Անկարայում Միջազգային քաղաքական հետազոտությունների հայկական խումբը (AIPRG) կազմակերպել էր երկու համանման միջոցառում՝ նվիրված հայ-թուրքական սահմանի բացմանը: ARI շարժման¹³² և թուրք-հայ գործարար կապերի զարգացման խորհրդի հետ համատեղ կազմակերպված այս միջոցառումներին մասնակցել են նաև երկու հայաստանցի փորձագետներ՝ ARI խմբի աշխատակից Միեր Բադրամյանը և ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի աշխատակից Վահրամ Տեր-Մաթևոսյանը: Թեմայի ուսումնասիրման տեսանկյունից այս համաժո-

¹³²ARI շարժումն անկախ, ոչ կուսակցական սոցիալական շարժում է, որը հիմնադրվել է 1994 թ.՝ քաջալերելու կամավորականությունը, քաղաքացիական ակտիվությունը և վերլուծական մտածողությունը թուրք երիտասարդության շրջանում, պատրաստելու ապագա առաջնորդների՝ քաջալերելով թուրք երիտասարդության ինտելեկտուալ զարգացումը և սոցիալական մասնակցության չափը՝ ստեղծելով մասնակցային ժողովրդավարության վերաբերյալ պատկերացումներ Թուրքիայում: ARI-ին, մասնավորապես, կազմակերպել է «Հարավային Կովկասի երիտասարդ առաջնորդների զագաթաժողով» 2010 թ. հուլիսի 13-16-ը, Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի և Թուրքիայի չորսական մասնակիցների համար: Այս կազմակերպությունն աշխույժ գործունեություն է ծավալում նաև ԱՄՆ-ում: Տե՛ս <http://www.ari.org.tr>:

ղովներից հետաքրքիր են երեք ճանաչված թուրք փորձագետների տեսակետները: Միջինարևելյան տեխնիկական համալսարանի եվրոպական կենտրոնի աշխատակից Բուրջու Գյուլթեքինն ասել է. «Սահմանը փակ պահելը, տնտեսական և քաղաքական վնասներից զատ, կողմերին պատճառում է նաև հասարակական վնասներ՝ խոչընդոտելով երկու երկրների հասարակությունների փոխներգործությանը... Սահմանի փակվածությունը չի նպաստում Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների կարգավորմանը, հետևաբար՝ Թուրքիան Հունաստանի պարագայում կիրառվող անդրսահմանային համագործակցությունը պետք է կիրառի նաև Հայաստանի հետ արևելյան սահմաններում»¹³³ : Բ. Գյուլթեքինին առարկել է Ռազմավարական ուսումնասիրությունների միջազգային կենտրոնի ղեկավար Սեդաթ Լաչիները: Ըստ նրա. «Թուրքիան հայ-թուրքական սահմանի բացումից տնտեսական շահեր չի ստանա, սակայն նախքան դարաբաղյան հիմնահարցի հանգուցալուծումը եթե բացի, ապա կսրի Ադրբեջանի հետ իր հարաբերությունները, մինչդեռ Ադրբեջանը քաղաքական և տնտեսական առումներով Թուրքիայի համար ավելի կարևոր է, քան Հայաստանը»¹³⁴: Այդ քննարկումների հաջորդ օրը նույն թեմայով վերլուծություն է կատարել Եվրասիական ռազմավարական հետազոտությունների կենտրոնի հայկական ուսումնասիրությունների ինստիտուտի տնօրեն, նախկին դեսպան Օմեր Էնգին Լյութեմը: Նա գրել է. «Հայաստան արտահանվող թուրքական ապրանքները Թուրքիայի արտաքին ա-

¹³³ **Չաքրյան Հ.**, Թուրքիան կանգնել է հայ-թուրքական հարաբերություններում ընդառաջ քայլ կատարելու հրամայականի առջև, 26.09.2007,

http://www.azg.am/wap/?nl=AM&id=2007092601&Base_PUB=0

¹³⁴ Նույն տեղում:

ռևտրի ծավալների ընդամենը 0,15 տոկոսն են կազմում, եթե նույնիսկ սահմանը բացվի, հազիվ թե դրանից շահի Կարսը, որովհետև այս քաղաքում չեն արտադրվում Հայաստանում պահանջարկ վայելող ապրանքներ... Սահմանի բացումից տնտեսական առումով չի շահի նաև Հայաստանը, որովհետև նա արտահանելու ապրանք գրեթե չունի, բացումը պարզապես երկարաժամկետ հեռանկարում միայն օգուտ կբերի երկու երկրներին: ...Սահմանների բացման հարցում «համառելու» համար Հայաստանն ունի ոչ թե տնտեսական, այլ քաղաքական պատճառներ, որովհետև առանց Ղարաբաղի հիմնահարցը կարգավորելու սահմանները բացելու պարագայում Թուրքիան ծանր կացության մեջ կդնի Ադրբեյջանին... Սահմանի բացմանը ոչ թե տնտեսական, այլ քաղաքական տեսանկյունից է մոտենում նաև Թուրքիան՝ մտածելով, որ դա կնպաստի ԱՄՆ-ի, ԵՄ-ի և որոշ երկրների հետ հարաբերություններին: ...Եթե Անկարան զգա, որ սահմանի բացումը կնպաստի ԱՄՆ, ԵՄ և որոշ այլ երկրների հարաբերություններին, ապա կքննարկի սահմանը մասնակի կամ լիովին բացելու հարցը»¹³⁵:

Ինչ վերաբերում է 2008 թ. փետրվարի նախագահական ընտրությունների հանդեպ վերաբերմունքին, ապա Թուրքիայի հասարակական-քաղաքական և վերլուծական շրջաններում տարածված էր այն տեսակետը, ըստ որի՝ Սերժ Սարգսյանի և Լևոն Տեր-Պետրոսյանի միջև նախընտրելի էր վերջինը, որովհետև Ս. Սարգսյանը Ռոբերտ Քոչարյանի մերձավորագույն զինակիցն էր և, ըստ ամենայնի, նրա քաղաքական գծի շարունակո-

¹³⁵Նույն տեղում, ավելի մանրամասն տե՛ս **Սաֆարյան Ղ.**, Թուրքիայի հասարակական-քաղաքական կարծիքը հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հիմնախնդրի մասին (2001-2007 թթ.), «21-րդ դար», №1, Երևան, 2015, էջ 120-133:

ըը, իսկ Լևոն Տեր-Պետրոսյանը հայտնի էր որպես Թուրքիայի հետ երկխոսության հարցում առավել չափավոր, համաձայնություն գտնելու դիրքերում կանգնած քաղաքական գործիչ¹³⁶:

ԼՂ հակամարտության առկայության պայմաններում Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու հնարավորությանն իսկ ընդգծված վերապահումով մոտեցող, անթաքույց կողմնակալ-ադրբեջանամետ դիրքորոշում որդեգրած թուրքական իշխանությունները 1993 թ. մայիսից փակել են Հայաստանի հետ ցամաքային սահմանը, Հայաստանի Հանրապետությունից ապրանքներ ներկրելու վրա էմբարգո սահմանել, որոշ ժամանակ փակել նաև H-55 օդային միջանցքը՝ արգելելով նաև օդային հաղորդակցությունը Հայաստանի հետ: Թեև վերջին արգելքը 1995 թ. վերացվեց, սակայն ցամաքային փակ սահմանն այլևս չբացվեց, և իրավիճակն այդպիսին է մինչև այժմ¹³⁷:

¹³⁶ **Kalin I.**, From History to Realpolitik in Armenian-Turkish Relations, 11.09.2008, http://www.todayszaman.com/columnist/ibrahimkalin/from-history-to-realpolitik-in-armenian-turkish-relations_152739.html

¹³⁷ Տե՛ս և հմնտ. **Kotanjian H., Safarian A.**, A View on Armenian-Turkish Relations in the Contexts of Regional Developmnet, Regional Studies, Volume 1, Yerevan, 1996, pp. 47-56, ինչպես նաև **Safarian Alexandre**, «France - Armenie».Tout sur l'Armenie. Hors Serie 2006. Paris, pp. 284-285, **Սաֆարյան Ար., Սաֆարյան Ա.**, «Ֆուտբոլային դիվանագիտության» արտացոլումը Թուրքիայի ԶԼՄ-ներում, «Աշխատանքային տետրեր», հ. 3-4 (7-8), ՀՀ ՊՆ հրատ., Երևան, 2008, էջ 184-196, **Safaryan A., Melkonyan R.**, A view on Armenian-Turkish relations, Warsaw East European Conference 2010, Where are we?, Post-Communist and Post-Soviet Countries over past twenty years. (Bibliotheca Europae Orientalis, XXXVI), Abstracts, parva 5, Warsaw, 2010, p. 42:

**ՉԼՈՒՄ 3. ԹՈՒՐՔԻԱՅԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻՋԵՎ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՆՈՐ
ՀԻՄՆԱՐԱՐ ՓՈՐՁԸ (2008-2011 թթ.), ՍԱՌԵՑՄԱՆ
ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐՏԱՑՈՒՄԸ
ԹՈՒՐՔԻԱՅԻ ԵՎ ԱՂՐԲԵՋԱՆԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԻՍԿՈՒՐՍՈՒՄ**

2008 թ. ՀՀ նախագահական ընտրություններին հաջորդած ժամանակահատվածում թուրքական ՋԼՄ-ները լայնորեն անդրադառնում էին Թուրքիայի Հանրապետության նախագահ Աբդուլլահ Գյուլի` ՀՀ նորընտիր նախագահ Սերժ Սարգսյանին ուղղված շնորհավորական ուղերձին: Միաժամանակ, այնտեղ քիչ չէին ծայրահեղ թշնամական հրապարակումները ՀՀ-ում հետընտրական գործընթացների (մարտի 1-2-ի իրադարձությունների, արտակարգ իրավիճակի հայտարարման) մասին: Հատկանշական է, օրինակ, թուրքական «Աքսիոն» հանդեսի մեկնաբանությունը նոր նախագահի օրոք հայ-թուրքական հարաբերությունների հեռանկարի կապակցությամբ: Եվրասիական ռազմավարական հետազոտությունների կենտրոնի Կովկասի գծով փորձագետ Հասան Քամբոլաթն ասել էր. «Հայաստանը թեև Թուրքիայի առջև փակել է երկխոսության պատուհանը, սակայն երկրի նոր առաջնորդը կարող է ավելի մոտ լինել հաշտությանը... Ժողովրդական առաժն առնում է. «Հաշտության «բազեններն» են հասնում»: Քանի որ Սարգսյանը «բազեն» է, ուստի Ղարաբաղի և Թուրքիայի հարցերում հաշտությանն ավելի հակված կլինի, քան չափավորականները, որովհետև անհատական ո-

րոշումներ ընդունելու դեպքում «բազեներին» դավաճանության մեջ չեն մեղադրի: Այդ իսկ պատճառով նրանք անհամեմատ մոտ են կանգնած հաշտությանը»¹³⁸:

2008 թ. ապրիլի 24-ի Հայոց ցեղասպանության գոհերի հիշատակի ոգեկոչման արարողությունների մասին գրելով՝ թուրքական «Ջաման»-ը, անդրադառնալով, մասնավորապես, ՀՀ նախագահ Ս. Սարգսյանի ելույթին, գրել է. «Համարելով Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը Հայաստանի արտաքին քաղաքականության անքակտելի բաղադրամաս, Սերժ Սարգսյանն ասաց. «Համայն հայության հայրենիք Հայաստանը պետք է կրկնապատկի պատմական արդարության վերականգնմանն ուղղված ջանքերը»: Հայաստանի դեկավարը միաժամանակ նշել է, որ դրանց գործադրումը վրեժխնդրության և թշնամանքի զգացումներ չի ենթադրում: Վերջում նա օգտագործել է «վաղվանից պատրաստ ենք կարգավորել Թուրքիայի հետ հարաբերությունները» արտահայտությունը»¹³⁹:

Այն, որ Հայաստանում նոր նախագահի պաշտոնավարման առաջին իսկ օրերից թուրքական մամուլում սրված ուշադրությամբ ուսումնասիրվում էր Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման գործընթացը, վկայում են թուրքական հասարակության, մասնավորապես՝ մտավորականության շրջանում շարունակվող բանավեճերը դրան դիմադրելու և ժխտողականությունն առաջ քաշելու նպատակահարմարությամբ:

¹³⁸Տե՛ս **Çevikalp M.**, Ermenistan'la 'şahin barışı' umudu, 10.03.2008, http://www.aksiyon.com.tr/dunya/ermenistanla-sahin-barisi-umudu_515867

¹³⁹Sarkisyan: Soykırım propagandasını iki katına çıkartalım, 25.04.2008, http://www.zaman.com.tr/dunya_sarkisyan-soykirim-propagandasini-iki-katina-cikartalim_681148.html

յան և արդյունավետության հարցի շուրջ: Այսպես, թուրքական պատմական ընկերության նախկին նախագահ, պրոֆեսոր Յ. Հալաչօղլուն «Հյուրիյեթ» թերթին տված հարցազրույցում, փորձելով առաջ տանել, այսպես կոչված, «1915 թ. իրադարձությունների ուսումնասիրության համար հայ և թուրք պատմաբանների համատեղ հանձնաժողով ստեղծելու» վարչապետ Էրդողանի գաղափարը, ասել էր. «Բոստոնի ՀՅԴ կենտրոնական արխիվի բացման համար անհատույց 20 մլն դոլար առաջարկեցի, սակայն ոչ ոք տեղից չչարժվեց»¹⁴⁰: Թուրքական մյուս թերթերը («Թարաֆ», «Էվրենսել», «Ենի ալթուել») քննարկել են Հալաչօղլուի «նետած մարտահրավերը»: «Թարաֆ»-ը, մասնավորապես, գրել էր. «Դաշնակների արխիվը թո՛ղ, օսմանյանով զբաղվիր»¹⁴¹: Թերթը նաև գրում էր, որ Հալաչօղլուի տեսակետներին հակադրվում է Թաներ Աքչամի 2008 թ. լույս տեսած «Հայկական հարցը լուծված է» աշխատությունը, որտեղ թուրք պրոֆեսորը կարծիք էր հայտնում, որ ցեղասպանության հարցում թուրքական թեզը նույնիսկ օսմանյան արխիվներն են հերքում, որքան էլ դրանք գտված լինեն¹⁴²: Այնուհետև թերթը գրում է. «Եթե Հալաչօղլուն դաշնակցական արխիվի մասին ելույթով չի փորձում հասարակական ուշադրությունը շեղել Աքչամի գրքից, ապա թուրք հասարակությանը ևս որոշակի ժամանակով զբաղեցնելու առաջադրանք է կատարում: Գուցե Թուրքական պատմական ընկերությունը չի ընկալում, սակայն համաշխարհային հասարակական

¹⁴⁰ **Kaplan S.**, Parasını verelim arşivleri açın, 19.05.2008, <http://www.hurriyet.com.tr/gundem/8978383.asp>

¹⁴¹ **Hür A.**, Taşnak arşivini bırak, Osmanlı arşivine bak, 25.05.2008, <http://arsiv.taraf.com.tr/yazilar/ayse-hur/tasnak-arsivini-birak-osmanli-arsivine-bak/728/>

¹⁴² Նույն տեղում:

կարծիքն այդ հարցում որոշակի տեսակետ արդեն ունի»¹⁴³:

Նախագահ Սերժ Սարգսյանի հրավերով սեպտեմբերի 6-ին Երևան ժամանեց Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլը՝ դիտելու Հայաստանի և Թուրքիայի ֆուտբոլի հավաքականների հանդիպումը: Այցի նախօրեին թուրքական հասարակությունը և ՋԼՄ-ներն աշխուժորեն քննարկել են այդ թեման: Եվրասիական ռազմավարական հետազոտությունների կենտրոնի Հայկական ուսումնասիրությունների ինստիտուտի փորձագետ Յըլդըզ Դեշին գրում էր ինստիտուտի ամենօրյա տեղեկագրում. «Ռուսաստանի հայ համայնքի ներկայացուցիչների հետ հանդիպմանը Սարգսյանն արտահայտեց Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորման Հայաստանի պատրաստակամությունը, ապա և «21-րդ դարում չեն կարող փակ լինել հարևան երկրների սահմանները» խոսքերով կրկնեց պատմաբանների համատեղ հանձնաժողով ստեղծելու Թուրքիայի առաջարկին իր պայմանական աջակցությունը»¹⁴⁴: Այստեղ պարզորոշ նկատվում է, որ վերլուծաբանն ակնհայտորեն խեղաթյուրում է ՀՀ նախագահի ձևակերպումը՝ փորձելով թուրքական ցանկությունը ներկայացնել որպես իրականություն: ՀՀ նախագահի հրավերին Թուրքիայի նախագահի հնարավոր պատասխանի կանխատեսումով թուրքական «Թարաֆ» թերթը գրում էր. «Ֆուտբոլային հանդիպման համար նախագահ Աբդուլլահ Գյուլին Երևան հրավիրելու նախագահ Սերժ Սարգսյանի Մոսկվայում արած հայտա-

¹⁴³ Նույն տեղում:

¹⁴⁴ **Deveci Y.**, Türkiye-Ermenistan maçı iki ülke arasında yeni bir bailangic olabilir mi?, 27.06.2008, <http://www.eraren.org/index.php?Lisan=tr&Page=Makaleler&MakaleNo=3147>

րարությունը որոշ ժամանակից ի վեր հայ-թուրքական հարաբերություններում նոր էջ բացելու նպատակով կատարվող տրամադրությունների փոխադարձ շոշափման ամենացայտուն արտահայտությունն է: Երանի թե հրավերն ընդունի մեր նախագահը, որը դեռևս արտգործնախարարի կարգավիճակում հակված էր արևելյան հարևանի հետ մերձեցմանը...»¹⁴⁵: Հաջորդ օրը «Թարաֆ»-ին ձայնակցել էր «Հյուրիյեթ»-ը. «Անկարան հրավերին դրական է մոտենում: Դիվանագիտական աղբյուրները թեև նշում են, որ դեռևս պաշտոնական հրավեր չեն ստացել, սակայն հրավերին իրենց մոտեցումը բացասական չէ»¹⁴⁶:

Այցին նախորդող ամբողջ ամառվա ընթացքում թուրքական հասարակության տարբեր շրջանակներում աշխուժորեն քննարկելով Սարգսյան-Գյուլ ապագա հանդիպման հնարավորության թեման՝ հստակորեն ձևավորվեցին դրա կողմնակիցների և հակառակորդների ձամբարները: Եվրասիական ռազմավարական հետազոտությունների կենտրոնի Հայկական ուսումնասիրությունների ինստիտուտի տնօրեն, պաշտոնաթող դեսպան Օ. Է. Լյութենը «Անադոլու» գործակալության հարցին ի պատասխան ասել էր. «Սերժ Սարգսյանը մեկ քարով երկու թռչուն է խփում: Եթե հրավերը հաջողությամբ պսակվի, նա երկրի ներսում կթուլացնի լարվածությունը: Անհաջողության դեպքում էլ այսպիսի նախածեռնություն ցուցաբերելու համար հեղինակություն ձեռք կբերի... Չեմ կարծում, որ թուրք հասարակությունը վատ ընդունի ֆուտբոլային հանդիպումը դիտելու համար Գյուլի Երևան գնալը... Հրավերի ընդունման դեպ-

¹⁴⁵ “TaraF”, 27.06.2008.

¹⁴⁶ **Ergan U.**, “Erivan-Ankara arası buzlar giderek eriyor”, 28.06.2008, <http://www.hurriyet.com.tr/gundem/9297587.asp>

քում Թուրքիան աշխարհում համակրանք ձեռք կբերի, նրան կողջունեն տարբեր երկրներ... Հայաստանի հետ հաշտվելը չի ենթադրում հաշտվել նաև սփյուռքի հետ, եթե համաձայնության գալու լինենք, սփյուռքը դեռ երկար ժամանակ համառորեն շարունակելու է այն սև քարոզչությունը, որը Թուրքիայի դեմ է ծավալում»¹⁴⁷:

Թուրք-հայկական գործարար միության համանախագահ Քասն Սոյաքը նախագահ Ս. Սարգսյանի հրավերը թուրք գործընկերոջը որակել է որպես «շատ հաճելի և անկեղծ» և եզրակացրել. «Նախագահ Գյուլն անպայման պետք է գնա Հայաստան»¹⁴⁸:

Եվ վերջապես, այցի գաղափարի հակառակորդների տեսակետներն է բյուրեղացրել նախկին արտգործնախարար Իլթեր Թուրքմենը, որը նշել է. «Չեմ կարծում, թե նախագահ Գյուլը կգնա Հայաստան: Հրավերի անկեղծության կամ երկու երկրների հարաբերություններին հնարավոր նպաստի մասին որևէ կարծիք չունեմ: Հայտնի չէ, թե հրավերի ընդունումն ինչ նպաստ կբերի երկու երկրների միջև առկա հարցերի կարգավորմանը, քանի որ մենք այդ երկրի հետ չունենք դիվանագիտական հարաբերություններ, իսկ մեր սահմանները փակ են... Եթե ես լինեի, չէի գնա»¹⁴⁹: Այդ շրջանում էլ թուրքական մամուլը, բնականաբար, ուշադրություն էր դարձրել այն հանգամանքին, թե հնարավոր է արդյոք, որ նախագահ Գյուլի այցը Հայաստան վնասի թուրք-ադրբեջանական ռազմավարական հարաբերություններին: Այսպես, «Զաման» թերթը գրում էր, որ նկատի ունենալով Թուրքիայի նախագահի սեպտեմբերյան ուղևորությունների ցանկը՝ թե՛ ուղղակի, թե՛ փո-

¹⁴⁷ Güll, Erivan'ın maç davetini kabul ederse..., 19.07.2008, <http://arsiv.ntv.com.tr/news/453540.asp>

¹⁴⁸ Նույն տեղում:

¹⁴⁹ Նույն տեղում:

խաբերական իմաստով կարելի է ասել, որ «դեպի Երևան Գյուլի ճանապարհին անցնելու է Բաքվով»¹⁵⁰ : «Հյուրիյեթ» թերթում տպագրված հոդվածում ներկայացվում էր «Ազգայնական շարժում» կուսակցությունից ԹԱՄԺ պատգամավոր Օքթայ Վուրալի ծայրահեղ բացասական դիրքորոշումը Գյուլի Երևան կատարելիք այցի հարցում, որն ավարտվում էր կտրուկ հայտարարությամբ. «Թուրքիան կարիք չունի Ադրբեջանին միայնակ թողնելու իր արդարացի դատի հարցում և գտնվելու մի օկուպանտ երկրի կողքին: Հանրապետության նախագահը թող չզնա, ֆուտբոլային հանդիպումը թող դիտի հեռուստատեսությամբ: Եթե հեռուստացույց չունի, կուղարկենք»¹⁵¹:

2008 թ. սեպտեմբերի 6-ին Թուրքիայի նախագահը ժամանեց Հայաստան: ՀՀ նախագահի մամուլի ծառայությունն այդ օրը տարածեց երկու հաղորդագրություն, որոնց համաձայն՝ մինչև ֆուտբոլային խաղը «տեղի է ունեցել երկու երկրների նախագահների հանդիպումը: Զրույցին մասնակցել են նաև Հայաստանի և Թուրքիայի արտաքին գործերի նախարարները: Հայաստանի և Թուրքիայի նախագահները խոսել են երկկողմ հարաբերությունների կարգավորման մասին, մտքեր փոխանակել տարածաշրջանային վերջին զարգացումների և խնդիրների վերաբերյալ:

Նշելով, որ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման լայն հնարավորություններ են բացվում, նրանք շեշտել են երկու երկրների ղեկավարների քաղաքական կամքը՝ պատասխանատվություն ստանձնե-

¹⁵⁰ **Kurt S.**, Gül'ün Erivan yolu Bakü'den geçecek, 30.07.2008, http://www.zaman.com.tr/dunya_gulun-erivan-yolu-bakuden-gececek_720081.html

¹⁵¹ St' u MHP'den Gül'e "Maçı televizyondan izle" önerisi, 01.09.2008, <http://www.hurriyet.com.tr/gundem/9795769.asp>

լու և ձեռնամուխ լինելու առկա խնդիրների կարգավորմանը, տարածաշրջանում խաղաղության և վստահության մթնոլորտի ստեղծմանը: Աբդուլլահ Գյուլի խոսքով, իրեն Հայաստան հրավիրելով նախագահ Սարգսյանը կատարել է առաջին քայլը, հրավերն իր կողմից ընդունվել է՝ այն վերածելով համատեղ նախաձեռնության, որն օրինակելի կարող է լինել ողջ տարածաշրջանի համար»¹⁵²:

Թուրքիայի Հանրապետական ժողովրդական կուսակցության առաջնորդ Ղենիզ Բայքալը նախագահ Գյուլի և վարչապետ Էրդողանի գործողությունները Երևան այցի նախօրեին անվանել էր «դավաճանություն»։ «Այն, ինչ անում է Էրդողանի կառավարությունը, ցավալի է: Թող իմ ադրբեջանցի եղբայրներն իմանան, որ ագրեսիվ Հայաստանի հետ հարաբերությունների հաստատումը թուրք ժողովրդի ցանկությունը չէ: Ես ներողություն եմ խնդրում իմ ադրբեջանցի եղբայրներից՝ Գյուլի և Էրդողանի դավաճանության համար... Մենք եղբայրներ ենք, և ես մինչև հիմա չեմ հասկանում, թե ինչպես կարող էինք այսպես վարվել... Ժողովուրդը դանրանց չի ների: Այս օրերին ես հազարավոր նամակներ եմ ստացել մեր հայրենակիցներից. նրանք ադրբեջանական ժողովրդի հետ են և իրենց եղբայրներին չեն դավաճանում... Թուրք և ադրբեջանցի ժողովուրդները, ինչպես նաև ամբողջ թուրքական աշխարհը երբեք չեն ների այդ դավաճանությունը: Ես կարծում եմ, որ թուրք ժողովուրդն իր միանշանակ գնահատականը պետք է տա Էրդողանի ու Գյուլի գործողություններին: Այդ կառավարությունը հեռացրել է մեզանից մեր կիպրոսցի

¹⁵²Տե՛ս Թուրքիայի Հանրապետության նախագահի այցը Հայաստանի Հանրապետություն, <http://www.president.am/hy/foreign-visits/item/2008/09/06/news-21/>

եղբայրներին ու հիմա նույնը անում է մեր ադրբեջանցի եղբայրների հետ»¹⁵³:

«Հյուրիխեթ» թերթերում հայ-թուրքական հարաբերությունների ուշագրավ անդրադարձներով հանդես եկավ փորձառու թուրք քաղաքական մեկնաբան Մեհմեդ Ալի Բիրանդը: Վերոհիշյալ թերթի 2008 թ. սեպտեմբերի 5-ի համարում հրապարակված «Գյուլը, ֆուտբոլային հանդիպմանը գնալով, ճիշտ քայլ կատարեց» հրապարակման մեջ նա հավանություն էր տալիս Գյուլի` Հայաստանի նախագահի հրավերն ընդունելուն և Երևան մեկնելուն: Ընդունելով, որ հայ-թուրքական երկխոսության սկիզբը ոմանց կողմից կարող է գնահատվել սոսկ որպես միջազգային հանրության առաջ խաղացվող մի գործողություն, հեղինակն այն նախ և առաջ կարևորել է «Հայկական հարցին» որևէ լուծում գտնել կարողանալու տեսանկյունից: Բիրանդը գրում էր. «Բազմիցս գնացել եմ Երևան այն տարիներին, երբ ուրիշները չէին կարող գնալ: Շատ լավ գիտեմ, թե ինչ է առկա հայաստանյան հասարակական կարծիքում, և ինչ զգացմունքներ կան Թուրքիայի հանդեպ: Գրեթե բոլորն իրավացիորեն կամ անիրավ կերպով, ուղեղների լվացման կամ էլ իրենց ընտանիքներից լսած իրական պատմությունների պատճառով ասում են մեզ: Սակայն, վստահ եղեք, ոչ միայն սփյուռքում ապրողները, այլև Հայաստանում բնակվող հայերի զգալի մի մասն էլ այլևս այնպիսի մի վիճակում է, որ հոգնել է Թուրքիայի պես դևի դեմ կռվե-

¹⁵³ St´u “Последствия "футбольной дипломатии" могут оказаться неожиданными”, 03.09.08, www.echo-az.info, St´u և հմնտ նաև **Çelik M.**, Baykal’dan Gü’le Erivan tepkisi, 05.09.2008, <http://www.milliyet.com.tr/Siyaset/HaberDetay.aspx?aType=HaberDetay&Kategori=siyaset&KategoriID=&ArticleID=987062&Date=05.09.2008&b=Baykal,%20Gulu%20kizdirdi>

լուց: Նրանք հավատում են ցեղասպանությանը, և անհնար է փոխել նրանց համոզմունքն այս հարցում: Այսուհանդերձ, առանց փոխելու իրենց տեսակետները՝ նրանք ցանկանում են հունի մեջ զցել հարաբերությունները Թուրքիայի հետ, բարձրացնել իրենց կյանքի որակը: Հայաստանում իշխանության եկած նոր ղեկավարությունն էլ ցանկանում է այս կամ այն ձևով կարգավորել հարաբերությունները Թուրքիայի հետ՝ առանց ցեղասպանության գաղափարից հրաժարվելու, և Թուրքիայի միջոցով ավելի ազատորեն ինտեգրվել Եվրոպային ու կարգավորել տնտեսությունը»¹⁵⁴: Բիրանդն, արձանագրելով, որ թե՛ Թուրքիայում և թե՛ Հայաստանում կան ուժեր, որոնք կողմ են երկու երկրների միջև եղած լարվածության շարունակմանը, հանգում է եզրակացության, որ Գյուլի այցելության արդյունքում կարող է «մի տաբու քանդվել»¹⁵⁵:

Նախագահ Գյուլի այցելությունը Երևան և Հայաստան-Թուրքիա ֆուտբոլային խաղի՝ երկու նախագահների համատեղ դիտումը, ինչպես և երկկողմ հանդիպման իրողությունը հետաքրքրությամբ և սրված ուշադրությամբ են ընդունվել թուրքական ՋԼՄ-ների կողմից: Սեպտեմբերի 7-ին վերադառնալով Երևանից Անկարա՝ Թուրքիայի նախագահը լրագրողներին ասել էր. «Գնդակը մեր դաշտում էր և չպետք է այնտեղ մնար: Այս այցով դրական նկարագիր ստեղծեցինք, դրական վարկանիշ ձեռք բերեցինք աշխարհում: Իմ այս այցը դրվատանքի է արժանանալու և դիտարկվելու է իբրև հանդգնության դրսևորում: Թուրքիայի համար անարդար է բացասական վարկանիշ ունենալը, իսկ ես մեծ կարևո-

¹⁵⁴ Տե՛ս **Birand M. A.**, Gül, maça gitmekle doğru adım attı..., 05.09.2008, <http://www.hurriyet.com.tr/yazarlar/9824710.asp>

¹⁵⁵ Նույն տեղում:

րություն եմ տալիս Թուրքիայի վարկանիշին»¹⁵⁶: Ըստ «Ջաման» թերթի՝ ինքնաթիռում Գյուլը ջերմ վերաբերմունքի համար շնորհակալություն էր հայտնել նախագահ Ս. Սարգսյանին և անդրադառնալով սահմանների բացման վերաբերյալ հարցին՝ ասել էր. «Եթե այս մթնոլորտը պահպանվի, ապա ամեն ինչ կմտնի հունի մեջ, կնորմալանա, սակայն ներկա պահին նման հարց չկա»¹⁵⁷:

«Հյուրիյեթի» սեպտեմբերի 9-ի համարում տպագրված «Գյուլը մի տաբու քանդեց» հոդվածում Մ. Ա. Բիրանըը նկարագրել է Թուրքիայի նախագահի այցը Երևան և «ֆուտբոլային դիվանագիտությանն» ուղեկցող իրադարձությունները: Հայաստանի ղեկավարության և հայ հասարակության նկատմամբ դրական տրամադրություն արտացոլող հրապարակման մեջ նա հատուկ կարևորում էր նոր երկխոսության գործընթացի սկիզբը, Թուրքիայի արտգործնախարարության պատվիրակության մնալը Երևանում և «Ճանապարհային քարտեզի» կազմումը, հետագա բարձր մակարդակի հանդիպումների ծրագրումը (մասնավորապես, Սերժ Սարգսյանի հնարավոր փոխադարձ այցը Թուրքիա և ներկայությունը Թուրքիա-Հայաստան ֆուտբոլային պատասխան խաղին), Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման հարցում նախապայմաններից հրաժարվելուն ուղղված Անկարայի որոշակի քայլերի իրողությունը: Միաժամանակ, Բիրանըը նշում էր, որ թուրք-հայկական հարաբերությունները բացառապես

¹⁵⁶ Güll'ün Erivan ziyareti dünya basınında, 07.09.2008, <http://www.cnnturk.com/2008/dunya/09/07/gulun.erivan.ziyareti.dunya.basininda/492734.0/index.html>

¹⁵⁷ Güll: Ziyaretim faydalı geçti, 07.09.2008, http://www.zaman.com.tr/politika_gul-ziyaretim-faydaligecegi_735261.html

Անկարայի և Երևանի դիրքորոշումներից չեն կախված: Զգալի է արտաքին ուժերի ազդեցությունը, հնարավոր են նոր ճգնաժամային իրավիճակներ: Հրապարակումն ավարտվում էր հետևյալ նախադասություններով. «Եթե հրապարակը ֆանատիկոսներին թողնեն, ապա այս գործից ոչինչ դուրս չի գա: Կրկին շնորհակալություն Գյուլին և Սարգսյանին՝ այս տաբուն քանդելու համար»¹⁵⁸:

Աբդուլլահ Գյուլի Երևան կատարած այցը և Թուրքիայի ու Հայաստանի միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու գաղափարը հստակ պաշտպանվում էին Թուրքիայում հայտնի փորձառու դիվանագետ, պաշտոնաթող դեսպան Վոլքան Վուրալի՝ «Թարաֆ» թերթի թղթակից Նեշե Դյուզելին տված ծավալուն հարցազրույցում, որտեղ նա պնդում էր, որ Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորումը բարենպաստ կարող է անդրադառնալ Թուրքիայի վարկանիշի վրա, էականորեն կարող է բարելավել տարածաշրջանային անվտանգությունն ու կայունությունը, ինչում շահագրգիռ են ոչ միայն տարածաշրջանի առավել ազդեցիկ երկիր հանդիսացող Թուրքիան և Հայաստանը, այլև երրորդ երկրները (մասնավորապես՝ Ադրբեջանը): Դեսպան Վուրալի դատողությունները հանգում էին հետևյալին. ա) Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ կարող էին հաստատվել դեռևս 1991 թ.՝ ԽՍՀՄ փլուզումից անմիջապես հետո: Դա կնպաստեր փոխադարձ անվտանգության և թշնամանքի մեղմացմանը, Հայաստանի կեցվածքը Թուրքիայի հանդեպ կդարձնեն ավելի պարտավորված, իսկ Թուրքիայի ազդեցությունը Հայաստանի վրա՝ ավելի մեծ, բ) եթե Լևոն Տեր-

¹⁵⁸Տե՛ս **Birand M. A.**,Gül, bir tabu yıktı..., 09.09.2008, <http://www.hurriyet.com.tr/yazarlar/9851895.asp>

Պետրոսյանի ժամանակ էականորեն բարելավվեին հայ-թուրքական հարաբերությունները, ապա չէր լինի 1998 թ.-ից սկիզբ առած Ռոբերտ Քոչարյանի իշխանության ազգայնական «ծայրահեղականությունը», գ) թուրքական կողմը, շարունակելով մերժել «ցեղասպանություն» որակումը, այսուհանդերձ, կարող է հաշտվել այն իրողության հետ, որ հայերը չեն հրաժարվելու ցեղասպանության մասին պնդումներից, դ) որպես Հայոց ցեղասպանության միջազգային դատապարտման ալիքը կասեցնելուն նպատակաուղղված քայլ՝ թուրքերը կարող են քննարկել անցյալի «ցավալի» իրադարձությունների համար հայերից նորողություն խնդրելու, Օսմանյան կայսրության բռնազաղթված նախկին հպատակների ժառանգներին (համապատասխան ցանկության դեպքում) թուրքական քաղաքացիություն շնորհելու և Թուրքիայի Հանրապետության տարածքում ապրելու իրավունք տալու և նույնիսկ «խորհրդանշական փոխհատուցման» հնարավորությունը, ե) պատմական իրողությունների (ցեղասպանության փաստի) ուսումնասիրության համար պատմաբանների հանձնաժողովի ստեղծումը պարտադիր չէ դարձնել երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման նախապայման, որովհետև թուրք-հայկական հարաբերությունների կարգավորումը (ըստ նրա՝ «Հայկական հարցի» լուծումը) նախ և առաջ քաղաքագետների ու քաղաքական գործիչների խնդիրն է, զ) հայերի՝ Թուրքիայի նկատմամբ տարածքային նկրտումները պարզապես «երազային» և բացարձակապես անիրականանալի են, քանզի Թուրքիայի զինուժի թվակազմը հավասար է Հայաստանի բնակչությանը¹⁵⁹:

¹⁵⁹ St' u **Düzel N.**, Volkan Vural: 'Ermeni ve Rumlar tekrar vatandaş olsun', 08.09.2008, <http://arsiv.taraf.com.tr /yazilar/nese-duzel/volkan-vural-ermeni-ve-rumlar-tekrar-vatandas/1841/>

Ակնհայտ է, որ Մ. Ա. Բիրանդի՝ թուրքական առավել մեծ տպաքանակ ունեցող թերթերում տպագրված և այլ պարբերականներում արտատպված կամ բազմաթիվ անդրադարձներ ունեցած վերոհիշյալ հրապարակումներն ու Վ. Վուրալի հարցազրույցը (Լեռնային Ղարաբաղի հակամարտության գոտու «գրավյալ» տարածքներից հայկական զինուժի դուրսբերման ակնկալիքով հանդերձ) առանձնանում էին առանց նախապայմանների Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման հնարավորությունն ընդունելու զգուշավոր դիրքորոշմամբ, ինչն, իհարկե, ընդհանուր առմամբ բնորոշ էր մեր կողմից մշտադիտարկման ենթարկված տեղեկատվության գերակշռող ծավալին, որտեղ առկա է հարաբերությունների կարգավորման նախապայմաններն այս կամ այն կերպ առաջ մղող դիրքորոշում:

Անդրադառնալով Ադրբեջանի քաղաքական և հասարակական շրջանակների արտակարգ գրգռված արձագանքին «ֆուտբոլային դիվանագիտության» մեկնարկի հարցում՝ «Միլլիյեթ» թերթի լրագրող Սամիի Իդիզը հարց էր բարձրացնում, թե ապա ինչպե՞ս է, որ Ադրբեջանը չի ցուցաբերել անհրաժեշտ ու մերձավորագույն դաշնակցին բնորոշ մոտեցում Հյուսիսային Կիպրոսի հարցում: Նա, մասնավորապես, գրում էր. «Միջազգային հարաբերությունները փոփոխական են, ուստի կառավարությունները պետք է զինված լինեն երկրի շահերին համապատասխան նոր քաղաքականություն մշակելու կարողություններով: Արդեն տապալված է «Ղարաբաղն անհրաժեշտության դեպքում պատերազմով վերցնելու» Ադրբեջանի մոտեցումը: Պատճառն ակնհայտ է. այդ բանը նրան թույլ չի Հայաստանի թիկունքին կանգնած Ռուսաստանը»¹⁶⁰:

¹⁶⁰ “Milliyet”, 08.09.2008

Թուրքիայում հայտնի հրապարակախոս-վերլուծաբան Բասըն Օրանը մի քանի օր անց լրացնում էր այդ միտքը: Հիշեցնելով Հյուսիսային Կիպրոսի հարցում Ադրբեջանի՝ Թուրքիայից տարբերվող մոտեցումը, նա գրում էր. «Եթե մտածում եք «փոխհատուցում կուզեն, հող կպահանջեն, և հետ կվերադառնան ապահովագրական ընկերությունները», ասեմ. «Եթե չճանաչենք, չե՞ն ուզելու»: Բացի այդ, եթե կա փոխհատուցում վճարելու իրավական անհրաժեշտություն, ո՞րն է լավը՝ վճարե՞լը, թե՞ «չենք վճարում» ասելով հոխորտալը, եթե չկա, ապա ինչո՞ւ ենք անհանգստանում: ...Եթե նկատի ունենք ՀՀ Անկախության հռչակագիրը՝ ասելով. «Հայերն աչք ունեն մեր հողերի վրա, որտեղ Արևելյան Անատոլիան որպես Արևմտյան Հայաստան են ներկայացնում», նշեմ, որ խնդրո առարկա հռչակագիրն ընդունվել էր 1990 թ. օգոստոսի 23-ին, այսինքն՝ նախքան ԽՍՀՄ փլուզումը, իսկ 1991 թ. սեպտեմբերի 23-ի հռչակագրում Արևմտահայաստան արտահայտությունը չի օգտագործվել: Ի վերջո, պետք է ընդունել, որ ոչ մի իրավիճակ չի կարող ավելի վատ լինել, քան Թուրքիայի ներկայիս իրավիճակը, որին ցեղասպանություն իրագործելու մեղադրանքով ներկայումս նսեմացնում է ողջ աշխարհը: Ժամանակն է հասկանալու, որ Հայկական հարցը ո՛չ հողի, ո՛չ էլ փոխհատուցման հարց է, այլ մեր ողջ ազգի հոգեբանության: Իսկ հոգեբանությունը սնուցում են այն հաստատություններն ու անհատները, որոնք, պաշտպանության տակ առնելով իթթիհադական մարդասպաններին, անամոթաբար հայտարարում են. «Մենք ոչ ոքի չենք սպանել, հայերը մեզ սպանեցին»¹⁶¹:

Հայաստանի և Թուրքիայի նախագահների երևանյան հանդիպումով սկսված «ֆուտբոլային դիվանագի-

¹⁶¹ “Radikal”, 14.09.2008.

տությունը» շարունակվեց երկու երկրների արտգործնախարարների մի ամբողջ շարք հանդիպումներով և Շվեյցարիայի արտգործնախարարության միջնորդությամբ՝ հայ-թուրքական գաղտնի դիվանագիտական բանակցություններով: Այդ բանակցությունները տևեցին ավելի քան մեկ տարի: Դրանք պահվում էին գաղտնի, սակայն թուրքական և ադրբեջանական լրատվամիջոցները բազմաթիվ մեկնաբանություններով ու կանխատեսումներով փորձում էին կանխորոշել դրանց ելքը: Չնայած բանակցությունների գաղտնիությանը, թուրքական մամուլում հաճախակի էին հրապարակումները, որոնք փորձում էին առաջ մղել շատ ավելի վաղ մշակված թուրքական քաղաքական մոտեցումները և ներկայացնում էին զանազան տեսակետներ, որոնք իրականում բանակցային գործընթացի հետ կապ չունեին, ինչպես, օրինակ, «պատմաբանների հանձնաժողով ստեղծելու մասին» հայկական կողմի «բարյացակամության» կամ Կարսի 1921 թ. պայմանագիրը Հայաստանի կողմից ճանաչելու մասին: Դա, իր հերթին, առաջացնում էր լարվածություն Հայաստանի քաղաքական դաշտում, որտեղ նույնպես մեծ ուշադրությամբ սպասում էին շվեյցարական բանակցությունների արդյունքին:

Հարկ է նշել, որ 2008 թ. երկրորդ կեսի ԱԶԿ արտաքին քաղաքականության կարևորագույն նկատված դրսևորումներից մեկը դարձավ Կովկասում անվտանգության և համագործակցության պլատֆորմի (ԿԱՀՊ) առաջադրումը: 2008 թ. օգոստոսի ռուս-վրացական «հնգօրյա» պատերազմի արդյունքում ակնհայտ դարձավ, որ Ռուսաստանի դիրքերը Հարավային Կովկասում էապես ամրապնդվեցին: Ռուսաստանի կողմից Հարավային Օսիայի և Աբխազիայի անկախության միա-

կողմանի ճանաչումը, ռուս-վրացական հարաբերությունների ծայրահեղ սրումը, ինչպես նաև ԼՂ հակամարտության զոտում իրավիճակի նոր լարումը ցույց տվեցին, որ անվտանգությունն ու կայունությունը Հարավային Կովկասում չափազանց փխրուն են: Այս պայմաններում ակնհայտ դարձավ նաև, որ տարածաշրջանում թուլանում են Թուրքիայի դիրքերը: «Զրո խնդիր հարևանների հետ» և «ռիթմիկ դիվանագիտություն» թուրքական համադրույթի շրջանակներում Թուրքիայի քաղաքական ղեկավարներն առաջադրեցին վերոհիշյալ պլատֆորմը: Այն նախատեսում էր տարածաշրջանային նոր կոնֆիգուրացիա՝ Ադրբեջան-Վրաստան-Հայաստան, գումարած Ռուսաստան-Թուրքիա: Այս նախածեռնությամբ առաջին անգամ հանդես եկավ Թուրքիայի վարչապետ Ռ. Թ. Էրդողանը 2008 թ. օգոստոսի 12-ին¹⁶²՝ նշելով, որ Թուրքիան կփորձի ձևավորել «Կովկասյան այլանս»՝ Բալկանյանի նմանությամբ, որտեղ կլինի նաև Ռուսաստանը: Թուրք հետազոտողները հիշեցնում են, որ ԿԱՀՊ-ը կարող էր դիտարկվել իբրև Կովկասում կայունության պակտի թարմացված տարբերակ, որը 2000 թ. հունվարին առաջարկել էր Թուրքիայի նախագահ Ս. Դեմիրելը: Չնայած այդ պակտի հարցում, որը պետք է ստեղծվեր ԵԱՀԿ հովանու ներքո, կովկասյան բոլոր երկրները համաձայն էին, բայց այն այդպես էլ չձևավորվեց: Այժմ, օգոստոսյան պատերազմից հետո, Ռուսաստանը համաձայնեց պլատֆորմի գաղափարի հետ, որովհետև այնտեղ ներկայացված էին տարածաշրջանից դուրս գտնվող ուժերը՝ օրինակ՝ ԱՄՆ-ը և ԵՄ-ը: Հայաստանը համաձայնեց այդ գաղափարին, ինչի մասին նախագահ Ա. Գյուլին ասել էր նա-

¹⁶²«Erdogan'in 'Istikrar Platformu' Onerisine Saakasvili'den Destek», Referans, 15.18.2008, p. 15.

խագահ Ս. Սարգսյանը «ֆուտբոլային դիվանագիտության» մեկնարկի ժամանակ՝ ձգտելով այդ հարթակում հաջողությամբ առաջ մղել ԼՂ հակամարտության կարգավորման տեսլականը: Վրաստանը խոսքով դեմ չէր պլատֆորմին, բայց գործնականում դեմ էր, որովհետև համաձայն չէր Ռուսաստանի հետ համագործակցել նախքան հայտնի հակամարտությունների կարգավորումը: Վրաստանը համաձայն չէր ակտիվորեն ներգրավվել այդ պլատֆորմում նաև այն պատճառով, որ այնտեղ ներկայացված չէին ԱՄՆ-ը և ԵՄ-ը: Հետաքրքիր է պլատֆորմին և հայ-թուրքական կարգավորմանը նվիրված Անկարայի տնտեսագիտության և տեխնոլոգիայի TOBB համալսարանի դոցենտ Միթհատ Չելիքփալայի տեսակետը: Ըստ նրա, ԿԱՀՊ նպատակն էր նպաստել տարածաշրջանում խաղաղությանն ու կայունությանը՝ երկխոսության միջոցով. «Պլատֆորմի մտահղացմամբ այն պետք է համախմբեր Հարավային Կովկասի երկրները և Ռուսաստանը ԵԱՀԿ սկզբունքների հիման վրա: Այն չէր մտահղացվել իբրև այլընտրանք տարածաշրջանում գործող հաստատություններին, միջազգային կազմակերպություններին կամ մեխանիզմներին, այլ իբրև տարածաշրջանային հաղորդակցության լրացուցիչ գործիք»¹⁶³: Եվ չնայած որևէ երկիր դրա դեմ չառարկեց, 2010 թ. և հետագա տարիների դրությամբ այն այդպես էլ գործնական որևէ զարգացում չունեցավ: Ավելին, Թուրքիայի նախածեռնությունները լարվածություն առաջացրեցին ԱՄՆ-ում առ այն, թե պաշտոնական Անկարան փորձում է գործել Արևմուտ-

¹⁶³ **Челикпала М.**, Турция и Южный Кавказ, см. в ежегоднике института Кавказа, Ереван, 2011, с. 176, Տե՛սնաև **Babacan A.**, “Calming the Caucasus”, International Herald Tribune, September 23, 2008.

քի մեջքի հետևում, ԵՄ և ՆԱՏՕ շրջանակներից դուրս՝ հարաբերություններ հաստատելով Ռուսաստանի հետ: Հետաքրքիր է, որ այդ գաղափարին դեմ չէր նաև Ադրբեջանը, որը նույնպես փորձում էր դրա միջոցով իրացնել իր շահերը: Չելիքփալան, մասնավորապես, գրում է. «Պակաս կարևոր չէ, որ տարածաշրջանի երկրները սպասում էին, որ նոր պլատֆորմն արդյունավետ գործիք կդառնա ռուս-վրացական պատերազմի բացասական տնտեսական հետևանքների վերացման ուղղությամբ... Վերջին հաշվով ԿԱՀՊ-ը այդպես էլ մնաց թղթի վրա, չնայած Հարավային Կովկասի երկրներից և ոչ մեկը չէր հրաժարվում նրան մասնակցելուց: Այս փաստը վկայում է, որ տարածաշրջանի երկրների միջև մրցակցությունը մնում է համագործակցությունն ու կայունությունն արգելակող գլխավոր երևույթը: Պլատֆորմը դարձավ հենց այն խնդիրների զոհը, որի լուծման համար էլ հղացված էր»¹⁶⁴:

2009 թ. հոկտեմբերի 10-ին Ցյուրիխում Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Էդուարդ Նալբանդյանը և Թուրքիայի Հանրապետության արտաքին գործերի նախարար Ահմեթ Դավութօղլուն ստորագրեցին երկու արձանագրություն, որոնք պատմության մեջ մտան «Ցյուրիխյան արձանագրություններ» անվանումով¹⁶⁵: ԱՄՆ պետական քարտուղար Հիլարի Քլինթոնի, Ֆրանսիայի Հանրապետության արտաքին գործերի նախարար Բեռնար Քուլենթրի և Ռու-

¹⁶⁴ Челикпала М., նշվ. աշխ., էջ 178-179:

¹⁶⁵ Արձանագրություն ՀՀ և ԹՀ միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին, http://www.mfa.am/u_files/20091013_protocol.pdf, Արձանագրություն ՀՀ և ԹՀ միջև հարաբերությունների զարգացման մասին, . http://www.mfa.am/u_files/20091013_protocol1.pdf

սաստանի Դաշնության արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովի՝ երեք երկրների հովանավորությունը խորհրդանշող անմիջական ներկայությամբ անցած ստորագրության արարողությունը նշանավորեց Շվեյցարական համադաշնության արտաքին գործերի նախարարության միջնորդությամբ ընթացած հայ-թուրքական դիվանագիտական բանակցությունների ավարտը: Չնայած այդ արձանագրություններն ակնհայտորեն արտահայտում էին առանց նախապայմանների դիվանագիտական հարաբերություններ հաստատելու և հայ-թուրքական սահմանը վերաբացելու մասին կողմերի հայտարարած սկզբունքները, սակայն դրանք անմիջապես հայտնվեցին քննադատության թիրախում: Արձանագրությունների հակառակորդներն անմիջապես մեջտեղ բերեցին դրանց առաջխաղացումը և վավերացման միջոցով իրականացումը նախապայմաններով պայմանավորելու ձգտումը:

Դեռ մինչև արձանագրությունների ստորագրումը, 2009 թ. փետրվարին թուրքական «Հյուրիյեթ» թերթը հրապարակել էր ԼՂ հակամարտության կարգավորման մի նախագիծ, որն, ըստ նրա, ստացել էր հայկական և թուրքական բանակցող կողմերի համաձայնությունը: Ըստ նախագծի, Հայաստանը Ֆիզուլիի (Վարանդա), Ադդամի (Ակն), Ջեբրայիլի (Ջրական), Կուբաթլուի (Սանասար), Ջանգելանի (Կովսական), ավելի ուշ և Քելբաջարի (Քարվաճառ) շրջանները վերդարձնելու էր Ադրբեջանին, ինչի դիմաց Ադրբեջանը վերագործարկելու էր Հայաստանի հետ հաղորդակցության ուղիները (օդային հաղորդակցությունն ու երկաթուղին)¹⁶⁶: Ուշագրավ է, որ այդ հրապարակմանն անդրադարձան և՛ Հա-

¹⁶⁶ Ergon U., Karabağ planı, 11.02.2009, <http://www.hurriyet.com.tr/gundem/10974755.asp>

յաստանի, և՛ Թուրքիայի, և՛ Ադրբեջանի արտգործնախարարությունները, որոնք հերքեցին այդ տեղեկատվությունը:

Յյուրիխյան արարողությունից մի քանի օր հետո՝ հոկտեմբերի 14-ին, Բուրսայում տեղի ունեցավ Թուրքիա-Հայաստան ֆուտբոլային հանդիպումը, որին ներկա էին նաև Հայաստանի և Թուրքիայի նախագահները:

Ըստ թուրքական լրատվամիջոցների, արձանագրությունները ստորագրման համար պատրաստ էին դեռևս 2009 թ. ապրիլին, սակայն վարչապետ Ռ. Թ. Էրդողանը հայտարարել էր. «ՄԱԿ-ը պետք է զորքերը Լեռնային Ղարաբաղից դուրս բերելու կոչ անի Հայաստանին: Պետք է առաջնահերթ լուծում ստանա Ադրբեջանի հետ Հայաստանի վեճը, որից հետո կկարգավորվեն նաև հայ-թուրքական հարաբերությունները»: Նույն օրը անգլիական «Ֆայնենշլ թայմս» թերթում լույս տեսավ նախագահ Ա. Գյուլի հարցազրույցը, որտեղ նա ասել էր. «Կովկասի գլխավոր խնդիրը Հայաստանի և Ադրբեջանի միջև առկա ղարաբաղյան հիմնահարցն է: Հավատացած եմ, որ 2009 թ. այդ առումով կլինի պատեհ առիթի տարի»: Ըստ թուրքագետ Հ. Չաքրյանի, Թուրքիայի նախագահը դրանով հակակշռում էր վարչապետի՝ առաջին հերթին Ադրբեջանի կարծի դիրքորոշումները սանձելու նպատակով արված հայտարարությունները¹⁶⁷:

¹⁶⁷ Տե՛ս **Չաքրյան Հ.**, Հայկական սահմանի հարցում Թուրքիան կանգնել է երկընտրանքի առջև, «Ազգ», 08.04.2009, տե՛ս նաև Interview Transcript: Abdullah Gül, “Financial Times”, 08.04.2009, <http://www.ft.com/intl/cms/s/0/47991556-2446-11de-9a01-00144feabdc0.html>

*

* *

Հայ-թուրքական արձանագրությունների ստորագրումից հետո Թուրքիայի Ազգային մեծ ժողովում տեղի ունեցան լսումներ: Այդ լսումներում, ինչպես և սպասվում էր, բուռն քննարկումներ տեղի ունեցան, մասնավորապես՝ Հայոց ցեղասպանության հարցի կապակցությամբ: Արտգործնախարար Ահմեթ Ղավութօղլուն, ներկայացնելով, որ արձանագրություններում նախատեսված է պատմական հարթության հարցերով զբաղվող ենթահանձնաժողովի ստեղծում, փորձում էր հիմնավորել, որ այդ ենթահանձնաժողովը քննարկելու է Հայոց ցեղասպանության հարցը: Սակայն ընդդիմադիր ժողովրդահանրապետական և «Ազգայնական շարժում» կուսակցությունները քննադատել էին կառավարությանը՝ պնդելով, որ հիշատակված ենթահանձնաժողովի գործառույթն այն չէ, ինչ ներկայացնում է Ա. Ղավութօղլուն, և որ Հայոց ցեղասպանության հարցն այդ հարթակում չի քննարկվելու: 2009 թ. հոկտեմբերի 21-ին Թուրքիայի ԹԱՄԺ նիստում բավական հետաքրքիր էր ընդդիմադիր քրդական «Ժողովրդավարական հասարակություն» կուսակցության պատգամավոր Սելահեթին Ղեմիրթաշի ելույթը, որում նա արտահայտում էր իր կուսակցության տեսակետները: Խորհրդարանի ամբիոնից նա կատարեց մի շարք ուշագրավ հայտարարություններ՝ արժանանալով իշխող ԱԶԿ, ինչպես նաև ընդդիմադիր ԺՀԿ, ԱՇԿ կոշտ քննադատությունը: Ըստ Ղեմիրթաշի. «Հայ-թուրքական հարաբերություններում կա հարյուր տարվա վաղեմության մի պատմա-

կան խնդիր: 1915-1916 թթ. այդ ժամանակվա երիտ-թուրք վարչախմբի կողմից Անատոլիան թուրքացնելու, իսլամացնելու նպատակով սիստեմատիկ ձևով կիրառվել է ոչ մուսուլմանների ոչնչացման քաղաքականություն... Այդ ժամանակ հայ ժողովրդի հանդեպ կիրառվածներն ընդհանրապես տեղ չեն գտել պատմության գրքերում, կրթության նախարարության հրատարակած դասագրքերում, ասես դրանք տեղի չեն ունեցել»¹⁶⁸:

Արձանագրությունների վավերացման հարցում հայկական կողմի դիրքորոշումն այն էր, որ դրանք պետք է առաջինը վավերացնի Թուրքիայի խորհրդարանը, կամ երկու խորհրդարանները վավերացնեն միաժամանակ: Սակայն աճող ադրբեջանական ճնշումների և Թուրքիայի ներսում իշխող ԱԶԿ կուսակցության հանդեպ ընդդիմադիր ուժերի հարձակումների պայմաններում Թուրքիայի քաղաքական ղեկավարներն առաջ էին տանում այն գիծը, որ Թուրքիայի խորհրդարանն ինքնուրույն քաղաքական մարմին է, որտեղ յուրաքանչյուր պատգամավոր ունի իր սեփական քաղաքական դիրքորոշումը: Ավելին, 2009 թ. հոկտեմբերի 15-ին Եվրամիության անդամակցության հարցերով Թուրքիայի բանագնաց էգեմեն Բաղըշը հայ լրագրողների հետ զրույցում ասել էր. «Շատ բարդ կլինի Թուրքիայի խորհրդարանից ակնկալել հայ-թուրքական երկու արձանագրությունների վավերացումը, քանի դեռ Ղարաբաղի հարցում չկա նկատելի առաջընթաց»¹⁶⁹:

Թուրք-հայկական հարաբերությունների կարգավորման նախապայմանների առաջադրման փաստարկ-

¹⁶⁸ Մելքոնյան Ռ., Հայոց ցեղասպանության խնդիրը Թուրքիայի խորհրդարանում, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=6144:

¹⁶⁹ Bağış, Ermenistan'dan gelen gazetecileri kabul etti, <http://egemenbagis.com/tr/1123>

ման գործընթացում ավանդաբար պահպանողական դիրքորոշում դրսևորեցին հիմնահարցով զբաղվող թուրք վերլուծաբանները: Խորհրդային Միության փլուզումից և Թուրքիայի Հանրապետության կողմից Հայաստանի Հանրապետության անկախության ճանաչումից հետո Թուրքիայում իշխանության եկած բոլոր (Սուլեյման Դեմիրելի, Թանսու Չիլերի, Մեսութ Յըլմազի, Նեջմեթին Էրբաքանի, Բյուլենթ Էջևիթի, Ռեջեփ Թայիփ Էրդողանի) գլխավորած կառավարությունները Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման «զգայուն կետը» մշտապես դիտարկել են թուրք-ադրբեջանական հարաբերությունների համատեքստում, թուրք քաղաքական վերնախավի և գիտական ու լրագրողական ընտրանու ներկայացուցիչների զգալի մասը ծանրաբեռնված է նախկինում արված ու Հայաստանին նախապայմաններ առաջադրող հայտարարությունների և հրապարակումների զգալի «բեռով», ինչն ակնհայտորեն հնարավոր չէ արագ թոթափել անգամ բարձր իշխանությունների կողմից ուղղորդվող որոշակի գործողությունների ու մոտեցումների պարագայում: Հատկապես ակնհայտ է, որ Թուրքիայի քաղաքական ընդդիմությունը Հայաստանի հետ հարաբերությունների հնարավոր կարգավորման «զգայուն» հարցը հնարավորինս շահարկում է իշխանությունների քննադատության համար:

Հայաստանի հետ առանց հայտնի նախապայմանների հարաբերությունների կարգավորման հետևողական մերժման ջատագովության ցայտուն օրինակ էր Ս. Լաչիների մեկ այլ՝ «Հայաստանը կարող է ճանաչել Թուրքիայի սահմանները» հրապարակումը, որտեղ ձևակերպվում է «այն գինը», որը Հայաստանը պետք է վճարի Թուրքիայի հետ հարաբերությունները կարգավորելու, երկաթուղային և ավտոմոբիլային ճանապարհների բացման համար: Հեղինակի համար անկասկած է,

որ Հայաստանի ղեկավարներից հարկ է ակնկալել հստակ հայտարարություն Թուրքիայի հետ առկա պետական սահմանի ճանաչման մասին: Ընդ որում, հեղինակը դա միանգամայն հնարավոր էր համարում՝ ելնելով հայկական պատասխանատուների հավաստիացումներից: Իսկ դրանից հետո ճանապարհների վերաբացման համար ժամանակ է պետք, որի ընթացքում Հայաստանը պետք է կատարի այլ քայլեր, մասնավորապես՝ իր գործերը դուրս բերի «օկուպացված տարածքներից»¹⁷⁰:

Թուրքական մամուլում և ընդհանրապես հասարակական կարծիքում, անշուշտ, խիստ զգալի է նաև «ադրբեջանական գործոնը»: Ադրբեջանական ԶԼՄ-ները նույնպես ուշադրությամբ հետևել են Գյուլ-Սարգսյան հանդիպմանն ու Հայաստան-Թուրքիա ֆուտբոլային խաղին, և առաջին արձագանքներն իսկ եղել են զգայուն ու ցավոտ: Ադրբեջանական տեսակետների հանրագումարը հանգում էր հետևյալին. Հայաստանը չի բավարարել Լեռնային Ղարաբաղից գործերը դուրս բերելու պահանջը և չի հարգում Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը, չի հրաժարվում 1915 թ. Հայոց ցեղասպանությունը միջազգային ասպարեզում դատապարտել տալու դիրքորոշումից: Այս պայմաններում Հայաստանի հետ Թուրքիայի կողմից երկխոսություն սկսելու քայլը գնահատվում է իբրև ադրբեջանական շահերի դեմ ուղղված քայլ, և սա՝ այն դեպքում, երբ

¹⁷⁰ Տե՛ս **Laçiner S.**, Ermenistan, Türkiye'nin Sınırlarını Tanıyabilir, http://www.usak.org.tr/analiz_det.php?id=1&cat=365365889#.VTtRvI_sby, նույն տեղում տե՛ս ու հմնտ նաև **Laçiner S.**, Türkiye, Gürcistan ve Azerbaican'ı Demiryoluyla Bağlamak, 24.07.2008, ինչպես նաև նույն հեղինակի՝ **Laçiner S.**, Ermenistan-Türkiye İlişkilerinde Sınır Kapısı Sorunu ve Ekonomik Boyut, <http://www.eraren.org/index.php?Page=Dergiler&IcerikNo=154>:

Ադրբեջանը Թուրքիայի մերձավորագույն ռազմաքաղաքական դաշնակիցն է, իսկ թուրք-ադրբեջանական հարաբերությունները գնահատվում են իբրև «եղբայրական, դաշնակցային ու գործընկերային»: Դեռ այցի նախօրեին ադրբեջանական խորհրդարանի պատգամավոր Գանիրա Փաշանան այսպես էր ձևակերպել ադրբեջանցիների ակնկալիքը նախագահ Գյուլից. «Եթե Աբդուլլահ Գյուլը Հայաստանում հանդես գա լրատվամիջոցների առջև և հստակ հայտարարի, որ ադրբեջանական հողերը օկուպացված են Հայաստանի կողմից և մինչև այն պահը, քանի հողերը զավթված են, Հայաստանի հետ որևէ կապերի ստեղծման մասին խոսք լինել չի կարող, և այդ այցից հետո իր խոսքի տերը կլինի, և չի ստեղծվի որևէ կապ այդ երկրի հետ, դա մի քիչ կթեթևացնի մեր վերքը: Ահա թե ինչու շատ կարևոր են այն պատգամները, որոնցով Աբդուլլահ Գյուլը հանդես կգա Երևանում, և Թուրքիայի հաջորդ արարքները՝ նրա հայրենիք վերադառնալուց հետո»¹⁷¹:

Գյուլի Հայաստան կատարած այցի նախօրեին ադրբեջանցի մի խումբ ճանաչված քաղաքագետների հարցում է անցկացրել Day.az-ը: Քաղաքագետ Ջարդուշտ Ալիզադեն համոզված էր, որ ադրբեջանցիները վաղուց պետք է ազատվեին այն պատրանքից, թե որևէ մեկը (տվյալ դեպքում՝ Թուրքիան) կլուծեր իրենց հիմնախնդիրները, մասնավորապես՝ Հայաստանի կողմից ադրբեջանական տարածքների «օկուպացման» հարցը: Ալիզադեն նաև ասել էր. «Լեռնային Ղարաբաղը և թշնամու կրնկի տակ գտնվող այլ հողերը լոկ մեր՝ ադրբեջանական գործն է, մեր հայելին, որում արտացոլ-

¹⁷¹ St´u **Пашаева Г.**, “С визитом президента Турции в Армению не может согласиться ни один азербайджанец”, 02.09.2008, <http://news.day.az/politics/129320.html>

վում են պատվի և արժանապատվության մասին մեր պատկերացումները»¹⁷² : Ռասիմ Աղաևը կարծիք էր հայտնել, որ Աբդուլլահ Գյուլի Երևան կատարելիք այցից հետո Հայաստանի և Թուրքիայի փոխհարաբերությունները կարող են վերելք ապրել, ինչն Ադրբեջանին կդնի շատ երկիմաստ վիճակում, որովհետև այդ դեպքում Ադրբեջանը կմնա տարածաշրջանում առանց հզոր գործընկերոջ, այն դեպքում, երբ Հայաստանը միշտ կարող է հույս դնել Ռուսաստանի աջակցության վրա¹⁷³ : Իլգար Մամեդովը կարծում էր, որ Գյուլը պետք է փորձեր բացատրել հայերին, որ եթե նրանք հրաժարվեն Ադրբեջանի և Թուրքիայի նկատմամբ տարածքային նկրտումներից, ապա Հայաստանը հսկայական առավելություններ կստանա տարածաշրջանային տնտեսական ու քաղաքական համագործակցությունից¹⁷⁴ : Ադրբեջանական Միլլի մեջլիսի պատգամավոր Նասիբ Նասիբլին կարծում էր, որ Ադրբեջանի ջանքերը Հայաստանին մեկուսացնելու ուղղությամբ ոչ մի արդյունք չեն տվել : Հայաստանը չի հրաժարվել Լեռնային Ղարաբաղի հակամարտության հարցում իր դիրքորոշումից : Ադրբեջանի քաղաքականությունն անարդյունք է դուրս եկել : Մեկ այլ հրապարակման մեջ վերոհիշյալ Ռասիմ Աղաևը նաև կանխատեսել էր, որ պաշտոնական Անկարան, թերևս, պատրաստ կլինի բացել սահմանները Հայաստանի հետ և աչք փակել Երևանի ռազմատենչ կեցվածքի վրա, իսկ ադրբեջանցիները կդառնան ականա-

¹⁷² **Ализаде З.**, “Парламент Турции будет оттягивать ратификацию”, 13.10.2009, <http://news.day.az/politics/176402.html>

¹⁷³ Տե՛ս **Агаев Р.**, “Гюль, поехав в Ереван, хочет показать...”, 03.09.2008, <http://www.1news.az/politics/20080903055450088.html>

¹⁷⁴ Տե՛ս **Мамедов И.**, “Если Москва в Карабахе не поможет Баку, то он сделает выбор не в её пользу”, 01.12.2009, <http://www.regnum.ru/news/polit/1230512.html>

տեսն այն բանի, թե ինչպես թուրքական ազգային շահերին հակառակ՝ Անկարան կգնա Հայաստանի հետ բարիդրացիական հարաբերությունների հաստատմանը, իսկ Հայաստանը չի հրաժարվի ադրբեջանական տարածքների «օկուպացիայից», Ադրբեջանն էլ ստիպված կլինի միայնակ դիմակայել հայկական ծավալապաշտությանը¹⁷⁵:

Հատկանշական է, որ թուրքական քայլերի նկատմամբ ադրբեջանական իշխանությունների համեմատաբար ավելի չափավոր-զգուշավոր գնահատականներին հակառակ ընդդիմության տեսակետներն ավելի կտրուկ-զգացմունքային-հավակնոտ էին: Այսպես, սեպտեմբերի 6-ին Ադրբեջանի նախագահի աշխատակազմի միջազգային կապերի բաժնի վարիչ Նովրուզ Մամեդովը, անդրադառնալով այն հարցին, թե նախագահ Գյուլի այցը համաձայնեցված էր արդյոք Ադրբեջանի հետ, պնդել է, որ այդ մասին ոչինչ ասել չի կարող. «Համաձայնեցման կարիք չկա: Թուրքիան անկախ պետություն է, որը կարող է ընդունել ազատ որոշում: Այսօր Ադրբեջանի և Թուրքիայի հասարակայնությունն ամենաշատը նշանակություն է տալիս հարցի ձևական կողմին և չի ուզում անել տրամաբանական եզրակացություններ: Սակայն քաղաքականության մեջ կարիք չկա նման շտապողական քայլեր անելու: Ի՞նչ արժե մեկ-երկու ամիս սպասելը: Մենք ամեն ինչ կտեսնենք: Հնարավոր է, որ այսօր այդ այցը դատապարտողները հետո փոշմանեն: Տեսկանորեն այդպես էլ է հնարավոր»: Ըստ Մամեդովի՝ «Հայաստանի ղեկավարությունն այսօր գտնվում է ծանր իրավիճակում, որի պարագայում հայերի համար բացակայում են որևէ բարոյական սկզբունքներ: Այս իրավիճակում նրանք պատ-

¹⁷⁵Տե՛ս **Рзаев С.**, Турция готовит сюрприз, “Echo-az”, 08.09.2008.

րաստ են ցանկացած քայլի: Տարածաշրջանի գործընթացների պատճառով Հայաստանը գտնվում է դժվար դրության մեջ: Այսօր Հայաստանի դժվարին իրավիճակի պատճառով հայերը կարող են հերթական անգամ երեսպաշտություն անել... Այցի նպատակը Հայաստանի ցանկությունն է՝ Թուրքիայից աջակցություն ստանալ, սակայն Թուրքիան չի ցուցաբերում այդ աջակցությունը: Այս այցելությունը չի նշանակում, որ Թուրքիան բացում է սահմանները Հայաստանի հետ: Այն բանից հետո, երբ հայտնի կդառնան այցի և քննարկումների մանրամասները, հնարավոր կլինի հայտարարություններ անել տվյալ այցի մասին»¹⁷⁶:

2009 թ. հոկտեմբերի 10-ին Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու և միջպետական հարաբերությունների զարգացման մասին արձանագրությունների ստորագրումը և դրան հաջորդող հայաստանյան և թուրքական քաղաքական գործիչների հայտարարությունները նույնպես մշտապես գտնվել են թուրքական ՋԼՄ-ների և վերլուծաբանների ուշադրության կենտրոնում: Հայաստանի նկատմամբ վարվող քաղաքականության «զգայուն» հարցում նախապայմաններից հրաժարվելու մեջ մեղադրվող, ինչպես նաև Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման հովանավորների առջև պատասխանատվություն ստանձնած Թուրքիայի ղեկավարները չէին կարող չանել հայտարարություններ՝ մեղմելու սեփական հանրային տրամադրությունները, բայց, միևնույն է, այդ հայտարարությունների անկեղծությունը

¹⁷⁶Տե՛ս Վարչապետի գրասենյակի հաղորդագրությունը: «Визит президента Турции в Армению не скоро забудется», 06.09.2008, <http://ru.apa.az>:

կրկին կասկածի տակ էր դրվում թուրքական ընդդիմության և ադրբեջանամետ վերլուծաբանների կողմից¹⁷⁷:

*

*

*

Հայ-թուրքական երկու արձանագրությունների՝ Թուրքիայի և Հայաստանի խորհրդարաններ մտնելուց անմիջապես հետո թե՛ Թուրքիայում, թե՛ Հայաստանում սկսեց քննարկվել դրանց վավերացման հնարավորությունը¹⁷⁸:

Թուրքիայի Ազգային մեծ ժողովում մեծամասնություն կազմող ԱԶԿ տարբեր քաղաքական գործիչներ, ի պատասխան ազգայնական ընդդիմության հարձակումների, սկսեցին հայտարարել, որ Հայաստանի առջև պայման են ձևակերպելու: Պայմանը, որն, ըստ երևույթին, վավերացման ժամանակ պետք է ընդուներ վերապահման տեսք, վերաբերելու էր Լեռնային Ղարաբաղի հակամարտության գործընթացում Հայաստանից զիջումներ կորզելուն: Թե ինչ էր ակնկալում թուրքական հասարակական-քաղաքական կարծիքը «Ղարաբաղյան բանակցություններում առաջընթաց» ասելով՝ կարելի է հասկանալ թուրքական և ադրբեջանական առանձին լրատվամիջոցների հրապարակումներից:

¹⁷⁷ Տե՛ս Տասը հարց, տասը պատասխան, Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման ու երկկողմ հարաբերությունների զարգացման մասին արձանագրություններ: Տեսակետներ են հայտնում ԵՊՀ փորձագետները (պատ. խմբ. պրոֆ. Ա. Միմոնյան), Երևան, 2009թ., էջ 18-20:

¹⁷⁸ Մասնավորապես տե՛ս **Mercan M.**, “Protokolün kilit noktası”, 15.01.2010, http://www.cumhuriyet.com.tr/haber/diger/112864/Protokolun_kilit_noktasi_Azerbaycan_.html:

խոսքը վերաբերում է ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում վարվող բանակցություններում Հայաստանից խոստում և գործնական քայլեր ակնկալելուն, որոնք վերաբերում են նախկին ԼՂԻՄ սահմաններից դուրս, այսպես կոչված, «գրավյալ տարածքներից» հայկական զինված ուժերը դուրս բերելուն և այդ տարածքներն Ադրբեջանի գերակայությանը վերադարձնելուն: Ընդ որում, հատկապես ադրբեջանական մամուլում քննարկվում էին նույնիսկ այնպիսի մանրամասներ, կարծես սկզբունքային համաձայնությունն արդեն փաստացի ձեռք է բերված: Այսպես, խոսքն այն մասին էր, որ սկզբում կվերադարձվեն Աղդամի (Ակնա), Ֆիզուլիի (Վարանդա), Ջանգելանի (Կովսական) և Կուբաթլիի (Սանասար) նախկին վարչական շրջանները, իսկ ավելի ուշ՝ Լաչինի (Բերձոր) և Քելբաջարի (Քարվաճառ) շրջանները: Այս բոլոր խոսակցությունների և քննարկումների հիմք էր ընդունվում Հայաստանի՝ իբր այն դիրքորոշումը, ըստ որի՝ պաշտոնական Երևանը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ինքնիշխանության ճանաչման դեպքում պատրաստ կլինի այդպիսի զիջումների գնալ Ադրբեջանին: Վերոհիշյալ վերապահման, որն ընդունված է միջազգային պայմանագրերի մասին Վիեննայի 1969 թ. կոնվենցիայով, բովանդակությունն, ըստ երևույթին, թուրքական խորհրդարանում ձևակերպվելու էր այնպես, որ Թուրքիան կվավերացնի երկու արձանագրությունները, սակայն դիվանագիտական հարաբերությունների հաստատման գործընթացը կգործարկի և թուրք-հայկական սահմանը կվերաբացի Հայաստանի կողմից Ադրբեջանի նկատմամբ որոշակի զիջումների գնալու դեպքում միայն¹⁷⁹:

¹⁷⁹ Տե՛ս **Laçiner S.**, Bir Ermeni Tasarısı Hiç Bu Kadar İşe Yaramamıştı, 10.03.2010,

Այս դիրքորոշումը թուրքական հասարակական-քաղաքական կարծիքում, կարծես թե, բյուրեղացավ և առարկայական բովանդակություն ստացավ թուրք-հայկական երկխոսության ծավալման կապակցությամբ քննարկումների արդյունքում, սակայն այն, ըստ էության, նոր չէր: Հիշեցնենք, որ սկսած 1993 թ.-ից՝ թուրքական քաղաքական շրջանակները Հայաստանի հետ հարաբերությունները կարգավորելու և Հայաստանի շրջափակումը դադարեցնելու պայմաններից մեկը մշտապես դիտարկել են Արցախյան խնդրում պաշտոնական Երևանից միակողմանի գիջումներ ստանալը: Այսպիսով՝ քննության ժամանակաշրջանն ընդգրկող վերջին երկու տարիներին ծավալված դիվանագիտական աշխուժացած շփումների ընթացքում քաղաքական քննարկումները թուրքիայում ընդամենը ևս մեկ անգամ վերածնակերպեցին թուրքական իշխանությունների 17-ամյա կարծր դիրքորոշումը: Այդ դիրքորոշումները պաշտոնապես բարձրաձայնեցին թուրքիայի վարչապետ Ռ. Թ. Էրդողանը¹⁸⁰ և արտաքին գործերի նախարար Ա. Դավութօղլուն:

Վերլուծելով Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի հետ թուրքիայի հարաբերությունների վիճակը և ընթացող գործընթացները՝ հայ-թուրքական աշխուժացած շփումներին անդրադարձել է Բ. Արասը: Ըստ նրա. «Թուրքական քաղաքական գործիչների մեջ դիտարկ-

<http://www.usak.org.tr /print.php?id=1135&z=2>

¹⁸⁰ Թուրք վերլուծաբաններն ընդգծում են, որ եթե թուրքական ղեկավարները մշտապես շեշտել են, որ Հայաստանի ու թուրքիայի միջև հարաբերությունների կարգավորման գործընթացը կախված է դարաբաղյան հարցի կարգավորումից, ապա Հայաստանի ղեկավարներն իրենց հայտարարություններում անմիջապես հակադարձել են, որ «Ղարաբաղի և սահմանների բացման միջև ոչ մի առնչություն չկա»:

վում է Հայաստանի հանդեպ վերաբերմունքի էական փափկացում... 2008 թ. դեկտեմբերին թուրքական մտավորականության ներկայացուցիչների 200 հոգանոց խումբը նամակ հրապարակեց՝ ներողություն խնդրելով «Մեծ Աղետի համար, որին ենթարկվել են Օսմանյան կայսրության հայերը 1915 թ.»¹⁸¹: Թուրքիայի նախագահ Ա. Գյուլն այդ նամակի հրապարակումն ընկալեց իբրև բացված հնարավորություն՝ երկրում սկսելու բանավեճ թուրքական պատմության այդ էջի շուրջ: Թուրքական ԱԳՆ հայտարարությունը նման էր Գյուլի արձագանքին, և ընդգծվում էր այլընտրանքային կարծիքների հնարավորությունը ժողովրդավարական հասարակության մեջ: Չնայած այդ հայտարարությանը քննադատաբար վերաբերվեց վարչապետ Ռ. Թ. Էրդողանը և այն սուր քննադատության ենթարկվեց ազգայնական շրջանակների կողմից, այնուամենայնիվ, նախկինում տաքու եղած հայկական թեման շոշափվեց, և պարզ դարձավ, որ Թուրքիայում փոխվում է վերաբերմունքը Հայկական հարցի նկատմամբ»¹⁸²: Ուսումնասիրելով Թուրքիայի ակտիվությունը, մասնավորապես՝ շփումները Ռուսաստանի, Կրաստանի և Ադրբեջանի քաղաքական ղեկավարների, ինչպես նաև աշխուժացած շփումները ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների հետ՝ ԼՂ հակամարտության կարգավորման գործընթացն աշխուժացնելու ուղղությամբ, Բ. Արասը եզրակացնում էր. «2008 թ. ռուս-վրացական ձգնաժամը ցուցադրեց տարածաշրջանային տերություններին խա-

¹⁸¹ Նույն տեղում:

¹⁸² Նույն տեղում էջ 174-175, տե՛ս և հմմտ. նաև **Berkan I.**, *Kişisel Bir Şey, "Radikal"*, 19.12.2008, *Kampanya Açık Toplumun Göstergesi, Taraf*, 18.12.2008, **Çandar C.**, *Genelkurmay, Sivil ve Ermeni Tabusu...*, "Radikal", 20.12.2008.

դի տարածաշրջանային կանոնների փոփոխության կարևորությունը: Ստատուս-քվոն տարածաշրջանում պետք է փոխվի, իսկ նոր տարածաշրջանային կարգը պետք է հիմնված լինի նոր հռետորաբանության, տն տեսական անկախության պրակտիկայի, քաղաքական համագործակցության և տարածաշրջանային կայունության ու բարգավաճման վրա: Այդ իմաստով Թուրքիայի պատրաստակամությունը և նրա նոր ակտիվ արտաքին քաղաքականությունը դրական քայլ են նոր տարածաշրջանային կարգի հաստատման ուղղությամբ... Այն քայլերը, որ Թուրքիան ծրագրում է իրականացնել կովկասյան տարածաշրջանում, կարևոր նշան են այն բանի, որ Թուրքիան կշարունակի ունենալ տարածաշրջանի զարգացման մեջ դրական ներդրում»¹⁸³:

Ուսումնասիրելով 2010 թ. Թուրքիայի քաղաքականությունը Հարավային Կովկասի ուղղությամբ՝ TESEV-ի (Թուրքիայի տնտեսական և հասարակական հետազոտությունների հիմնադրամ) տնօրեն Այբարս Գորգուլուն ընդգծում էր, որ Հարավային Կովկասը եղել է Թուրքիայի արտաքին քաղաքական նախապատվությունների շարքում, մասնավորապես՝ Հայաստանի հետ հարաբերությունները կարգավորելու փորձերի տեսանկյունից: Կարգավորման այդ փորձը, նրա կարծիքով, պատմական կարևորության նախագիծ էր, որը 2008-2010 թթ. մնում էր որպես կովկասյան ուղղությամբ Թուրքիայի հիմնական նախապատվություն: Նախ և առաջ Ադրբեջանի, այնուհետև՝ Վրաստանի հետ հարաբերությունների զարգացումից հետո նրա տարածաշրջանային քաղաքականության երրորդ բաղադրիչը համարվել են հարաբերությունները Հայաստանի հետ: Անվանելով այդ հարաբերությունների պատմությունը «հա-

¹⁸³ **Apac B.**, նշվ. աշխ, էջ 180:

վերժական փակուղի»՝ Ա. Գորգուլուն նշում է, որ այդ փակուղուց ամենակարևոր քայլն արվեց, երբ Թուրքիան և Հայաստանը ստորագրեցին Ցյուրիխյան արձանագրությունները, սակայն այնուհետև չվավերացվեցին, «որովհետև 2010 թ. ապրիլին հայկական ղեկավարությունը հայտարարեց դրանց վավերացման սառեցման մասին»¹⁸⁴: Կրկին ակնհայտ է, որ թուրք վերլուծաբանը փորձում է արձանագրությունները չվավերացնելու մեղքը բարդել հայկական կողմի վրա: Այդ ճանապարհին թուրքական քաղաքականության համար, ըստ վերլուծաբանի, հիմնախնդիրները շատ էին. «դա և՛ երկխոսության համար խողովակների անբավարարությունն է, և՛ կողմերի միջև փոխըմբռնման բացակայությունը, և՛ Թուրքիայի ու Ադրբեջանի միջև մտերիմ հարաբերությունները, և՛ փակուղային իրավիճակը դարաբաղյան հակամարտության մեջ, և՛, վերջապես, ընդհանուր ողբերգական անցյալը, որը բոլորովին տարբեր է մեկնաբանվում երկու երկրներում»¹⁸⁵: Վերլուծելով արձանագրությունների ստորագրմանը հաջորդած գործընթացները Հայաստանում, մասնավորապես ՀՀ Սահմանադրական դատարանի 2010 թ. հունվարի 10-ի եզրակացության այն մասը, որտեղ հղում կա 1990 թ. Անկախության հռչակագրի 11-րդ կետի վրա, որը նշում է, որ Հայաստանի Հանրապետությունն աջակցում է Օսմանյան կայսրությունում և Արևմտյան Հայաստանում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացին, վերլուծաբանը գրել է, որ թուրքական կողմի համաձայն, նման մեկնաբանությունը, փաստորեն, ծախողում է պատմաբանների ենթահանձնաժողովի

¹⁸⁴ Գորգուլու Ա., Турция и Южный Кавказ, см. в ежегоднике института Кавказа, Ереван, 2012, с. 144.

¹⁸⁵ Նույն տեղում:

ստեղծման հիմքը, ինչը թուրքական մեկնաբանությամբ պետք է որ հանձնարարվեր այդ ենթահանձնաժողովին 1915 թ. իրադարձություններն ուսումնասիրելու նպատակով: Ըստ նրա, թուրքական պաշտոնյաներից շատերը Սահմանադրական դատարանի եզրակացության որոշ դրույթներ մեկնաբանում էին իբրև Հայաստանի՝ Թուրքիայի տարածքային ամբողջականությունը ճանաչելու ցանկության բացակայություն, ինչպես նաև 1921 թ. Կարսի պայմանագիրը: Նա գրում էր. «2010 թ. սկսվեց պայմանագրերի ապագայի շուրջ թեժ վիճաբանություններով: Վերջին հաշվով, ո՛չ Թուրքիան, ո՛չ էլ Հայաստանը դրանք այդպես էլ չվավերացրեցին... Իրերի նման զարգացումը չառաջացրեց ուժեղ արձագանք Թուրքիայում, այլ, ընդհակառակը, թուրքական պաշտոնյաներն ուրախացած էին, որ գործընթացը ոչ թե կասեցված է, այլ սառեցված: Վավերացման գործընթացի դադարեցումից հետո հայ-թուրքական հարաբերությունները կրկին մտան փակուղի: Այն պահից, երբ արձանագրություններն օրակարգից հանվեցին, ծայրաստիճան քիչ հավանական է, որ երբևէ դրանց կվերադառնան: Եթե Հայաստանը և Թուրքիան ցանկանան շարունակել կարգավորել հարաբերությունները, նրանց հարկ կլինի ստեղծել նոր դիվանագիտական գործիքներ»¹⁸⁶:

Այսպիսով, ակնհայտ է նաև, որ Ցյուրիխյան արձանագրությունների վավերացումը նախապայմաններով (վերապահումներով) պայմանավորելու քաղաքականությանը զուգահեռ՝ թուրքական կողմը փորձում է խո-

¹⁸⁶ Նույն տեղում, էջ 148-149, տե՛ս նաև **Gorgulu A., Iskandaryan A. and Minasyan S.**, Turkey-Armenia Dialogue Series: Assessing the Rapprochement Process. TESEV Foreign Policy Analysis Series. – Istanbul: TESEV Publications, 2010, p.18:

րամանկորեն առաջ էր մղել այն թեզը, թե արձանագրությունների վավերացման կասեցման և կարգավորման գործընթացը սառեցնելու նախաձեռնողը ոչ թե Թուրքիան է, այլ Հայաստանը¹⁸⁷:

Թուրքական զանգվածային լրատվամիջոցները հայ-թուրքական երկխոսության ծավալման ամբողջ ընթացքում, բնականաբար, լուսաբանել են Հայաստանի քաղաքական ուժերի և վերլուծական հանրության դիրքորոշումները: Հայաստանի խորհրդարանում արձանագրությունների վավերացման կողմնակիցները (ՀՀԿ, ԲՀԿ և ՕԵԿ) գտնում էին, որ եթե Թուրքիայի խորհրդարանը փաստաթղթերը վավերացնի առանց նախապայմանի (վերապահման), ապա Հայաստանի խորհրդարանում պետք է նույնպես արձանագրությունները վավերացնել առանց նախապայմանի (վերապահման)՝ աջակցելով նախագահի վարած քաղաքականությանը: Դեռևս 2009 թ. Հայաստանում ձևավորվել էր մի տեսա-

¹⁸⁷2010թ. թուրքական հրապարակումներից մասնավորապես տե՛ս և հմնտ.**Tuğtan M. A.**, Soykırım İddiaları ve Uluslararası İlişkilerde Realizm, 14.03.2010, hakimiyetimilliyeye.org, Armağan M., Amerika, Ermenileri 120 yıl önce de destekliyordu, http://www.zaman.com.tr/mustafa-armagan/amerika-ermenileri-120-yil-once-de-destekliyordu_961256.html, Çandar C., İsveç'e çocukça tepki; böyle dış politikası olmaz, http://www.radikal.com.tr/yazarlar/cengiz_çandar/isveçe_çocukça_tepki_böyle_dış_politika_ol_maz_1-985361, Ankara'da şok dava 'Ermeni soykırımı' tanınsın, 31.03.2010, haberturk.com, Ermenilerden zirveye itiraz, 30.3.2010, taraf.com.tr, Altan A., Deliler ülkesi, 29.3.2010, <http://arsiv.taraf.com.tr/yazilar/ahmet-altan/deliler-ulkesi/4093/>, Erivan'a iki jest, 12.3.2010, stargazete.com, Ankara'dan Kafkaslara 'Karabağ' mesajı, 11.3.2010, cnnturk.com, Cemal H., Erdoğan, acıları mikayese etmek yerine önce yüreğinde hissetse..., 23.3.2010, <http://www.milliyet.com.tr/ermenilerin-24-nisan-acisini-paylasiyorum-/hasan-cemal/siyaset/siyasetyazardetay/24.04.2010/1229159/default.htm>

կետ, ըստ որի՝ պետք էր սպասել թուրքական խորհրդարանի կողմից փաստաթղթերի վավերացմանը, դրանից հետո միայն դրանք վավերացման դնել ՀՀ ԱԺ-ում: ՀՀ-ն հանդես եկավ հայտարարությամբ, որտեղ վճռականություն էր արտահայտվում՝ ձախողել արձանագրությունների վավերացումը սահմանադրական բոլոր միջոցներով¹⁸⁸:

Վերլուծաբանները և ՋԼՄ-ներն ուշադրությամբ են հետևել Հայաստանի և Թուրքիայի ղեկավարների՝ կարգավորման գործընթացին առնչվող յուրաքանչյուր քայլին, մասնավորապես՝ 2010 թ. փետրվարի 11-ին Թուրքիայի օդային տարածքով Մեծ Բրիտանիա ուղևորվող Ս. Սարգսյանի՝ Ա. Գյուլին հղած հեռագրին և ԹՀ նախագահի՝ ՀՀ նախագահին հղած պատասխան հեռագրին¹⁸⁹:

Արձանագրությունների վավերացման ամենաէական խոչընդոտը թուրքական հասարակական-քաղաքական շրջանակներում հստակ հնչած պահանջն էր հայկական կողմերին՝ միակողմանի զիջումների գնալ Արցախյան հակամարտության կարգավորման հարցում: Զիջումների հնարավորության, ավելի ճիշտ՝ անհնարինության հարցում Հայաստանում ձևավորված միականության արտահայտությունն էր 2010 թ. ապրիլի 22-ին ՀՀ Ազգային ժողովում քաղաքական կրակիցիա

¹⁸⁸ Տե՛ս ՀՀ-ն տարածել է հաղորդագրություն հայ-թուրքական ստորագրված արձանագրությունների վերաբերյալ, «Անկախ», 12.10.2009:

¹⁸⁹ Մասնավորապես տե՛ս **Ղավութզյու Ա.**, «Սարգսյանի նամակը Թուրքիայի տարածքի վրայով թռչողի սովորական ուղերձ է», 10.02.2010, <http://www.7or.am/am/news/view/14286/>, Արթուրյան Գյուլի նամակը Սերժ Սարգսյանին, 11.02.2010, <http://news.am/arm/news/14115.html>

կազմած կուսակցությունների քաղաքական խորհուրդների համատեղ հայտարարությունը¹⁹⁰:

Ուշագրավ է, որ ԱՄՆ և ԵՄ դիվանագետները ձեռնարկել են քայլեր՝ փորձելով առաջարկել հայկական կողմին՝ քննարկել արձանագրություններն առաջինը վավերացնելու հնարավորությունը, ինչն արևմտյան դիվանագետների կարծիքով՝ կարող էր Հայաստանին դնել շահեկան դրության մեջ (ենթադրվում է, որ հանդիպումներ եղել են նաև Անկարայում, և հորդորներ հղվել են նաև Թուրքիայի քաղաքական ուժերին):

Հայաստանի խորհրդարանում վավերացման հակառակորդների դիրքորոշումները կարելի է ձևակերպել հետևյալ կերպ. ա) հայ-թուրքական արձանագրությունները պարունակում են թաքնված նախապայմաններ, մասնավորապես՝ թուրքական կողմն ակնկալում է ճանաչել տալ 1921 թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերը, ինչը հաջողություն է Թուրքիայի համար, բայց չի բխում հայության շահերից, բ) արձանագրությունները «սողանցք» են թողնում ԼՂ հիմնախնդրում Թուրքիայի ներգրավվածության մեծացման համար՝ բարդացնելով դրությունը:

Հայ-թուրքական երկխոսության հարցում մեր երկրի դիրքորոշումները միջազգային հանրությանը ներկայացնելու առումով հիշարժան է նախագահ Սերժ Սարգսյանի՝ 2010 թ. Միջազգային հարաբերությունների լոնդոնյան «Չեթթըմ հաուս» հաստատությունում ելույթը, որտեղ համոզմունք էր արտահայտվել, որ առանց

¹⁹⁰ ՀՀ Ազգային ժողովում քաղաքական կոալիցիա կազմած կուսակցությունների քաղաքական խորհուրդների համատեղ հայտարարությունը, 22.04.2010, http://www.parliament.am/news.php?cat_id=2&NewsID=3890&year=2010&month=04&day=22&lang=arm:

նախապայմանների հարաբերությունների կարգավորումը շահեկան է ոչ միայն Հայաստանի և Թուրքիայի, այլև տարածաշրջանի և Եվրոպայի համար¹⁹¹: Հանդիպելով նույն տարվա ապրիլի 12-ին՝ ՀՀ և ԱՄՆ նախագահներն անդրադարձել էին, մասնավորապես՝ Հայաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունների կարգավորման ընթացքին, մտքեր էին փոխանակել տարածաշրջանային զարգացումների ու Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի խաղաղ կարգավորման գործընթացի վերաբերյալ: Նույն օրը նախագահ Ս. Սարգսյանը Վաշինգտոնում հանդիպել էր նաև Թուրքիայի վարչապետ Ռ. Թ. Էրդողանի հետ¹⁹²: ԱՄՆ մայրաքաղաքում այցելելով Վուդրո Վիլսոնի շիրմին՝ ՀՀ նախագահն անդրադարձել էր հայ-թուրքական հարաբերություններին, դատապարտել Հայաստանն ու Սփյուռքը պառակտելու թուրքական փորձերը¹⁹³: Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման ընթացքին և ԼՂ հակամարտությանը վերաբերող խնդիրները նախագահ Ս. Սարգսյանը նույն տարվա ապրիլի 20-ին քննարկել էր նաև ՌԴ նախագահ Դ. Մեդվեդևի հետ¹⁹⁴: Ապրիլի 22-ին նախագահ Ս. Սարգսյանի հեռուստաուղերձում նշվում էր, որ Հայաստանը մշտապես ի ցույց է դրել իր հետևողական նվիրվածությունը հարաբերությունների կար-

¹⁹¹Նախագահ Սերժ Սարգսյանի խոսքը Բրիտանիայի միջազգային հարաբերությունների թագավորական ինստիտուտում, 10.02.2010, www.president.am:

¹⁹²Նախագահ Սերժ Սարգսյանի աշխատանքային այցը Ամերիկայի Միացյալ Նահանգներ, 12.04.2010, www.president.am:

¹⁹³ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի խոսքը Վաշինգտոնի մայր տաճարում Վուդրո Վիլսոնի գերեզման այցելությունից հետո, 12.04.2010, www.president.am:

¹⁹⁴Նախագահ Սարգսյանի աշխատանքային այցը Մոսկվա, 20.04.2010, www.president.am:

գավորման գործընթացին, սակայն եկել է «ողջամիտ ժամկետներում» ասածը և «առանց նախապայմանների» գործելաոճը գնահատելու ժամանակը, մինչդեռ Թուրքիան ամեն ինչ արել է ժամանակ ձգելու և գործընթացը տապալելու համար¹⁹⁵:

Թուրքական ՁԼՄ-ներն արձագանքել են այն փաստին, որ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման բանակցային գործընթացը համահովանավորող ԱՄՆ և Ֆրանսիայի նախագահների գրասենյակները ողջունել են կարգավորման գործընթացը շարունակելու Հայաստանի կառուցողական դիրքորոշումը: Վերոհիշյալ վաշինգտոնյան հանդիպումից հետո Թուրքիայի արտգործնախարար Ա. Ղավութզյուն հայտարարեց, որ Թուրքիան Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման հարցը պահում է իր օրակարգում: Ակնհայտ է, որ թուրք քաղաքական գործիչները միջազգային հանրության ուշադրությունն ամեն կերպ ջանալու էին կիզակետել Լեռնային Ղարաբաղի խնդրի վրա՝ այն դարձնելով արմատական տարր հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման մեջ, ջանալով ծառայություն մատուցել Ադրբեջանին, մի կողմից՝ ցույց տալով, որ իրենք երբևէ քայլ չեն անի ի վնաս «ադրբեջանցի եղբայրների», մյուս կողմից՝ միջազգային դիվանագիտական ու քաղաքական շրջանակներին «ապացուցելով», որ այս խնդիրը կարևորագույն հարցն է տարածաշրջանում: Հայ-թուրքական արձանագրությունները թուրքական խորհրդարանում չվավերացնելով, բայց երկխոսության հարցը չհանելով օրակարգից՝ պաշտոնական Անկարան փորձելու էր տեղ թողնել Ղա-

¹⁹⁵ Նախագահ Սերժ Սարգսյանի հեռուստաուղերժը Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացի վերաբերյալ, 22.04.2010, www.president.am:

րաբաղի հարցում անթաքույց ադրբեջանամետ միջամտության համար¹⁹⁶: Հայաստանը միջազգային հանրությանը պետք է ցույց տար, որ պատրաստ է առանց նախապայմանների հարաբերություններ կարգավորել Թուրքիայի հետ ու դրանով իր նպաստը բերել տարածաշրջանում անվտանգության ամրապնդմանը, խաղաղության հաստատմանը՝ միաժամանակ չչտապելով առաջինը վավերացնել արձանագրությունները:

Աշխարհի ուժային խոշոր կենտրոններում Հայաստանը մշտապես գնահատվել է իբրև վստահելի գործընկեր, իսկ հայկական դիրքորոշումները՝ սկզբունքային ու միաժամանակ ճկուն: Տարածաշրջանին աճող հետաքրքրությամբ հետևող վերլուծաբաններն ընդգծել են «ողջամիտ ժամկետներ» արտահայտության կոնկրետ իմաստը՝ միաժամանակ բացառելով Հայաստանի դուրս գալը հայ-թուրքական կարգավորման գործընթացից և Ղարաբաղյան կարգավորման գործընթացի սառեցումը:

Փաստ է նաև, որ Հարավային Կովկասում Թուրքիայի ազդեցությունը կարող է աճել միայն «փափուկ ուժի քաղաքականության» գործադրման, Հայաստանի հետ շարունակական երկխոսության պայմաններում:

¹⁹⁶ Տե՛ս Сафарян Арам, Сафарян Александр, О стремлении вовлечения Турции в процесс улегурования Карабахского конфликта, -Армяно-российское взаимодействие и региональные проблемы, Ереван, «Наапет», 2010, с. 52-55. Сафарян Арам, Сафарян Александр, О результатах мониторинга информации, отражающей армяно-турецкие и армяно-азербайджанские отношения в турецких и азербайджанский СМИ, Պատմություն և մշակույթ. ընդդեմ կեղծիքի և ոտնձգության, Երևան, 2011, էջ 104:

2010 թ. ապրիլի 22-ի ՀՀԿ, ԲՀԿ և ՕԵԿ քաղաքական խորհուրդների վերոհիշյալ համատեղ հայտարարության մեջ տեղեկացվում էր, որ հայ-թուրքական արձանագրությունները դուրս են բերվում ԱԺ քառօրյա նիստերի օրակարգերից, ինչը նշանակում էր գործընթացի սառեցում¹⁹⁷: Հայտարարության մեջ, մասնավորապես, ասվում էր, որ հայկական կողմի կառուցողական ջանքերը և միջազգային հանրության ակնկալիքը շարունակաբար բխվում էին թուրքական կողմի անհետևողական, խուսափողական դիրքորոշում-ներին, շարունակական նախապայմանների առաջադրման քաղաքականությանը, ինչը փակուղի մտցրեց հայ-թուրքական արձանագրությունների խելամիտ ժամկետներում վավերացման գործընթացը¹⁹⁸: Կոալիցիոն մեծամասնությունը, անընդունելի համարելով թուրքական կողմից հնչող հայտարարությունները, որոնցով հայ-թուրքական արձանագրությունների վավերացումը ԹԱՄԺ-ում անմիջական կախվածության մեջ էր դրվում ԼՂ հակամարտության կարգավորումից, նկատի ունենալով թուրքական կողմի հրաժարումն առանց նախապայմանների, խելամիտ ժամկետներում արձանագրությունները վավերացնելու պարտավորություններից, իմաստազրկված էր համարում տվյալ փուլում դրանց վավերացման գործընթացի հետագա շարունակումը ՀՀ խորհրդարանում, անհրաժեշտ համարում առկախել այդ գործընթացը՝ հանելով դրանք քառօրյա նիստերի

¹⁹⁷ Մանրամասն տե՛ս **Սաֆարյան Դ.**, Հայ-թուրքական կարգավորման գործընթացի սառեցման հայկական փաստարկների շուրջ, Մերձավոր Արևելք, պատմություն, քաղաքականություն, մշակույթ, հոդվածների ժողովածու, VIII, Երևան, 2012, էջ 313-321:

¹⁹⁸ Տե՛ս Կոալիցիայի հայտարարությունը արձանագրությունների վերաբերյալ, 22.04.2010,

<http://www.aysor.am/am/news/2010/04/22/NA-protocols/140490>:

օրակարգից, մինչև որ թուրքական կողմը պատրաստ կլինի առանց նախապայմանների գործընթացը շարունակելու¹⁹⁹:

2011 թ. փետրվարի 21-ին մի շարք լրատվական գործակալություններ, հղում անելով թուրքական դիվանագիտական աղբյուրներին, նշում էին, որ մարտին Մոսկվայում կայանալու է հանդիպում հայ և թուրք դիվանագետների միջև: Այդ մասին, ըստ նույն աղբյուրների, պայմանավորվածություն էր ձեռք բերվել Թուրքիայի և Ռուսաստանի փոխարտգործնախարարների միջև կայացած հանդիպման ժամանակ: Տեղեկատվություն էր տարածվել այն մասին, որ թուրքական կողմին Հայաստանի հետ հարաբերությունները կարգավորելու համար կբավարարի նույնիսկ «Ադրբեջանի գրավյալ ուրոշ տարածքների» ազատումը: Հայաստանում այդ մասին զրույցներ են վարել ՌԴ, ինչպես նաև ԱՄՆ բարձրաստիճան դիվանագետները: ՀՀ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչն այդ կապակցությամբ հստակ ասել էր. «Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման համար նոր բանակցությունների կարիք չկա՝ անկախ ձևաչափից: Կան ստորագրված արձանագրություններ, որոնք պետք է վավերացնել և իրականացնել առանց նախապայմանների: Սա է միջազգային հանրության և Հայաստանի դիրքորոշումը»²⁰⁰:

2011 թ. մարտի 10-ին Լատվիայի հայ համայնքի ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ ՀՀ նախագահին, անդրադառնալով հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացին, շեշտել

¹⁹⁹ Նույն տեղում:

²⁰⁰ ՀՀ ԱԳՆ. Հայ-թուրքական կարգավորման համար նոր բանակցությունների կարիք չկա, 21.02.2011, <http://www.mediamax.am/am/news/armeniaturkey/106/>

էր, որ Հայաստանի համար որևէ նախապայման ընդունելի չէ, մանավանդ այն նախապայմանները, որոնք թուրքերը փորձում են առաջադրել՝ կապված Լեռնային Ղարաբաղի, Հայոց ցեղասպանության հարցերի հետ և հավելել. «Մենք այս պահին ոչ խոսելիք, ոչ անելիք չունենք նրանց հետ...»²⁰¹: Հիմնախնդրին Սերժ Սարգսյանն անդրադարձել էր նաև Կիպրոսի Հանրապետություն կատարած իր պաշտոնական այցի ընթացքում. «Թուրքիայի հետ հարաբերությունները նույնիսկ փոքր քայլելով հարթելու մեր անկեղծ առաջարկով սկսված գործընթացն արագ խափանվեց: Իր հակասական կեցվածքով, իրարամերժ հայտարարություններով և գործընթացի անհիմն շահարկումներով Թուրքիան կործանեց այն: Թուրքիան հետ կանգնեց իր պարտավորություններից և ոչ միայն չվավերացրեց ստորագրված արձանագրությունները, այլև վերադարձավ գործընթացից առաջ որդեգրած իր հին դիրքերին: Նախապայմանների պատին դեմ առան մեր և գործընթացում ակտիվորեն ներգրավված մեր գործընկերների ջանքերը»²⁰²:

«Հ նախագահը համոզմունք էր հայտնել, որ եթե որևէ մեկը հիմքեր ուներ նախապայմաններ առաջ քաշելու, ապա դա Հայաստանն էր, որը շատ խնդիրներ ունենալով Թուրքիայի հետ, օրինակ՝ Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը, դրանք չի դարձրել հարաբերությունների կարգավորման նախապայման: Նախագահ Սարգսյանը, քննադատաբար հանդես գալով «Նոր օսմանականության» հիմքի վրա տարածաշրջանային

²⁰¹ Սերժ Սարգսյան. Ադրբեջանի դիրքորոշման մեջ տեղաշարժ կա, հայ-թուրքական հարաբերություններում նորություն չկա, 11.03.11, www.president.am:

²⁰² Նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը Կիպրոսի Հանրապետության Ներկայացուցիչների պալատում, 17.01.2011, www.president.am:

առաջնորդության հավակնող Թուրքիայի արտաքին քաղաքական դոկտրինի կապակցությամբ, նշել էր. «Տարածաշրջանային առաջնորդությունը ենթադրում է պատասխանատու մոտեցում, պատասխանատու մտածելակերպ և ոչ թելադրելու կամ պարտադրելու գործելաոճ: Ի՞նչ է Օսմանյան կայսրությունը բերել իր լծի տակ գտնվող ժողովուրդներին կոտորածներից, բռնակալությունից, կեղեքումներից բացի: Ո՞վ է հասցրել կարոտել օսմանականությանը, որ որոշ մարդիկ փորձում են ծնել «նոր օսմանականություն»: Եվ ինչպե՞ս է ընկալվում «գրո խնդիր հարևանների հետ» ուղեգիծը: Որպեսզի բոլոր հարևանները հլու կատարեն Թուրքիայի հորդորները և բավարարեն նախապայմանները: Գուցե կան հարևաններ, որոնց համար դա նույնիսկ շահավետ է, բայց վստահորեն մենք դրանց թվին չենք պատկանում»²⁰³:

203Նույն տեղում: Հետագայում անդրադառնալով «նոր օսմանականության» հարցին և արտահայտելով համայն հայության և, կարծում ենք, օսմանյան լծի տակ հեծած բոլոր ժողովուրդների համահավաք կարծիքը, ՀՀ նախագահ Ս. Սարգսյանը նշել է. «Ի՞նչ է նշանակում նեոօսմանիզմ: Այդ խոսակցությունները մենք, նկատի ունեմ բոլոր այն մարդկանց, ովքեր ծանոթ են Օսմանյան կայսրության պատմությանը, ընկալում ենք ճիշտ այնպես, ինչպես համակենտրոնացման ճամբարներում վերացված մարդկանց ժառանգներն ընկալում են արիական ցեղի մաքրության մասին խոսակցությունները»:

<http://www.tert.am/am/news/2011/01/27/serzhsgaryan2/236273>, ինչպես նաև **Մելիքյան Գ., Սաֆարյան Ա.**, Նոր օսմանականության հիմնահարցերը եվ հետխորհրդային թյուրքագիտությունը, «Հայոց ցեղասպանության ժխտողականությունը նոր օսմանականության գաղափարախոսության համատեքստում», ՀՀ Սփյուռքի նախարարություն, Երևան, 2016, էջ 56:

Հայաստանի կառուցողական դիրքորոշումը ՀՀ նախագահը վերահաստատեց Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի ամբիոնից 2011 թ. հունիսի 22-ին ունեցած իր ելույթում. «Հայաստանը նախաձեռնեց գործընթացը բարի նպատակներով՝ անսալով ազգերի և պետությունների խաղաղ գոյակցության 21-րդ դարի հրամայականին: Եվ դա՝ այն պայմաններում, երբ Օսմանյան կայսրությունում 1915 թ. հայերի նկատմամբ իրագործած ցեղասպանությունը Թուրքիան առ այսօր ոչ միայն չի ճանաչել, այլև իրականացնում է բացահայտ ժխտման քաղաքականություն: Մինչդեռ համայն հայությունը սպասում է համարժեք գնահատականի, և այդ նպատակով այսուհետ ևս մեր ջանքերը՝ անխոնջ ջանքերը, լիահույս են՝ նաև մարդկության դեմ հանցագործություններով մտահոգվածների ջանքերը, ուղղված կլինեն Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը: Այդուհանդերձ, մենք պատրաստ ենք խնդիրները հաջորդ սերունդներին չթողնել: Հայաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունների կարգավորումը կարևոր է ոչ միայն հայերի և թուրքերի համար, այլև տարածաշրջանում, կարծում են՝ նաև ողջ Եվրոպայում խաղաղության, կայունության և համագործակցության մթնոլորտի հաստատման առումով: Հայաստանի անօրինական շրջափակմանը պետք է վերջ դրվի»²⁰⁴: Նույն օրը Ստրասբուրգում արտգործնախարար Է. Նալբանդյանը, անդրադառնալով ԵԽԽՎ նախագահ Մ. Չավուշօղլուի հայտարարությանը, թե հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը կապված է դարաբաղյան խնդրի կարգավորման հետ, և այդ մա-

²⁰⁴ Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանի խոսքը Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովում, 22.06.2011, www.president.am

սին իբր թե բանավոր համաձայնություն է եղել Թուրքիայի և Հայաստանի միջև, ինչը նաև հաստատվել է այլ երկրների արտգործնախարարների և ԱՄՆ պետքարտուղարի կողմից, մասնավորապես ասել է. «Դա, իհարկե, պարզունակ աղավաղում է: Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացը սկսվել և ընթացել է այն փոխադարձ պայմանավորվածությամբ և հասկացողությամբ, որ գործընթացը պետք է ընթանա առանց նախապայմանների, և դա էր նաև պատճառը, որ արձանագրությունների մեջ որևէ նախապայման չկա»²⁰⁵: Է. Նալբանդյանը նաև հավելել է, որ արձանագրությունների ստորագրմանը ներկա բոլոր արտգործնախարարները բազմիցս կոչ են արել առանց նախապայմանների վավերացնել և իրագործել պայմանավորվածությունները, իսկ ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Բլինթոնը հայտարարել էր, որ Հայաստանն իր ճանապարհն անցել է, գնդակը գտնվում է Թուրքիայի դաշտում, որը և պետք է կատարի իր ստանձնած պարտավորությունները²⁰⁶:

2011 թ. Թուրքիայի և Հայաստանի խորհրդարանների «փոքր օրակարգերից» Ցյուրիխում ստորագրված հայ-թուրքական արձանագրությունների վավերացման հարցը հանելուց հետո հարաբերությունների կարգավորման խնդիրը, փաստորեն, սառեցվեց անորոշ ժամանակով²⁰⁷: Այդ արձանագրությունների բովանդա-

²⁰⁵ Նալբանդյան. Հայ-թուրքական գործընթացը Ղարաբաղի հետ կապելու համաձայնություն չի եղել, 22.06.2011, <http://www.azatutyun.am/content/article/24243393.html>:

²⁰⁶ Տե՛ս նույն տեղում:

²⁰⁷ Մանրամասն տե՛ս Սաֆարյան Դ., «Ֆուտբոլային դիվանագիտության» ծավալման արդյունքում հայ-թուրքական հարաբերությունների վիճակի գնահատման հարցի շուրջ, Արևելագի-

կությունը թե՛ թուրքական, թե՛ հայկական իրականության մեջ քաղաքական տեսակետների բախման պատճառդարձավ, սակայն երկու երկրների քաղաքական իշխանություններն արձանագրությունները վավերացման ուղարկեցին խորհրդարաններ՝ այնտեղ էլ ավելի ուշ դրանք սառեցնելով: Անշուշտ, այնքան ժամանակ, քանի այդ հարցն ընդհանրապես դուրս չէր բերվել երկու երկրների քաղաքական օրակարգերից, խնդիրը չէր կարելի համարել վերջնականապես փակված կամ ձախողված, սակայն առկա պայմաններում անհնար էր նաև խոսել կարգավորման իրական փնտրտուքի կամ այդ ուղղությամբ դրական միտումների մասին:

Անվիճելի է, որ առանց նախապայմանների դիվանագիտական հարաբերություններ հաստատելու և 1993 թ. գարնանից փակված հայ-թուրքական սահմանը բացելու դիմաց թուրքական իշխանությունները, ընդառաջ գնալով ինչպես Ադրբեջանի, այնպես էլ սեփականը ընդդիմության «ավանդական» ճնշմանը²⁰⁸, վերստին առաջադրեցին առնվազն մեկ պաշտոնական պայման. կարգավորման գործընթացն առաջ մղելու դիմաց ստիպել Հայաստանին միակողմանի զիջման գնալ Ադրբեջանին Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացում, օրինակ՝ դուրս բերելով հայկական զինված ուժերը Լեռնային Ղարաբաղին հարող զբաղեցրած տարածքների առնվազն մի մասից: Անտարակույս է, որ ադրբեջանական քաղաքական և հասարակական կարծիքը, ինչպես նաև ադրբեջանամետ-արմատական ազգայնական ուժերը Թուրքիայում «ֆուտբոլային դիվանագիտության» ծավալման ամ-

տության հարցեր (գիտական հոդվածների ժողովածու), VIII, Երևան, 2012, էջ 219-228:

²⁰⁸ <http://azg.am/am/2012101209>

բողջ ընթացքում ծայրահեղ թշնամաբար են վերաբերվել հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հեռանկարին և այն գնահատել են իբրև սպառնալիք Ադրբեջանի շահերին ու Ղարաբաղյան կարգավորման գործընթացում ադրբեջանական դիրքերը թուլացնելուն ուղղված քայլ: Այսպիսով, հրաժարվելով առանց նախապայմանների կարգավորել հարաբերությունները Հայաստանի հետ՝ Թուրքիան տեղի տվեց ադրբեջանական պահանջներին ու թուրք-ադրբեջանական ռազմավարական սերտ դաշինքն ավելի առաջնային և կարևոր համարեց: Արդեն սառեցումից հետո Թուրքիան հայտարարեց, որ այդ սերտ դաշինքին քաղաքական և տնտեսական ոլորտներում ավելանում է նաև էներգետիկայի ոլորտում ամենասերտ համագործակցությունը, այսինքն՝ տնտեսական նոր խթաններով ամրապնդվում է թուրք-ադրբեջանական այնպիսի ընդհանուր շահը, որը չի կարող վնասվել այնպիսի գործոնով, ինչպիսին հայ-թուրքական հարաբերությունների միակողմանի կարգավորումն է: Սերտորեն համագործակցելով Հայաստանի և համայն հայության միջազգային ազդեցությունը, հեղինակությունը և վարկը նսեմացնելու գործում՝ Թուրքիան և Ադրբեջանը հետևողականորեն ցուցադրում էին, որ առայժմ կարծես թե չկան այդ համագործակցությունը զսպող արտաքին ազդակներ ու խթաններ՝ ուղղված Հայաստանի հետ ավելի հավասարակշռված հարաբերություններ հաստատելուն²⁰⁹:

«Ֆուտբոլային դիվանագիտության» ծավալման ընթացքում Թուրքիայում սկսեց քննարկվել Հայոց ցեղասպանության թեման, և չնայած թուրքական պաշտոնական բառապաշարում ու ՋԼՄ-ներում այն, որպես

²⁰⁹ Տե՛ս Սաֆարյան Ա., Հայ-թուրքական կարգավորման փորձերի այսօրվա տեսլականի շուրջ, <http://azg.am/AM/2012100517>

կանոն, ձևակերպվում է «այսպես կոչված ցեղասպանություն» կամ «ցեղասպանության մասին հայկական անդումներ» արտահայտություններով, սակայն ակնհայտ է, որ Թուրքիայի մտավորականները, որոշ հասարակական շրջանակներ շարունակում են արժարժել այս հիմնահարցը՝ փորձելով նպաստել սեփական պատմության հետ թուրքական հասարակության առերեսմանը: Հիշարժան են 2011 թ.ապրիլին Ստամբուլի Թաքսիմ հրապարակում թուրքերի և հայերի համատեղ բողոքի ցույցը՝ Հայոց ցեղասպանության գոհերի հիշատակին հարգանքի տուրք մատուցելու նպատակով և հիշյալի իրադարձության զուսպ և զգուշավոր լուսաբանումը թուրքական լրատվամիջոցների կողմից: Այսուհանդերձ, ակնհայտորեն վաղաժամկետ է խոսել Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման ուղղությամբ Թուրքիայում էական տեղաշարժերի մասին: Թուրքիայի պաշտոնական շրջանակները շարունակում էին Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման գործընթացը կասեցնելուն ուղղված քայլերը: Դրա վառ օրինակն էր թուրքական ակտիվությունը Ֆրանսիայում Հայոց ցեղասպանության ուրացումը քրեականացնող օրինագծի ընդունման ողջ ընթացքում, ինչպես նաև Թուրքիայի պահանջը Ֆրանսիայի նորընտիր նախագահից ու կառավարությունից՝ թույլ չտալու այդ օրինագծի նախագծի վերստին շրջանառումը ֆրանսիական խորհրդարանի երկու պալատներում: Թուրքիայում նախապատրաստական աշխատանքներ սկսվեցին Հայոց ցեղասպանության հարյուրամյա տարելիցին ընդառաջ ճանաչման և դատապարտման նոր ալիքին դիմակայելու և հայկական կազմակերպությունների նախաձեռնություններին հակազդելու ուղղությամբ: Ակնհայտ է այս գործում Թուրքիայի սերտ համագործակցությունն Ադրբեջանի հետ, որը բարձրացնե-

լով, այսպես կոչված, «Խոջալուի ողբերգության» անհիմն կերպով հայերին վերագրվող մեղադրանքը կամ Ղուբայում 1918 թ. հրեաների դեմ հայերի գործած իբր «ցեղասպանության» բացարձակապես անհիմն մեղադրանքը՝ դրանցով, փաստորեն, փորձում էր (և հետևողականորեն ու շարունակաբար փորձում է) հակակշիռ ստեղծել Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման համահայկական պահանջին:

Համաձայն որոշ լրատվամիջոցների՝ «Ֆուտբոլային դիվանագիտության» ծավալումից հետո 2010 թ. Թուրքիայում ընդունված նոր Ազգային անվտանգության հայեցակարգում արտաքին սպառնալիքների ցուցակից հանվել էր Հայաստանը: Թուրքագետ Լևոն Հովսեփյանն այդ առիթով գրում է, որ Հայեցակարգի բովանդակության ու դրույթների հետ կապված պաշտոնական որևէ հայտարարություն կամ հաղորդագրություն չի եղել, և միայն տարբեր լրատվամիջոցներում հայտնվեցին դրա բովանդակությանն առնչվող որոշ դիտարկումներ ու հրապարակումներ: Կառավարող կուսակցությանը մոտ կանգնած թուրքական «Yeni Şafak» թերթի հրապարակման համաձայն՝ հայեցակարգի խմբագրման արդյունքում՝ Թուրքիայի հարևան չորս երկրներ՝ Հունաստանը, Ռուսաստանը, Իրաքն ու Իրանը, հանվեցին սպառնալիք ներկայացնող երկրների ցանկից: «Ընդհանուր առմամբ, Թուրքիայի կողմից նման քայլը պայմանավորված էր առավելապես քարոզչական նպատակներով ու միջազգային հանրության շրջանում իր դրական իմիջի ձևավորման, երկրի համար ռազմավարական փաստաթուղթ համարվող անվտանգության հայեցակարգի հետ արտաքին քաղաքականության սկզբունք հռչակած «զրո խնդիրներ հարևանների հետ» հայեցակարգային մոտեցման համապատասխանությունն ակնհայտ դարձնելու ձգտումներով»,- նշում է

թուրքագետը և շարունակում. «որոշ ռուսական և իսրայելական լրատվամիջոցներ իրենց հրապարակումներում նշել են, թե, իբր, Թուրքիայի համար սպառնալիք կամ մարտահրավեր ներկայացնող երկրների ցանկից հանվել է նաև Հայաստանը, իսկ փոխարենը՝ Իսրայելն ամրագրվել է որպես սպառնալիք ներկայացնող երկիր»²¹⁰: Չկարգավորված հարաբերությունների պայմաններում Թուրքիայի կեցվածքն իբրև արտաքին սպառնալիք է ձևակերպված ՀՀ Ազգային անվտանգության հայեցակարգում: Բոլոր հիմքերը կան պնդելու համար, որ Թուրքիայի կողմից պաշտոնապես որդեգրված «նեոսովետականության» կամ «զրո խնդիր հարևանների հետ» քաղաքականությունն ինչպես Իրաքի և Սիրիայի, այնպես էլ Հայաստանի պարագայում ծախողվել է, քանի որ Թուրքիային ոչ միայն չի հաջողվել մեծացնել ազդեցությունը Հարավային Կովկասում, այլև սնանկ է դարձել Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացում Հայաստանի և Ադրբեջանի միջև միջնորդական առաքելություն ստանձնելու փորձը: ՀՀ պաշտոնական ներկայացուցիչները տարբեր միջազգային հարթակներում հայտարարել են, որ Ադրբեջանին միակողմանի սատարող Թուրքիան չի կարող ստանձնել նման առաքելություն²¹¹:

²¹⁰ **Հովսեփյան Լ.**, Թուրքիայի պաշտպանական համակարգի արդիականացումը և անվտանգության ոլորտի բարեփոխումները, Երևան, 2014, էջ 58-59:

²¹¹ **Давутоглу А.**: "Если вопрос Карабаха будет решен, армяно-турецкие отношения будут урегулированы", 07.07.2010, <http://az.salamnews.org/ru/news/read/11008/axmed-davutoglu-esli-vopros-karabaxa-budet-reshen-armyano-tureckie-otnosheniya-budut-uregulirovani>, **Давутоглу А.**: Существующие проблемы помешали урегулированию армяно-турецких отношений, 01.25.2011, <http://ru.1in.am/2429.html>

ՎԵՐՋԱԲԱՆ

Թուրքիայի Հանրապետության կողմից (հետխորհրդային պետությունների շարքում) Հայաստանի Հանրապետության ճանաչումից հետո մեր երկրի հետ հարաբերությունների կարգավորումը (դիվանագիտական կապերի հաստատումը) թուրքական բոլոր (Սուլեյման Դեմիրելի, Թանսու Չիլերի, Մեսութ Յըլմազի, Նեջմեթին Էրբաքանի, Բյուլենթ Էջեվիթի, Աբդուլլահ Գյուլի, Ռեջեփ Թայիփ Էրդողանի, Ահմեթ Դավութօղլուի, Բինալի Յըլդըրըմի) կառավարությունները դիտարկել են նաև թուրք-ադրբեջանական հարաբերությունների համատեքստում, առաջադրել նախապայմաններ (Թուրքիայի և Ադրբեջանի «տարածքային ամբողջականության», 1921 թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերով հաստատված հայ-թուրքական սահմանի ճանաչում, Լեռնային Ղարաբաղի հակամարտության գոտուց հայկական զինված ուժերի դուրսբերում, Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման պահանջից հրաժարում): Թուրքական նախապայմաններին ի պատասխան՝ Հայաստանի իշխանությունները մշտապես փորձել են կարգավորել հարաբերությունները հարևան Թուրքիայի հետ առանց նախապայմանների, հաստատել դիվանագիտական հարաբերություններ, իսկ 1993 թվականից՝ վերաբացել փակված հայ-թուրքական սահմանը: Թուրքական պահանջներին ի պատասխան՝ Հայաստանն առաջ է մղել այն մոտեցումները, որ ՀՀ-ն, դառնալով միջազգային հանրության և կազմակերպությունների անդամ, ինքնըստինքյան ճանաչել է բոլոր պետությունների տարածքային ամբողջականությունը, իսկ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավոր-

ման հարցում զլխավոր խնդիրը անկախ և անվտանգ ԼՂՀ ճանաչումն է՝ ազգերի ինքնորոշման համապարփակ իրավունքի հիման վրա:

ԽՍՀՄ փլուզումից հետո Թուրքիայի իշխանությունները զգալի ջանքեր են գործադրել Հարավային Կովկասում ազդեցությունը մեծացնելու ուղղությամբ, փորձել են ստանձնել հնարավորինս առավել ակտիվ միջնորդական դերակատարություն Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացում: Միաժամանակ, Թուրքիան, բացի Հայաստանի դեմ ուղղակի ռազմական միջամտությունից, բոլոր հնարավոր միջոցներով աջակցելով «եղբայրական» Ադրբեյջանին, չէր կարող հանդես գալ իբրև անաչառ միջնորդ, և թուրքական դիվանագիտության ջանքերը ԼՂ հակամարտության կարգավորման գործընթացում չեն ունեցել էական նշանակություն: Թուրքիան Ադրբեյջանին մշտապես համարել է մերձավորագույն դաշնակից և ռազմավարական գործընկեր, որը կենսագործում է «Մեկ ազգ, երկու պետություն» կարգախոսը²¹²:

²¹² Ինչպես նշել է վաստակաշատ թուրքագետ Անուշ Հովհաննիսյանը. «ԽՍՀՄ փլուզումից հետո Թուրքիան, բնականաբար, փորձելու էր օգտագործել լեզվական ազգակցության ու կրոնական ընդհանրության գործոնները, լրացնել առաջացած «վակուումը», խաղաթղթերի կապուկից նորից դուրս հանել «երբեք չսպառված, այսպես կոչված, «թուրքական միասնության» գաղափարը, որը ... 90-ականներից սկսած, առավել ակտիվ քննարկման առարկա է դարձել թուրքական զանգվածային լրատվության միջոցներում»: **Հովհաննիսյան Ա.**, ԽՍՀՄի փլուզումը, «թուրք միասնության» գաղափարը և դարաբաղյան հարցը (1990-95-ականների թուրքական հրապարակումների լուսաբանմամբ), - Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և Ժողովուրդներ, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Երևան, 2001, էջ 74-81: Պանթուրքիստական կամ «նեոպանթուրքիստական» գաղափարներն ու հռետորաբանությունը ետխորհրդային հանրապետություններից առավել լայն տարածում

Թուրքական հասարակական-քաղաքական կարծիքում (մասնավորապես՝ ԽՍՀՄ փլուզումից հետո) առկա էր անհանգստություն մեծ տերությունների դավադրությունների արդյունքում Թուրքիայի հնարավոր մասնատման հարցում: Չնայած հաճախակի հնչող առարկությանը, թե Հայաստանը չի կարող իրական սպառնալիք լինել Թուրքիայի անվտանգության համար, այսուհանդերձ «Սևրի սինդրոմը» մշտապես շահարկվել է ազգայնական ուժերի, ռազմական վերնախավի, «խորքային պետության», իրար հետևողականորեն ձայնակցող թուրքական և ադրբեջանական ՋԼՄ-ների ու «վերլուծաբանների» կողմից հասարակությանը «զգոն» պահելու և ուղղորդելու նպատակով:

2000-ական թթ. Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման գործընթացը ներառվեց արտաքին քաղաքական առաջնահերթությունների շարքում, և մի շարք պետություններ ճանաչեցին Հայոց ցեղասպանությունը: Թուրքիայում նշանակալից երևույթ դարձավ Հայոց ցեղասպանության կամ ներթուրքական դիսկուրսում առկա «Հայկական հարցի» քննարկման տաբուի վերացումը: Հանդես եկան լայնախոհ և համարձակ մտավորականներ՝ հայտարարելով,

ունեն Ադրբեջանում, այսուհանդերձ նույնիսկ «մեկ ազգ, երկու պետություն» կարգախոսը հակահայկական, հակառուսական կամ հակաիրանական նպատակներով շահարկող շրջանակներն էլ պրագմատիկորեն գիտակցում են այն սահմանը, որը բաժանում է թուրքական և ադրբեջանական քաղաքական, տնտեսական, կրոնական, մշակութային էլիտաների իրական շահերը: Տե՛ս **Սաֆարյան Ա.**, Ջիյա Գյոքալիը և «Թյուրքականության հիմունքները», էջ 246-248: Մանրամասն տե՛ս և հմմտ. նաև **Бабаян Д.**, Арцахская проблема и идеология пантюркизма, - «21-й век» (информационно-аналитический журнал фонда “Нораванк”), № 4 (20), Ереван, 2011, стр. 67-99:

որ Թուրքիան պետք է առերեսվի սեփական պատմության հետ, և Հայոց ցեղասպանության պատմական իրողությունը պետք է ճանաչվի իշխանությունների կողմից, սակայն Ժխտողական քաղաքականության շարունակման և դրա՝ նոր պայմաններին հարմարեցրած գործառույթներն առաջ մղելու կողմնակիցներն առավել ուժեղ էին և օգտվում էին իշխանությունների ու վերնախավերի լայն աջակցությունից: Հայոց ցեղասպանության փաստը Ժխտող քաղաքականությանը լծված են թե՛ իշխող «Արդարություն և զարգացում» կուսակցությունը, թե՛ ԹԱՄԺ-ում ազգայնական ընդդիմությունը, թե՛ Ազգային անվտանգության խորհուրդը: Թուրքիայում և Ադրբեջանում հակահայկական քարոզչության պետական պատվեր կատարող գիտահետազոտական ու վերլուծական կենտրոններին, տարաբնույթ կառույցներին ավելանում են նորերը, և հակառակ քննարկումների «խորհրդապահությանը», նրանց գործունեության և ընթացիկ նպատակների մասին տեղեկություններ են «թափանցում» ինչպես թուրքական և ադրբեջանական, այնպես էլ արևմտյան ու ռուսաստանյան ՁԼՄ-ներ:

2008 թ. Թուրքիայի նախագահ Ա. Գյուլի այցը Հայաստան, մասնավորապես՝ նրա շփումները Հայաստանի նախագահ Ս. Սարգսյանի հետ, դրան հաջորդած գործընթացները, որոնք ՁԼՄ-ներում ստացան «ֆուտբոլային դիվանագիտություն» անվանումը, հանգեցրին Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև Ցյուրիխյան արձանագրությունների ստորագրմանը: Այդ արձանագրությունները կարող էին դառնալ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հիմք, եթե իրականություն դառնային փակ սահմանների բացումը և դիվանագիտական հարաբերությունների հաստատումը: Քաղաքական մի շարք գործիչներ, դիվանագետներ, քաղաքագետներ, լրագ-

րողներ և ճանաչված մտավորականներ 2008-2011 թթ. հայտարարել են, որ մեծ հաշվով, վաղ թե ուշ, այդ ամենը մի օր տեղի է ունենալու, որովհետև դա բխում է կանխատեսելի տարածաշրջանում բոլոր ժողովուրդների խաղաղ ապրելու կենսական շահերից: Վերոհիշյալ ժամանակաշրջանում թուրքական լրատվամիջոցները և առանձին փորձագետներ Հայաստանի, հայ-թուրքական և հայ-ադրբեջանական հարաբերությունների համալիրի (այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության հիմնահարցի) մասին խոսել են ավելի շատ, քան երբևէ նախկինում, ընդ որում, «հայկական թեմատիկայի» մասին սկսել են գրել կամ խոսել նաև չեզոք, բացառիկ դեպքերում՝ նույնիսկ դրական նրբերանգներ պարունակող տոնայնությամբ: Թուրքական ՁԼՄ-ների մշտադիտարկումը, որին մասնակցել են նաև սույն կուլեկտիվ մենագրության համահեղինակները, թույլ է տվել եզրակացնելու, որ թուրքական քաղաքական վերնախավում առաջին անգամ հրապարակային բանավեճ է առաջացել Հայաստանի հետ հարաբերությունները բարելավելու կողմնակիցների և հակառակորդների միջև: Հակառակորդները, առաջնորդվելով թուրքականության գաղափարախոսության սկզբունքներով և առաջնային համարելով «եղբայրական» Ադրբեջանի հետ հարաբերությունները, չեն տեսել և չեն տեսնում Հայաստանի հետ հարաբերությունները բարելավելու օգտին ծանրակշիռ փաստարկներ, առավել ակտիվ ու համագործակցաբար հանդես են գալիս «փոխկապակցված» Հայոց ցեղասպանության և արցախահայության ազատ ինքնորոշման իրավունքի միջազգային ճանաչման դեմ թուրքական ու համաթուրքական քաղաքական ռեսուրսի մոբիլիզացիայի օգտին (հիշարժան են ԱԶԿ առաջնորդների հասցեին Հայաստանի նկատմամբ ճնշումներ կիրառելու քաղաքականությունից

հրաժարվելու և «եղբայրական» Ադրբեջանին «հայկական ագրեսիայի» դեմ միայնակ թողնելու մեղադրանքները և նույնիսկ «դավաճան» որակումները՝ հնչած «դեվլեթբահչեվիական» կամ «քըլըջդարօղլուական» ընդդիմության և ադրբեջանական շահերի անթաքույց ջատագովությանը լծված վերլուծաբանների ու լրագրողների ստվար զանգվածից): Թուրքիայում թուրք-հայկական երկկողմ հարաբերությունների կարգավորման կողմնակիցների դատողություններն ավելի «ձկուն» են: Այս շրջանակները համոզված են, որ քանզի Հայաստանը, միևնույն է, չի հրաժարվելու Հայոց ցեղասպանության միջազգային դատապարտման գործընթացից. Երևանի հետ պաշտոնական երկխոսության միջոցով կկարողանան մեղմել այդ գործընթացի հետևանքները Թուրքիայի համար:

Երկու երկրների խորհրդարաններում Ցյուրիխյան արձանագրությունների վավերացման հարցն ընթացիկ օրակարգերից դուրս բերելը խոսում է այն մասին, որ առանց նախապայմանների երկկողմ հարաբերությունները կարգավորելու փորձն առ այսօր հաջողություն չի արձանագրել: Փաստ է, որ նախագահ Գյուլի, վարչապետ Էրդողանի, արտգործնախարարներ Բաբաջանի և Դավութօղլուի հրապարակային հայտարարություններն իրենց վրա կրում էին թե՛ ներթուրքական քննարկումների, և թե՛ Ադրբեջանից եկող ազդակներով պայմանավորված բանավեճերի կնիքը: Փորձելով հակազդել Հայոց ցեղասպանության ճանաչման ժամանակակից գործընթացներին՝ Թուրքիայի (ինչպես և Ադրբեջանի) իշխանությունները շարունակել են ահռելի ջանքեր գործադրել պատմական ճշմարտությունը նենգափոխելու և ուրանալու, Հայաստանի, Արցախի Հանրապետության ու սփյուռքահայ կազմակերպությունների դեմ քարոզչության ուղղությամբ (ակնհայտ է թուրք-ադրբեջանա-

կան մի շարք ՁԼՄ-ների և «գիտավերլուծական» կենտրոնների՝ հայության բացասական «իմիջ» ձևավորելուն նպատակաուղղված ակտիվ համագործակցությունը): Միաժամանակ, Հայոց ցեղասպանության և Արցախի հակամարտության մասին հրապարակումների քանակն ու տոնայնությունը, ԱՄՆ-ից, ԵՄ-ից, ՌԴ-ից պարբերաբար ստացվող ազդակները թույլ են տալիս կանխատեսել, որ «հայկական թեմատիկայի» ներթուրքական քննարկումներն ունեն ծավալման միտում:

Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորման բարդ գործընթացի նորանոր մարտահրավերները դիմագրավելու, ինչպես նաև համապատասխան «ադապտացիոն» մեխանիզմ-ների մշակման նպատակով կարևորվում է Հայաստանի Հանրապետության, Արցախի Հանրապետության և Սփյուռքի քաղաքական մտքի հավաքական մոտեցումների բյուրեղացումը²¹³: ՀՀ քաղաքական շրջանակներում, իհարկե, հստակ գիտակցում են, որ հանուն հայ-թուրքական հարաբերություն-

²¹³ Կարծում ենք կարևորվում է ՀՀ ազգային անվտանգության համադրություն Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտմանը նվիրված հատվածի վերածնակերպում-վերաշարադրումը՝ այն հստակ սահմանումով, որ այդ ճանաչումն ու դատապարտումը անբարենպաստ և սպառնալիքներով լեցուն տարածաշրջանում գտնվող Հայաստանի Հանրապետության գոյության և զարգացման կարևորագույն երաշխիքներից մեկն է, իսկ «Թուրքիայի և Ադրբեջանի հրաժարումը ճանաչել և դատապարտել Հայոց ցեղասպանությունը, նրանց համաձայնեցված փորձերը ժխտելու Հայոց ցեղասպանության իրողությունը ծայրահեղ վտանգում են Հայաստանի խաղաղ գոյությունը և չեն բացառում երիտթուրքերի լեզվով մեր օրերում հարցեր լուծելու հնարավորությունը»: **Սաֆարյան Ար.**, Ցեղասպանության դեմ ժխտողականության դեմ պայքարի հրեական փորձը և մեր խնդիրները, Հայոց ցեղասպանության ժխտողականությունը նոր օսմանականության գաղափարախոսության համատեքստում, (ՀՀ Սփյուռքի նախարարություն), «Արտագերս», Երևան, 2016, էջ 34:

ների կարգավորման գիշումների գնալը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցում կամ միակողմանի գիշումները Լեռնային Ղարաբաղի կարգավորման գործընթացում կհակասեն մեր համազգային շահերին ու կհարվածեն Հայաստան-Արցախ-Սփյուռք միասնությանը: Մյուս կողմից՝ Հայաստանում կարծես տարածայնություն չկա այն հարցում, որ Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորումը կարևոր և էական խնդիր է: Դրա համար էլ պաշտոնական այն ձևակերպումը, ըստ որի՝ Հայաստանը կողմ է հայթուրքական հարաբերությունների կարգավորմանն առանց նախապայմանների, շարունակում է մնալ արդիական:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ, ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐ,
ԵՆՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐ

1. ԱՄՆ նախագահ Բ. Քլինթոնի նամակը Կոնգրեսի խոսնակ Դ. Հասթերթին, 19.10.2000, <http://www.anca.org/596-hastert.html>
2. Արձանագրություն ՀՀ և ԹՀ միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին, http://www.mfa.am/u_files/20091013_protocol.pdf
3. Արձանագրություն ՀՀ և ԹՀ միջև հարաբերությունների զարգացման մասին, http://www.mfa.am/u_files/20091013_protocol1.pdf
- ԹՀ վարչապետ Ռ.Թ. Էրդողանի նամակը ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանին, 10.04.2005, <http://www.mfa.gov.tr/data/DISPOLITIKA/text-of-the-letter-of-h e -prime-minister-recep-tayyip-erdogan-addressed-to-h e -robert-kocharian.pdf>
4. Կոալիցիայի հայտարարությունը արձանագրությունների վերաբերյալ, 22.04.2010, <http://www.aysor.am/am/news/2010/04/22/NA-protocols/140490>
5. Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակի 1991 թ. հայտարարությունը, <http://www.oukhtararati.com/haytararutyunner/ASALA-History.php>
6. Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը, երկրների ցանկ, http://genocide.am/article/recognition_of_the_armenian_genocide.html?armenian

7. ՀՀ ԱԳՆ արխիվ, Մերձավոր և Միջին Արևելքի վարչություն, Թուրքիայի բաժին, Հայաստան-Թուրքիա, Ժամանակագրություն:
8. ՀՀ ԱԳՆ. Հայ-թուրքական կարգավորման համար նոր բանակցությունների կարիք չկա, 21.02.2011, <http://www.mediamax.am/am/news/armeniaturkey/106/>
9. ՀՀ Ազգային ժողովում քաղաքական կոալիցիա կազմած կուսակցությունների քաղաքական խորհուրդների համատեղ հայտարարությունը, 22.04.2010, http://www.parliament.am/news.php?cat_id=2&NewsID=3890&year=2010&month=04&day=22&lang=arm
10. ՀՀ արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանի խոսքը և պատասխանները հարցերին Ուրուզվայի արտգործնախարար Լուիս Ալմագրոյի հետ համատեղ մամուլի ասուլիսի ժամանակ, http://www.mfa.am/hy/interviews/item/2012/05/04/nalbandian_almagro/
11. ՀՅԴ-ն տարածել է հաղորդագրություն հայ-թուրքական ստորագրված արձանագրությունների վերաբերյալ, «Անկախ», 12.10.2009:
12. Նալբանդյան. Հայ-թուրքական գործընթացը Ղարաբաղի հետ կապելու համաձայնություն չի եղել, 22.06.2011, <http://www.azatutyun.am/content/article/24243393.html>
13. Նախագահ Սարգսյանի աշխատանքային այցը Մոսկվա, 20.04.2010, www.president.am
14. Նախագահ Սերժ Սարգսյանի աշխատանքային այցը Ամերիկայի Միացյալ Նահանգներ, 12.04.2010, www.president.am
15. Նախագահ Սերժ Սարգսյանի Ելույթը Կիպրոսի Հանրապետության Ներկայացուցիչների պալատում, 17.01.2011, www.president.am

16. Նախագահ Սերժ Սարգսյանի խոսքը Բրիտանիայի միջազգային հարաբերությունների թագավորական ինստիտուտում, 10.02.2010, www.president.am
17. Նախագահ Սերժ Սարգսյանի խոսքը Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովում, 22.06.2011, www.president.am
18. Նախագահ Սերժ Սարգսյանի խոսքը Վաշինգտոնի մայր տաճարում Վուդրո Վիլսոնի գերեզման այցելությունից հետո, 12.04.2010, www.president.am
19. Նախագահ Սերժ Սարգսյանի հեռուստաուղերձը Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացի վերաբերյալ, 22.04.2010, www.president.am
20. Նախագահի մամուլի ծառայության հաղորդագրություններ, 06.09.2008, <http://www.president.am/hy/foreign-visits/item/2008/09/06/news-21/>
21. <http://www.tert.am/am/news/2011/01/27/serzhsargsyan2/236273>
22. Սաֆրաստյան Ռ., Հայ-թուրքական հարաբերություններ, հիմնախնդիրներ և հեռանկարներ, խորհրդարանական լսումներ, 19-20 դեկտեմբերի 2007 թ., Երևան, 2011, էջ 63-67:
23. Соглашение о создании СНГ ("Беловежское соглашение"). Справка, <http://ria.ru/spravka/20111208/508143773.html>
24. UN SC Resolution No822/1993, <http://daccess-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/N93/247/71/IMG/N9324771.pdf?OpenElement>
25. Bağış, Ermenistan'dan gelen gazetecileri kabul etti, <http://egemenbagis.com/tr/1123>

26. Erdoğan: 100 bin Ermeni göçmeni sınırdışı edebiliriz, http://www.bbc.co.uk/turkce/haberler/2010/03/100316_bbc_erdogan_intw_update.shtml
27. Erdoğan-Prodi Görüşmesi, 21.11.2002, <http://www.abgs.gov.tr/index.php?p=23361&1=1>
28. Interview transcript: Abdullah Gul, "Financial Times", 08.04.2009, <http://www.ft.com/intl/cms/s/0/47991556-2446-11de-9a01-00144feabdc0.html>
29. Düzel N., Volkan Vural: 'Ermeni ve Rumlar tekrar vatandaş olsun', 08.09.2008, <http://arsiv.taraf.com.tr/yazilar/nese-duzel/volkan-vural-ermeni-ve-rumlar-tekrar-vatandas/1841/>

ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐ

30. Անանյան Ա., Հայ-թուրքական երկխոսության նոր փորձ (թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովի գործունեության մասին), ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, Երևան, 2003:
31. Անանյան Ա., Հայոց ցեղասպանության ժխտման նոր փորձ, Թուրքական պատմական ընկերակցության «Հայեր. աքսոր և գաղթ» աշխատության մասին, Երևան, 2005:
32. Անանյան Ա., Հայոց ցեղասպանությունը հայ-թուրքական երկխոսության հարցի համատեքստում, Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, Երևան 2004:
33. Արշակյան Գ., Եղիազարյան Ա., Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականությունը ԽՍՀՄ-ի փլուզումից հետո, Երևան, «Էդիթ Պրինտ» հրատ., 2014:
34. Արշակյան Գ., Թուրքիայի քաղաքականությունը Հարավային Կովկասում 1991-2001, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2009:
35. Արշակյան Գ., Թուրքիայի Հանրապետության արտաքին քաղաքականությունը, Երևան, «Անտարես», 2015:
36. Բալայան Տ., Ղարաբաղյան հիմնահարցը և միջազգային դիվանագիտությունը 1991-1994 թթ., «Գասպրինտ» հրատ., Երևան, 2004 :
37. Թորոսյան Տ., Հարավային Կովկասը օգոստոսյան պատերազմից հետո. Լեռնային Ղարաբաղի հակամարտություն, հայ-թուրքական հարաբերություններ, Երևան, 2009:
38. Իսրայելյան Ա., Թուրքիայի արտաքին քաղաքականության առանձնահատկությունները «Արդարություն և

զարգացում» կուսակցության կառավարման առաջին տասնամյակում (2002-2012 թթ.), թեկնածուական ատենախոսություն, Երևան, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, 2013:

39. Հակոբյան Թ., «Հայացք Արարատից. հայերը և թուրքերը», Երևան, «Անտարես», 2012, 485 էջ:

40. Հայաստան-Թուրքիա. Բաց խոսակցություն, «Վան Արյան» հրատ., Երևան, 2005:

